ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ԿԱՆԱԴԱ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետը, ընդառաջելով Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան և Արևմտյան թեմերի Առաջնորդներ Տ. Խաժակ և Տ. Վաչե արքեպիսկոպոսների, ինչպես նաև Կանադայի հայոց թեմի Առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոսի միացյալ հրավերին, Իր անդրանիկ հովվապետական այցելությունը տվեց վերոհիշյալ վիճակների խնամածության ներքո գտնվող և Մայր Հայրենիքի ու Ս. Էջմիածնի սիրով և կարոտով ապրող հայ հավատացյալ ժողովրդին սույն թվականի Հունվարի 10-ից Փետրվարի 20-ը :

*Այս այցելությամբ Վեհափառ Հայրապետը ավետարանական Ճշմարիտ Հովվի հոգածությամբ ցանկացավ ճանաչել և ճանաչվել իր զավակների կողմից, ինչպես նաև պատգամել, որ «**Սուրբ Էջմիածինը առաքելություն է, և յուրաքանչյուր հայ բարոյական պարտք ունի մասնակից ու հաղորդակից դառնալու այդ առաքելությանը**»:*

ՄԵԿՆՈՒՄ

Հունվարի 9-ին, երեքշաբթի, առավոտյան լուսաբացին, ժամը 05.30-ին, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբաններից կազմված թափորով առաջնորդվեց Մայր Տաճար և Իջման Սուրբ Սեղանի առջև կանոնական աղոթքից ու իր օրհնությունները միաբաններին բաշխելուց հետո ուղղորվեց «Զվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին բարի երթ մաղթելու էին եկել պրն. Շահեն Կարամանուկյանը՝ հանուն Հայաստանի Հանրապետության Նախագահի, ՀՀ-ում Միացյալ Նահանգների դեսպան պրն. Փիթր Թոմսոնը, ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան պրն. Դեյվիդ Մյուլլերը, Կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ պրն. Լազար Սուջյանը, Էջմիածնի քաղաքապետ պրն. Երվանդ Աղվանյանը, Առաջնորդ սրբազաններ և Մայր Աթոռի միաբաններ:

ԱՄՍՏԵՐԴԱՄՈՒՄ

Չորս ու կես ժամյա թռիչքից հետո օդանավը վայրէջք կատարեց Ամստերդամի «Օխիփոլ» օդանավակայանում, որտեղ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Արևմտյան Եվրոպայում Հայրապետական պատվիրակ, Ֆրանսիայի հայոց հոգևոր Առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նագգաշյանը, Ամստերդամի հայոց հոգևոր հովիվ Մանվել վրդ. Երկաթյանը, Ամստերդամի հայ համայնքի վարչության ատենապետ Պետրոս Սորիճյանը, հայ համայնքի անդամներ Գրիգոր Մոմճյանը, Հարություն Սիմոնյանը, Գևորգ Մեսրոպյանը, Բելգիայից ժամանած Տեր և Տիկին Հայկ և Շաքե Ասլանյանները, Անվերս քաղաքում ՀՀ պատվո հյուպատոսը, Բելգիայում ՀՀ դեսպանության ներկայացուցիչը, Հոլանդիայի պետության կողմից արտաքին գործերի գործակարը, Եվրոպայում «Հայկական Ավիաուղիներ» ընկերության ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանը, իր գործակիցներով, օդանավակայանի «ՏՀ» ընկերության պատասխանատու Բերնարդ թեն Բրոկը և այլ պաշտոնական անձինք:

Նրանց ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Օխիփոլ» օդանավակայանի պատվո հյուրասրահ, որտեղ մեկ ու կես ժամյա դադարի ընթացքում հարցազրույց ունեցավ Հոլանդիայում էկումենիկ շարժման գրասենյակի պատասխանատու, «Թրաու» թերթի թղթակից պրն. Քրեյնի հետ /հետագայում այդ տեսակցությունը լույս տեսավ «Թրաու» օրաթերթում՝ ամբողջական մեկ էջով/:

Ապա Վեհափառ Հայրապետը իր հայրական օրհնությունն ու հայրապետական պատգամը հղեց հոլանդահայությանը, ի մասնավորի ասելով. «Այսօր հայրենասիրություն բառին փոխարեն եկեք ընտրենք հայրենաշինություն բառը: Անոր մեջ պիտի տեսնենք մենք ճշմարիտ սերը, ինչպես Քրիստոս սիրեց և սերը ցույց տվեց ծառայելով: Ոչ թե սիրեց մտքով, սիրեց զգացումով, այլ կյանքով և գործով՝ նույնիսկ խաչով: Այս է հայրենասիրությունը՝ այն արժեցնենք հայրենաշինությամբ, եկեղեցասիրությունը՝ եկեղեցակառուցմամբ, որպեսզի պայծառանա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ուրկե 1700 տարիներ Աստված մեզի կնայի: Եթե կրցեր ենք տոկալ, այսօր ամեն հույս ունինք և ամեն վճռականություն, որ օրե օր դեպի բարձունք պիտի երթանք: Այս հավատքով կողջունեմ ձեզ»: Օդանավակայանում արտասանված Վեհափառ Հայրապետի խոսքը տեսերիզի միջոցով հաղորդվեց ողջ հոլանդահայությանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Ամստերդամի օդանավակայանում կարճատև դադարից հետո, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Գյուտ սրբազանի, բրիտանական «British Airways» ընկերության օդանավով մեկնեց Մեծ

Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոն:

Տեղական ժամանակով ժամը 14.00-ին օդանավը վայրէջք կատարեց Լոնդոնի «Հիթրո» օդանավակայանում, որտեղ Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Անգլիայի հայոց Առաջնորդ և Հայրապետական պատվիրակ Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյանը, Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան դոկտոր Արմեն Սարգսյանը, Քենթրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Ջոն Դենիս եպիսկոպոսը, Մեծ Բրիտանիայի համայնքների և խորհուրդների, Սուրբ Սարգիս և Սուրբ Պետրոս եկեղեցիների հոգաբարձուների և հոգևոր դասի ներկայացուցիչները:

Մեկօրյա դադարի և հանգստի համար Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Մայր Աթոռի բարերար լոնդոնաբնակ տիար Վաչե Մանուկյանի տանը:

ՀԱՑ ՀԱՄԱՑՆՔԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԻՆԵՐԻ ՀԵՏ

Օրվա երկրորդ կեսին, երեկոյան ժամը 18.30-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Եղիշե և Գյուտ սրբազանների, գավազանակիր Արտակ աբեղա Տիգրանյանի և Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Շնորհք քհն. Գասպարյանի և այլ ազգայինների, մուտք գործեց Սուրբ Սարգիս Մայր եկեղեցի, որտեղ միասնական աղոթքից հետո այցելեց եկեղեցուն կից «Հայ Տուն», ուր հավաքվել էին համայնքի կազմակերպության ներկայացուցիչները՝ Ամենայն Հայոց Հայրապետի խոսքին ունկընդիր և օրհնությանը հաղորդակից լինելու համար:

«Հայ Տան» ընդարձակ սրահում Վեհափառ Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց առաջնորդ Եղիշե արքեպիսկոպոսը: Որից հետո Վեհափառ Հայրապետը խորապես հուզված իր խոսքն ուղղեց ներկաներին:

Վեհափառը հայրական ջերմ սիրով ողջունելով ներկաներին, խոսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մայր Հայաստանի մասին և բացատրեց իրական կացությունը, պատասխանատվության հայեցակետով պարզելով թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը՝ մատնանշելով ու բարձրորեն գնահատելով մեր Եկեղեցու կատարած գործերը, ներկայացնելով կարիքները և խոսելով անելիքների մասին: Նորին Սրբությունը շեշտեց այն իրողությունը, որ մեր ժողովուրդը պետք է իրատես մոտեցումով կարևորի Եկեղեցու և պետության պատասխանատու անձերի տեսակետները ու պատկերացումները: Հարկ է ամեն ինչ տեսնել և ոչ թե տեղեկությունների կտորտանքներով դիտել ու չափել կացությունը: Միասնության և համագործակցության ժամանակն է մեր այս ժամանակը, եթե ցանկանում ենք Մայր Աթոռը տեսնել

գործունյա և Հայաստանի անկախ պետությունը ապահով, ամուր և հառաջագնաց:

Հաջորդ օրը, առավոտյան, տեղական ժամանակով ժամը 11. 00-ին, հրաժեշտ տալով լոնդոնաբնակ հայությանը, Վեհափառ Հայրապետը ուղղվեց դեպի Նոր Աշխարհ, տանելով Հայոց Նորացած և Նորացող Աշխարհի ավետիսն ու Սուրբ Էջմիածնի հարազանգ ղողանջների միջից լսվող մեր Տիրոջ և Հայաստանյայց հոգևոր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի հրավեր-կանչը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ

ԺԱՄԱՆՈՒՄ Ի ՆՅՈՒ ՅՈՐՔ

Հունվարի 10-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գավազանակիր հոգեշնորհ Տ. Արտակ արեղա Տիգրանյանի, ժամանեց Նյու Ռուարքի «Ինտերնեյշնլ» օդանավակայան (Նյու Ջերսի), որտեղ Վեհափառ Հորը դիմավորելու էին եկել ԱՄՆ Արևելյան և Արևմտյան թեմերի Առաջնորդներ Տ. Խաժակ և Տ. Վաչե արքեպիսկոպոսները, Կանադահայոց Առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոսը, Հյուսիսային Ամերիկայում Մեծի Տանն Կիլիկիո Արևելյան թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության լիազոր և մնայուն դեսպան Ալեքսանդր Արզումանյանը, Նյու Ջերսիի Ծերակուտականների Տան խոսնակ Չաք (Կարապետ) Հաթայանը, Վեհափառ Հայրապետի այցելության կազմակերպիչ Հանձնախմբի նախագահ պրն. Քարլ Բազարյանը, Ամերիկայի Հայկական Համագումարի նախագահ Պրն. Հրայր Հովնանյանը, Արևելյան թեմի

հոգևոր դասը, թեմական խորհրդի անդամները և այլ ազգայիններ, ինչպես նաև կառավարական ներկայացուցիչներ և թղթակիցներ:

Օդանավակայանում արդեն իսկ անակնկալ էր սպասվում. Նյու Յորքի «Սրբոց Նահատակաց» և Նյու Ջերսիի «Հովնանյան» ամենօրյա վարժարանների փոքրիկների երգչախումբը ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության քայլերգներով, Հայրապետական մաղթանքով և ծաղիկների մատուցմամբ ողջունեցին Վեհափառ Հայրապետին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ժամանման առթիվ օդանավակայանի պատասխանատուները մասնավոր կերպով տրամադրել էին պետական ներկայացուցիչների և բարձրաստիճան անձնավորությունների հատուկ ընդունելության սրահը:

Այստեղ Արևելյան թեմի Առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը բարիգալստյան խոսք ուղղեց Վեհափառին՝ մաղթելով, որ այս անդրանիկ այցելությունը Սուրբ Էջմիածնի ներկայության նոր շունչ ու հոգին փոխանցի Միացյալ Նահանգներում բնակություն հաստատած հայ հավատացյալներին և նպաստի Հայ Եկեղեցու միության զորացմանը: Ապա Վեհափառ Հայրապետը նախ աղոթքով հայցեց Աստծուց, որ օրհնի Միացյալ Նահանգներն ու Կանադան: Փառք ընծայեց Ամենակալ Աստծուն, որ առիթ շնորհեց ամերիկաբնակ իր ժողովրդի հետ լինելու: Ապա շնորհակալության և գնահատանքի խոսք ուղղեց օդանավակայանում հավաքված հոգևորականներին, ժողովրդին և հատկապես դպրոցական փոքրիկներին և երիտասարդներին:

Այնուհետև Նորին Սրբությունը առաջնորդվեց Նյու Յորքի առաջնակարգ «Ուոլդորֆ Աստորիա» հյուրանոց:

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, Ս. Վարդան Մայր Տաճարում տեղի ունեցավ «Հրաշափառի» արարողություն, որին մասնակցում էին հոծ թվով հայ և քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ (վարդապետներ և քահանա հայրեր), որոնցից շատերը հին բարեկամներն ու ծանոթներն էին Վեհափառ Հայրապետի: Աննկարագրելի էր հավատացյալների խանդավառությունն ու նրանց պարուրած ուրախությունը: Հակառակ անբարենպաստ եղանակին ու ձյունախառն մրրիկին, եկել էին իրենց հոգիները ջերմացնելու Վեհափառ Հայրապետի շնորհաբեր օրհնությամբ և Նրանով թանձրացող սուրբ և սրբացնող Էջմիածնի, ազատ և անկախ Հայրենիքի անմար ներշնչանքով:

Օտար Եկեղեցիներից ներկա էին Ռուս Օրթոդոքս, Բուլղար Օրթոդոքս, Ուկրաինական Օրթոդոքս, Անտիոքի Պատրիարքության Հույն, Ասորի, Ղպտի, Եթովպական, Արևելյան Եկեղեցիների, Հռոմեական Կաթոլիկ, Եպիսկոպոսական Եկեղեցիների ներկայացուցիչները: Հայ Ավետարանական Եկեղեցու կողմից ամերիկահայ Ավետարանչական ընկերակցության վարիչ-տնօրեն վեր. Մովսես Ջանբազյանը, Հայ Կաթոլիկ Եկեղեցիների Գերապայծառ Հովհաննես Դերձակյանը: Ներկա էր նաև Միացյալ Նահանգների Եկեղեցիների Ազգային Խորհրդի ընդհ. քարտուղար դոկտ. Ջոն Գամպլը՝ մի խումբ ներկայացուցիչներով:

Տպավորիչ և մեծաշուք թափորով Վեհափառ Հայրապետը մուտք գործեց Սուրբ Վարդան առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ բարիգալստյան ջերմ և հարգալից խոսք ասաց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Քույր Եկեղեցիների անունից՝ Հույն Օրթոդոքս Եկեղեցու Հյուսիսային և Հարավային Ամերիկաների Առաջնորդ Յակովոս արքեպիսկոպոսը ամենաջերմ խոսքերով ողջունեց իր երկար տարիների անձնական և մտերիմ բարեկամ Վեհափառ Հայրապետին, բարձրորեն գնահատեց Հայց. Եկեղեցու առաքելությունը, ջատագովեց գործակցությունը, էկումենական առողջ ոգին և հաջողություն մաղթեց Նորին Սրբության Հայրապետական առաքելությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՅԱԿՈՎՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Այնուհետև Վեհափառ Հայրապետը տվեց իր հայրական պատգամը: Իր խոսքի երկրորդ բաժնում Գարեգին Վեհափառը անգլերեն լեզվով շնորհակալություն հայտնեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին և նրանց անունից ողջունող Յակովոս արքեպիսկոպոսին,

որոնցից շատերի հետ նա հին և շարունակական բարեկամություն և համագործակցություն է ունեցել և այսօր որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս ողջունում է բոլորին քրիստոնեական սուրբ սիրով: Գոհունակությունը հայտնեց, որ իր Հովվապետական այցելությունը սկիզբ է առնում այս միասնական աղոթքով: Նա շեշտեց եկեղեցիների միջև եղբայրական հարաբերությունների և համագործակցության զարգացման անհրաժեշտությունը Աստուծո փառքի և մարդկանց խաղաղ գոյակցության համար, որով որպես Աստուծո գործակիցներ երկրում կիրականանա Տիրոջ հրաշափառ Ծննդյան ժամանակ հնչած հրեշտակների ավետիսը. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Անդրադառնալով 2001 թվականին Հայ Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությանը, բոլորին հրավիրեց մասնակցելու այդ պատմական իրադարձությանը, որովհետև այն ոչ միայն Հայ Եկեղեցու և ժողովրդի սեփականությունն է, այլև ամբողջ քրիստոնեական աշխարհի և քաղաքակիրթ մարդկության: Ավարտելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետը ներկաներին հրավիրեց «Տերունական աղոթքի»՝ ցանկություն հայտնելով, որ յուրաքանչյուրն իր լեզվով աղոթք ուղղի առ Բարձրյալն Աստված, որպես նչան և խորհուրդ «միություն այլազանության մեջ» սկզբունքին:

«Հրաշափառի» արարողությունը ավարտվեց Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նախկին և այժմ Սուրբ Վարդան առաջնորդանիստ եկեղեցու երգչախմբի ղեկավար Խորեն Մելխանեջյանի հեղինակած «Էջմիածնի Կանտատ» ստեղծագործությամբ, որ նվիրված է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին:

Այս հոգեպարար և սրտեր միացնող արարողությունից հետո, առաջնորդարանի «Հայկ և Ալիս Գավուքչյան» հանդիսասրահում տեղի ունեցավ ընդունելություն, հընթացս որի Վեհափառ Հայրապետը մտերմիկ մթնոլորտում ընդունեց հայ և օտար եկեղեցականների բարեմաղթություններն ու ուղերձները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Հինգշաբթի, հունվար 11-ի առավոտյան ժամերգությունից հետո, Առաջնորդարանի դահլիճում Վեհափառ Հայրապետն ընդունեց հայ հոգևորական դասին, որի ընթացքում պատասխանեց նրանց կողմից իրեն ուղղված հարցերին, որոնք վերաբերվում էին ժամանակի հուզող խնդիրներին և հովվական աշխատանքներին ու դրանց կազմակերպմանը: Մտերիմ հայրական խոսքով իր հատուկ պատգամը տվեց նրանց: Վեհափառն ապա շեշտեց այն կարևոր իրողությունը, ըստ որի Հայ Եկեղեցու ավանդությունը պետք է կենդանի ձևով փոխանցել

ժողովրդին արդիական մեթոդներով, և սակայն զգույշ լինել արդիապաշտության ծայրահեղություններից, որոնք ժամանակի մեջ կգան ու կանցնեն, և չպետք է թույլ տալ, որ դրանք խաթարեն մեր Եկեղեցու հարազատ ոգին և Ավանդությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՏ

Վեհափառ Հայրապետը Նյու Յորքի Նահանգապետի գրասենյակում հանդիպեց Նահանգապետ Տիար Ջորջ Փաթաքիին, որի ընթացքում Նահանգապետը, կարևորելով և բարձր գնահատելով հայության դերը ամերիկյան երկրում ընդհանրապես և Նյու Յորքի շրջանում մասնավորապես, ասաց. «Մենք ավելի քան 50.000-ի հասնող հզոր հայկական համայնք ունենք Նյու Յորքի շրջանում: Հայաստանի անկախության լուրը մեծապես ուրախություն պարգևեց մեզ և Ձեզ հաջողություն ենք մաղթում Ձեր դժվարին, պատասխանատու և կարևոր աշխատանքի մեջ»:

Ամենայն Հայոց Հայրապետը, շնորհակալություն հայտնելով այս հանդիպման, ինչպես նաև հայության հանդեպ տածած սիրո և համակրանքի համար, խոսեց իր՝ Նյու Յորքում գտնված տարիների մասին: Նա իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց Հայոց Առաջնորդարանին և նյույորքաբնակ հայության հանդեպ ցուցաբերվող հոգածության համար: Որպես հարգանքի առհավատչյա Նահանգապետ Փաթաքիին նվիրեց «Էջմիածնի Գանձեր» մեծադիր, գեղեցկազարդ հատորը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՈՒԲՐԳ ԳԱՐԱԿԵՈՉՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 11-ին Նյու Յորքի Առաջնորդարանում ընդունեց վերջին տասնամյակներին հայ ժողովրդի կարիքներին մեծ օժանդակություն ցույց տված Հաստատության Գարակյոզյան հաստատության ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ Տիկին Բերկրուհի Սվաճյանի:

Նրանք Վեհափառ Հայրապետին տեղեկացրին հաստատության գործունեության մասին, հատկապես վերջին տարիներին Հայաստանում կատարած աշխատանքները:

Վեհափառը, որ շատ մոտից էր ծանոթ և սիրով գործակցել էր Գարակյոզյան հաստատության հետ Լիբանանում, բարձրորեն գնահատեց նրանց գործը և հատկապես նշեց այն ծառայությունները, որոնց հասույթը ընծայվում է Հայաստանի մեր ժողովրդին ատամնաբուժական և այլ ծառայությունների միջոցով:

Նա իր հուզիչ մաղթանքներում հիշեց մեծանուն և ազնվասիրտ օրիորդ Լեյլա Գարակյոզյանին, որն իր 90-ամյա հասակում էլ դեռևս շարունակում էր իր կենդանի հետաքրքրությունը և նվիրումը ցուցաբերել Գարակյոզյան հաստատության երախտարժան գործի նկատմամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, հունվար 11-ին, Գարեգին Վեհափառ Հայրապետն Առաջնորդարանի դահլիճում ընդունեց պաշտոնական այցելությունը Հայ Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչների, որոնց շարքում նաև՝ Հայ Ավետարանական ընկերակցության ընդհանուր

վարիչ-տնօրեն Վեր. Մովսես Մանբազյանին:

Նա Վեհափառ Հայրապետին հայտնեց Հայ Ավետարանական Եկեղեցիների սերն ու հարգանքը և անդրադարձավ այն գործակցությանը, որը ցանկանում են ունենալ միշտ և առավել ևս զարգացնել Հայաստանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

Վեհափառ Հայրապետը նախ իր շնորհակալությունները և գնահատանքը հայտնեց Հայ Ավետարանական Եկեղեցիների հարգանքի այս արտահայտության համար, ապա երկարորեն խոսեց Հայաստանում Քրիստոնեական դաստիարակության գործի կենսական կարևորության մասին: Ծոշափեղի տվյալներով բացատրեց, թե ինչպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հաստատել է Քրիստոնեական դաստիարակության հատուկ կենտրոն, կազմակերպել կրոնի ուսուցիչների պատրաստության դասընթացները, որը նոր ուժ է հաղորդում Հոգևոր Ճեմարանի զարգացմանը և զարկ տալիս մանկական և ժողովրդային հրատարակություններին:

Հայ Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչները հավաստիացրեցին Վեհափառ Հորը, որ իրենք ևս զորավիգ կլինեն այդպիսի աստվածահաճո գործերին:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Հունվարի 11-ի կեսօրին Վեհափառ Հայրապետն իրեն ընկերակցող շքախմբով մեկնեց Նյու Յորքի Հույն Եկեղեցու առաջնորդարան: Մատուռում կատարվեց գոհաբանական պաշտամունք: Հունական և Հայկական շարականների երգեցողությունից հետո Յակովոս արքեպիսկոպոսը ջերմ խոսքերով ողջունեց Վեհափառ Հայրապետին: Նա շեշտեց Հայ և Հույն Եկեղեցիների և ժողովուրդների միջև գոյություն ունեցող սիրալիր փոխադարձ հասկացողության և գործակցության երևույթը:

Վեհափառ Հայրապետը պատասխան խոսքում բարձրորեն գնահատեց իր վաղեմի բարեկամին ու ամբողջ Ամերիկայում և աշխարհի միջեկեղեցական կյանքում հանրածանոթ ու ազդեցիկ դիրք գրաված Յակովոս արքեպիսկոպոսի ազնիվ և անկեղծ արտահայտությունները: Նա հավաստիացրեց Հույն Եկեղեցու բոլոր ներկայացուցիչներին, որ Մայր Աթոռը պիտի շարունակի առավել ուժ տալ միջեկեղեցական հարաբերություններին և սերտ գործակցություն հաստատել Հույն Ուղղափառ Եկեղեցու հետ:

Հունաց արքեպիսկոպոսարանում տեղի ունեցավ ճաշկերույթ-հանդիպում՝ մասնակցությամբ Արևելյան (Eastern) Եկեղեցիների ներկայացուցիչների: Ներկա էին Հույն, Ռուս, Ռումին, Սերբ, Բուլղար, Ուկրաին Ուղղափառ Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, Նյու Յորքի կաթոլիկ Եկեղեցու հոգևոր պետ կարդինալ Ջոն Օ Քոնորի

ներկայացուցիչը, Անգլիկան Եկեղեցու եպիսկոպոսներ, «Խղճմտանքի Կոչ» Հիմնարկությունից՝ Բաբքի Արթուր Շնայերը և այլ բարձրաստիճան հոգևորականներ:

Մաշկերույթի ընթացքում այս պատվո ընդունելության կազմակերպիչ Յակովոս արքեպիսկոպոսը, ողջունելով Վեհափառ Հայրապետին, ի մասնավորի ասաց. «Ձեր գործունեությունը հուզում է մեր սրտերն ու մտքերը: Մենք ուշի-ուշով հետևում էինք Ձեզ, երբ Դուք օգնության էիք շտապում Հայաստանի կարոտյալներին և երկրաշարժից աղետյալ երեխաներին ու ժողովրդին: Դուք Հայ Եկեղեցու կարող առաջնորդն եք այսօր»:

Վեհափառ Հայրապետը պատասխան խոսքում, շեշտելով տարբեր Եկեղեցիների միջև միության և համայնքային կապի կարևորությունը, հաստատեց. «Մենք կամ մեկ Եկեղեցի ենք, կա՛մ ընդհանրապես Եկեղեցի չենք»: Ապա, անդրադառնալով Հայաստանի և Հայ Եկեղեցու ներկա կացությանը ասաց. «Սա փորձարկման մի շրջան է մեզ համար: Մենք թանգարանին պատկանող Եկեղեցի չենք, և միջեկեղեցական ոգին մեզ համար մղիչ ուժ պիտի լինի անցյալի ընդարմացած կյանքից դուրս գալու և ընթանալու դեպի նոր ու հուսալից ապագա»:

Վերջում Յակովոս սրբազանը Վեհափառին նվիրեց հույն ականավոր նկարիչ Օմիրիոսի մեկ կտավը, որը խորհրդանշում էր հայ ժողովրդի ողբերգական պատմությունը. «Մեր երկու ժողովուրդները չափազանց տառապել են, և ամեն ինչից ավելի այս պարագան է ինձ միացնում ձեզ հետ», — ավելացրեց հույն արքեպիսկոպոսը:

Վեհափառ հայրապետը Նորին Սրբազնությանը որպես մնայուն հիշատակ նվիրեց Սուրբ Էջմիածնի արծաթյա քանդակը, որպես վկայություն հայ ժողովրդի բազմադարյան քրիստոնեական կյանքի և գործունեության:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 11-ին Վեհափառ Հայրապետը հանդիպեց Արևելյան (Oriental) *Ուղղափառ Եկեղեցիների հոգևորականների հետ: Հանդիպմանը ներկա էին՝ Ղպտի եկեղեցուց՝ Ֆարադ Աթանասիուս, Դավիթ Բեբաուի և Հակոբ Գալի վարդապետները, Ասորի Եկեղեցուց՝ Զաքարիա Նիկոլովոս արքեպիսկոպոսը և Զոն Մենո քորեպիսկոպոսը, Եթովպիայի Եկեղեցուց՝ Մաթթիաս արքեպիսկոպոսը՝ ընկերակցությամբ Նորիս Աբսալոմ վարդապետի, Մալաբար Եկեղեցուց՝ Մար Բարնաբաս եպիսկոպոսը՝ ընկերակցությամբ Զոնսոն Մադայի վարդապետի և այլոց: Հայ Եկեղեցուց ներկա էին Հյուսիսային Ամերիկայի արևելյան և արևմտյան թեմերի առաջնորդներ Տ. Խաժակ*

և Տ. Վաչե արքեպիսկոպոսները, Կանադայի հայոց առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոսը և այլ հոգևորականներ:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը շեշտեց դավանանքով և մեկ հաղորդությամբ իրար մոտ կանգնած Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հարաբերությունների առավել սերտացման և համագործակցության անհրաժեշտությունը ընդհանրական Եկեղեցու շահին ի նպաստ և վասն փառացն Աստուծո և մարդկության բարօրության համար: Այս տեսակցությունն անցավ շատ արտամոտ և անկեղծ երկխոսության մթնոլորտում, ուր քույր Եկեղեցիների ներկայացուցիչները հայտնեցին իրենց շնորհակալությունն ու զանազան տեսակետներ Եկեղեցիների ընդհանուր համագործակցության, և՛ այլազան խնդիրների շուրջ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ

Նույն օրը, երեկոյան, Եկեղեցիների Ազգային Խորհրդի Տնօրենների վերընտրված նախագահ Ջոն Գամպլլի բնակարանում տեղի ունեցավ մեծ ընդունելություն՝ ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի: Ներկա էին Եկեղեցիների Ազգային Խորհրդի ղեկավարները, Եկեղեցիների Ազգային Խորհրդի Տնօրենների Ժողովի փոխնախագահ Խաժակ Սրբազանը, Վաչե և Հովնան Սրբազանները, Ներսես քհն. Մեպեճյանը և Կարապետ քհն. Քոչաքյանը:

Ջոն Գամպլլը հատուկ ճառով անդրադարձավ այս այցելության միջեկեղեցական կարևորությանը, շերմությամբ հիշեց Ամերիկայի Եկեղեցիների Ազգային Խորհուրդի մեծ պատվիրակության այցելությունը Հայաստան և պատվիրակների ստացած խոր տպավորությունները:

Մեթոդիստ Եկեղեցուց Մատթեուս Եպիսկոպոսը իր հերթին, խոսք առնելով, անդրադարձավ իր երկար տարիների սերտ

բարեկամությանը թե՛ Գարեգին Ա-ի և թե՛ նրա նախորդի՝ երջանկահիշատակ Վազգեն Ա-ի հետ:

Անդրադառնալով Խորհրդի պատվիրակության տեղեկագրին՝ Հայաստանում մեր Եկեղեցու կարիքների կապակցությամբ, նա Վեհափառին հանձնեց 25.000 դոլլարի նվիրատվություն՝ հոգևոր Շեմարանի հանրակացարանի և առհասարակ կրթական կարիքների համար:

Եղան ըստ պատշաճի բաժակաճառեր: Այս բոլորի վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալության խոսք ասաց և սրտանց գնահատեց Ազգային Խորհրդի ցուցաբերած գործնական կեցվածքը: Նա ասաց, որ ինչ կատարվում է Հայաստանում՝ որպես քրիստոնեական ծառայություն, դա պատկանում է ամբողջ քրիստոնեությանը: Այժմ մեր նպատակն է ուժ տալ հոգևորականների պատրաստության գործին և քրիստոնեական քարոզչության տարածմանը: «Ձեզ նկատում ենք գործակիցներ և ոչ թե օժանդակողներ: Նոր շրջան է բացվել մեր Հայաստան աշխարհում: Այժմ մենք գտնվում ենք ստիպողական և անհետաձգելի պարտավորության առաջ՝ ոչինչ չխնայել, որպեսզի մեր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և իր բոլոր բարեկամներով, կարողանա նոր մղում տալ և պտղաբեր արդյունքներով պսակել իր Քրիստոսավանդ գործը հոգևոր վերարթնության այս շրջանում:

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

Ուրբաթ, հունվար 12-ի առավոտյան, Վեհափառ Հայրապետը հանդիպեց ամերիկահայ և ամերիկյան թերթերի թղթակիցների հետ, որի ընթացքում ընդհանուր գծերով ներկայացրեց իր այցելության նպատակները՝ անդրադառնալով, որ Հայաստանի ազատ և անկախ Հանրապետության հռչակումից հետո նոր դարաշրջան և գործունեության նոր դաշտ է բացվել թե՛ Հայ Եկեղեցու, թե՛ Հայաստանի Հանրապետության և թե՛ ընդհանրապես հայ ժողովրդի համար: Այսօր

յուրաքանչյուր հայ կարիք ունի կերպարանափոխության և նորոգության, որը ժամանակի հրամայականն ու թելադրանքն է, մանավանդ, որ ոչ հեռավոր ապագայում, 2001 թվականին, պիտի նշվի Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը, և Հայ Եկեղեցին այսօր լծվել է բոնատիրական ժամանակներում իր հայրերի հավատքից ինչ-որ չափով հեռացած ժողովրդի վերաքրիստոնեացման սրբազան ու ծանր գործին: Ապա Նորին Սրբությունը, պատասխանելով թղթակիցների բազմաթիվ ու բազմազան հարցերին, մանրամասն կերպով ներկայացրեց այս ուղղությամբ կատարվող և կատարվելիք աշխատանքների պատկերը:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ

Ժամը 12.30-ին Մանհաթընի «Union League Club»*-ի շքեղ սրահում, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, ճաշկերույթ տրվեց Եպիսկոպոսական Եկեղեցու կողմից: Ներկա էին Եպիսկոպոսական և Հայ Եկեղեցու ավելի քան քսան ներկայացուցիչներ: Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը հայ ժողովրդի երախտագիտությունը հայտնեց Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցուն, որ իր դռները լայնորեն բացեց այն հայերի առջև, որոնք թուրքական յաթաղանից մազապուրծ ազատվելով հասան այս երկրի ափերը:*

Ի բացակայություն եպիսկոպոսական Եկեղեցու Վերահսկիչ և առաջնորդ Էդմոնդ Բրաունինգի, ճառ արտասանեց Ռիչարդ եպիսկոպոս Գրին՝ մանրամասնաբար թվարկելով Գարեգին Վեհափառի ուսումնական իրագործումներն ու միջեկեղեցական գործունեությունը: Ակնարկելով աղանդավորական շարժումներին, որոնք, անարդար կերպով օգտվելով Հայաստանում տիրող դժվարին և ծանր պայմաններից, փորձում են ոտնձգություններ կատարել Հայ Եկեղեցուց ներս, ասաց, որ «Եպիսկոպոսական Եկեղեցին խոնարհությամբ և հիացումով փափագում է թիկունք կանգնել Հայ Առաքելական Եկեղեցուն և դատապարտում ու մերժում է նորահավատներ որսալու արտաքին քարոզիչների ծրագիրն ու գործունեությունը»: Շեշտելով ամուր բարեկամական ու համագործակցական հարաբերությունը Հայ և Եպիսկոպոսական Եկեղեցիների միջև, նա ավելացրեց. «Մենք աղոթում ենք, որ այս դերով Ձեր լուսավորյալ առաջնորդությունը բարգավաճի՝ աչքի առջև ունենալով Հայաստանի սկզբնական լուսավորությունը, որ տեղի ունեցավ ձեր առաջին Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ջանքերի շնորհիվ, և ում անունը Եպիսկոպոսական Եկեղեցու օրացույցում դասված է սրբոց շարքում»:

Իր պատասխան խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը,

շնորհակալություն հայտնելով այսքան ջերմ և սիրալիր ընդունելության համար, անդրադարձավ Եպիսկոպոսական Եկեղեցու ղեկավարների և հետևորդների ցուցաբերած մեծ աջակցությանը Հայաստանի վերջին շրջանի պատմության ընթացքում: Նորին Սրբությունը մասնավորապես հիշեց նախագահ Վուդրո Վիլսոնի կարևոր նպաստը, որ «խոսեցավ արդարության լեզուն, հայկական ցեղասպանության զոհերի համար»: Վեհափառ Հայրապետը ավելացրեց՝ ասելով, թե այս դարը սկսվեց հայերի արյան հեղմամբ, բայց «ան իր լրումին կհասնի Հայաստանի անկախությամբ և նոր Կաթողիկոսի ընտրությամբ»: Ապա թվեց Հայաստանում Հայ Եկեղեցու դիմագրաված բազմաթիվ դժվարությունները և հայ ժողովրդի կարիքները՝ «իրենց առօրյա կյանքում վերստին քրիստոնյա դառնալու դժվարին ընթացքում»: Խոսքը շարունակելով, Նորին Սրբությունը ասաց. «Մենք կոչված ենք դառնալու միության ուժ մեր ժողովրդի կյանքում: Մենք կարիքը ունինք միջեկեղեցական մեր բարեկամների: Մեր կողքին կանգնեք քրիստոնեական վերանորոգման և վերարժևորման այս շրջանում»:

Հանդիպման վերջում, ի նշան եղբայրական սիրո և հարգանքի, տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 12-ին, կեսօրից հետո, մինչև երեկո, Վեհափառ հայրապետը մի շարք հանդիպումներ ունեցավ Արևելյան թեմի Ազգային Առաջնորդարանի, Թեմական Խորհրդի և այլ թեմական կազմակերպությունների հետ:

1. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՕՖ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ

Ժամը 15.00-ին Վեհափառը ընդունեց ՀՕՖ-ի Կենտրոնական Մարմնի անդամներին, որոնց ընկերակցում էր վարիչ-տնօրեն Եզնիկ Պալյանը: Նրանք մանրամասնորեն զեկուցեցին Գյումրիի երկրաշարժից հետո թեմի կատարած օգնության մասին թե՛ սննդամթերքի առաքման, առողջապահության, տնտեսական զարգացման, գյուղատնտեսական աշխատանքների և թե՛ Հայաստանի զարգացմանը նպատակամղված տարբեր ծրագրերի բնագավառներում, որոնց հատկացված գումարը բազմամիլիոն դոլլարների է հասնում:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց ՀՕՖ-ի կատարած աշխատանքները: Նա ջերմորեն շնորհավորեց հայ համայնքի բոլոր այն անձանց և կազմակերպություններին, որոնք իրենց լայն մասնակցությունն էին բերել օժանդակության այս փրկավետ գործին: Ապա իր հատուկ գնահատանքն արտահայտեց այն կենսական աշխատանքի համար, որ տարվել է Միացյալ Նահանգների միջազգային օգնության և երկրների զարգացման աղբյուրներից կարևոր գումարներ

ապահովելու և դրանք Հայաստանի օգնությանը տրամադրելու գործին. «Սա ցույց է տալիս, թե մեր Առաջնորդարանը, գլխավորությամբ Առաջնորդ Սրբազանի և նվիրյալ ազգայինների, կարողացել է իր գործունեության որակով վստահությունը ջահել նման պետական կազմակերպությունների, որոնց նպատակներին համաձայն կարողացել են իրենց բազմարժեք ներդրումները կատարել Հայաստանի վերականգնման աշխատանքին»:

2. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄՆԱՑՈՒՆ ՖՈՆԴԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ այն մարմնի անդամների հետ, որը կոչված է մնայուն հիմնադրամ ապահովել և հանձանձել հօգուտ առաջնորդարանի եկեղեցական, կրթական, մշակութային գործունեության: Առաջնորդ Խաժակ Սրբազանը ներկայացրեց ատենապետ պրն. Ֆեսչյանին և վարիչ-տնօրեն պրն. Վ. Արզումանյանին, որոնք կատարված աշխատանքի մասին մանրամասն զեկուցեցին Վեհափառ Հայրապետին:

Գարեգին Ա Վեհափառը խորապես տպավորվեց նրանց կազմակերպչական, հետևողական աշխատանքից և պատվաբեր արդյունքից: «Դուք ձեր աշխատանքով տոկուն հիմքեր եք ընծայում մեր Առաջնորդարանին, որպեսզի նա ունենա նյութական լայն միջոցներ իր բազմանյուղ և բազմարդյուն գործունեությունը առաջ տանելու համար»: Ապա զվարթ շեշտով ավելացրեց. «Որքան առավել ևս գոհ պիտի մնայի, եթե ձեր անձնվեր աշխատանքների մեջ նկատի ունենայիք նաև ձեր Մայր Աթոռը ի Սուրբ Էջմիածին: Գնահատում եմ ձեր սերը, նվիրումը և օժանդակությունը Մայր Աթոռին: Ցանկանում եմ, որ առավել ևս ծաղկի մեր բոլորի ներդաշնակ ջանքերով Մայր Աթոռո ծառայությունը, մասնավորաբար հայաստանյան մեր այս օրերում»:

3. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԵՏ

Ժամը 17.00-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց հոգևորական և աշխարհական անդամների այն հանձնախմբին, որ տարիներից ի վեր խոսակցություններ է վարում Ամերիկայում 1957 թվականից այս կողմ Կիլիկյան Աթոռի իշխանության տակ գտնվող թեմի համապատասխան հանձնախմբի հետ:

Բոլորի տեսակետները լսելուց հետո, Վեհափառն ասաց, որ առաջիկայում պետք է զորացնել խոսակցության ընթացքը, լինել փոխադարձորեն լայնախոհ, սրտաբաց և առաջնորդվել մեր ժողովրդի՝ թե՛ ամերիկահայության և թե՛ ընդհանուր Հայ Եկեղեցու բարձրագույն շահերով: Ժամանակները փոխվել են, նոր պայմաններ են ստեղծվել մեր ազգի, Եկեղեցու և Հայրենիքի համար, հետևաբար անհրաժեշտ է, որ դեպի թեմական միություն միտված ընթացքը ուժեղանա Մայր Աթոռի վերին իշխանության ներքո և միշտ անխտրական ոգով Կիլիկյան Աթոռի նկատմամբ:

4. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Վերջին հանդիպումը տեղի ունեցավ թեմական խորհրդի հետ, որի անդամներից ոմանք արդեն մասնակցել էին միության հանձնախմբի հանդիպմանը:

Առաջնորդ Խաժակ Սրբազանը ընդհանուր գծերով ներկայացրեց թեմական խորհրդի կազմը, գործունեությունը և կատարած աշխատանքները: Ժողովականները ազատորեն արտահայտվեցին թեմին հուզող հարցերի մասին:

Ապա Վեհափառը գնահատեց նրանց զոհողության ոգին և հետևողական աշխատանքը: Իր հիացումը հայտնեց Առաջնորդարանում ստեղծված բազմաթիվ բաժանմունքների և նրանց կազմակերպվածության համար, շնորհիվ որի ծավալվել է ընդարձակ մի գործունեություն վարչական, հոգևոր-կրոնական, կրթական-դաստիարակչական, գիտական-մշակութային, ընկերային և այլ տարածքների մեջ:

Այս հանդիպումների ավարտին տեղի ունեցավ մի ընդունելություն, որին մասնակցեցին նաև Հովվապետական այցելության կազմակերպիչ հանձնախմբի անդամները:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԿԱՐԴԻՆԱԼԻ ՀԵՏ

***Շաբաթ, հունվար 13-ի** առավոտյան, Նյու Յորքի Կաթոլիկ Եկեղեցու պետ Կարդինալ Ջոն Օ Քոնորը իր բնակարանում ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետին և պատվեց նախաճաշով: Մթնոլորտը հեռու էր պաշտոնական լինելուց, որովհետև երկու հին բարեկամներ էին հանդիպել իրար: Այս ջերմությունը շարունակվեց շուրջ երկու*

ժամ տևած հանդիպման ողջ ընթացքում, որի ժամանակ քննարկվեցին զանազան նյութեր, ինչպես Հայ Եկեղեցու կացությունը Հայաստանում, քրիստոնեական Եկեղեցիներին հուզող խնդիրներն ու դժվարությունները նախկին Խորհրդային Միության հանրապետություններում և ընդհանրապես աշխարհում և կրոնական, ընկերային ու քաղաքական հոսանքները Միջին Արևելքում:

Նախաճաշին ներկա էին Կաթոլիկ Եկեղեցու մի շարք բարձրաստիճան հոգևորականներ ու աշխարհականներ, իսկ Հայ Եկեղեցուց Վեհափառի պատվիրակության մաս էին կազմում Խաժակ, Վաչե, Հովնան Սրբազանները, Վեհափառ Հայրապետի գավազանակիր Արտակ աբեղա Տիգրանյանը և Կարապետ քհն. Քոչաքյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Սուրբ Վարդան Մայր եկեղեցում հանդիպեց շուրջ 2000 մանուկների և պատանիների հետ: Այս հանդիպումը մասնավոր նշանակություն ուներ, քանի որ Ամենայն Հայոց Հայրապետը Միացյալ Նահանգներ ժամանելու առաջին իսկ պահին հայտարարեց, որ Սուրբ Էջմիածնից դուրս այս առաջին հանդիպումը ձոնում է երիտասարդությանը՝ ի նշանավորումն այն բանի, որ Հյուսիսային Ամերիկայի երկու թեմերը այս տարին հռչակել էին «Երիտասարդության տարի»:

Հատուկ արարողությունից և հանդիսությունից հետո, բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ Խաժակ սրբազանը. «Վեհափառ Հայրապետը գալիս է Անկախ Հայաստանից, որտեղ ձեզ նման բազմաթիվ պատանիներ կան: Ես ուրախ եմ, որ դուք միայն դիտողներ չեք, այլ նաև մասնակցողներ»՝ խոսքը ուղղելով մոտ 150 հոգուց կազմված երգչախմբին, որը ղեկավարում էր Մամիկոն աբեղա Քիլեճյանը:

Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեցին Սուրբ Թովմաս եկեղեցու (Նյու Ջերսի) Քիրիկյան Հայ դպրոցի աշակերտուհի Թալին Պապայանը՝ հայերենով, և Սրբոց Նահատակաց եկեղեցու

(Նյու Յորք) Հայ դպրոցի աշակերտուհի Մելիսա Բրուսթերը՝ անգլերենով:

Հայրենի հողից ու ջրից կտրված այս հայ մանուկները սրտի ամբողջ տարողությամբ և մաքրությամբ, անկեղծորեն արտահայտում էին իրենց սերը հանդեպ իրենց Հայրիկի, ում հպվելով և խոսք ուղղելով, հոգու սավառնումով զգում էին ներկայությունը Սուրբ Էջմիածին մայրական օրրանի և Արարատի հայրական ու հսկող տարածված երկբազուկների, որոնց գրկի մեջ կամաց-կամաց վեր է հառնում բոնության շղթաները թոթափած Ազատ և Անկախ Հայաստանը:

Մեծ էր հուզումը և Հայոց Հայրապետի, որ այս փոքրիկների հայացքի մեջ կարոտի և պանդխտության դրոշմը տեսնելով հանդերձ, նշմարում էր նաև ապագայի «հույսի, լույսի և նոր Հայրենիքի» տեսլականը. «Ձեր գեղեցիկ դեմքերը կտեսնեմ լուսավորված, երկնքի պայծառ արևու լույսով և ձեր ներկայությամբ ինձ ավելի թարմացած ու երիտասարդացած կզգամ: Մենք Հայաստանի զավակներն ենք՝ մեր հայացքը ուղղած ապագային և ոչ միայն անցյալին: Երբ ես ձեր աչքերուն կնայիմ, կտեսնեմ պայծառ ապագան մեր Եկեղեցվո, ժողովուրդին և Հայրենիքին: Դուք այն պատուհանն եք, որուն մեջեն կտեսնենք, ինչ որ պիտի գա: Երբ ես մանուկ էի ձեզի նման, բախտավոր չէի, որովհետև չունեինք ազատ և անկախ Հայաստան: Սակայն իմ մայրս միշտ անկախության նվիրված երգեր կերգեր: Այսօր վերակենդանացած եմ, որովհետև կտեսնեմ, որ մեր Հայրենիքը կվերստանա իր տիպական ինքնությունը: Մենք բախտավոր ենք, որ կտեսնենք այս երազին իրականացումը, սակայն մենք պարտականություններ ու պատասխանատվություններ ունինք գործացնելու համար Հայաստանն ու Էջմիածինը: ԱՅՍ ՁԵՐ ԳՈՐԾՆ

Է՝ ԿԱՌՈՒՑԵԼ ԱՊԱԳԱՆ»:

Արարողությունից հետո յուրաքանչյուր պատանի մոտեցավ Ամենայն Հայոց Հայրապետին և ստացավ նրա օրհնությունը և Էջմիածնից բերված փոքրիկ խաչեր: Տասնմեկ տարեկան Վարդան Էսայանը, որ մեծապես ուրախացած էր Նորին Սրբության հետ ունեցած հանդիպումից, փսփսաց. «Ինչ սքանչելի է»: Իսկ առաջնորդարանի Խրիմյան վարժարանի սանուհի 17-ամյա Թամար Այդընը, թարգմանը լինելով երիտասարդների մտածումների ու զգացումների, ասաց. «Չէի սպասեր, որ Կաթողիկոսը այնքան մոտ կգգա պատանիներում, որոնք իրապես սիրեցին զինք և հավատացին, որ ան պիտի նպաստե Եկեղեցվո հառաջդիմության: Եվ միշտ կմտածեի, թե ի՞նչ պիտի պատահի Եկեղեցվո, այժմ գիտենք, որ ազդու ջանքեր կկատարվին մեր Եկեղեցվո ապագային համար: ՎԵՀԱՓԱՌԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՐԴՆ Է»:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Ընդառաջելով Հյուսիսային Ամերիկայում Կիլիկյան Աթոռի հովանավորությունը վայելող թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի հրավերին, ընկերակցությամբ առաջնորդ սրբազանների, ինչպես նաև հայրապետական շքախմբի մաս կազմող այլ հոգևորականների, Վեհափառ Հայրապետը այցելեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի:

Հակառակ այդ օրերին Նյու Յորքի ձյունապատ ճանապարհներին ստեղծված երթևեկության դժվարությանը, հավատացյալների խուռներամ բազմությունը ամբողջությամբ լցրել էր Մայր եկեղեցին:

Ներկա էին ՄԱԿ-ում Լիբանանի ու Սիրիայի դեսպանները՝ պպ. Մուբարաքն ու Մուհամադ Հալլաքը, Լիբանանի խորհրդարանի նախկին հայ երեսփոխան և այժմ Մեծի Տանն Կիլիկիո Ազգային Կենտրոնական Վարչության անդամ պ. Անդրե Թաբուրյանը և այլ հոգևորական ու աշխարհիկ անդամներ:

Եկեղեցում տեղի ունեցած կանոնական աղոթքից հետո, առաջնորդ Մեսրոպ սրբազանը հանուն Կիլիկիո Աթոռի Գահակալ Արամ Ա Կաթողիկոսի բարի-գալստյան խոսք ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հատկապես անդրադարձավ նրա ավելի քան քառասնամյա ծառայությանն ու վաստակին՝ Անթիլիասի դպրեվանքից մինչև պատմական մեծ նշանակություն ունեցող այն քայլը, որով Վեհափառ Հայրապետը բարձրացավ Ամենայն Հայոց Հայրապետական գահին՝ նոր դարաշրջան բացելու համար հայրենաբնակ մեր ժողովրդի հոգևոր կյանքի և առհասարակ Հայ Եկեղեցու ու պատմության մեջ: Ապա Սրբազան Հայրը հրավիրեց Նորին Սրբությանը՝ տալու իր հայրական պատգամը:

Վեհափառը հուզումով ողջունեց ներկա հավատացյալներին՝ հատկապես անդրադառնալով այն օրերին, երբ ինքը, որպես Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ կամ որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, նույն եկեղեցու խորանից հանախ էր իր հայրական խոսքն ուղղել հավատացյալ ժողովրդին: Այժմ արդեն որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս նույն հարազատությունն է զգում, և ոչինչ չի փոխվել, և շեշտեց Հայ Եկեղեցու միասնականության և փոխադարձ սիրո հրամայականը:

Ժողովուրդը բարձր տրամադրությամբ լցված զգաց և տեսավ, որ միասնականության ապրումը խորին ապրումն է Վեհափառ Հայրապետի և հաղորդվեց այդ ապրումով: Արարողության ավարտին Մեսրոպ Սրբազանի առաջարկով Վեհափառը Կիլիկյան իշխանի և իշխանուհու շքանշանով պատվեց ազնվափայլ Տեր և Տիկին Հարոյդ և Ժոզեֆինա Գյուլամերյաններին: Այդ շքանշանի կոնդակը նա տվել էր, երբ դեռևս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս էր, բայց առիթը չէր ներկայացել շքանշանները հանձնելու հարգելի բարերարներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետը Նյու Յորքի «Մերիոթ» հյուրանոցում հանդիպեց հայ երիտասարդների և պատանիների հետ: Շուրջ երկու ժամ տևած զրույցի ժամանակ Վեհափառ Հայրապետը նախ խոսեց այսօրվա աշխարհում, այս չափազանց մեքենայացված ժամանակաշրջանում երիտասարդությանը,՝ մանավանդ հայ երիտասարդությանը սպառնացող վտանգների մասին թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում, որ տանում է դեպի անտարբերու-

թյուն հայրենական արժեքների և ժառանգության նկատմամբ: Ապա հայրական հոգածությամբ համապարփակ և ամբողջական կերպով պատասխանեց այսօրվա երիտասարդությանը հուզող և հետաքրքրող հարցերին:

Նյու Յորք այցելության ամենանշանակալից պահերից մեկը եղավ սա, որովհետև շուրջ 400 երիտասարդներ և երիտասարդուհիներ առիթը ունեցան ազատորեն իրենց հարցումներն ուղղելու իրենց Հոգևոր Հորը և ստանալու նրա Հայրական հորդորներն ու ցուցումները, որոնք երկար տարիների փորձից էին ծնված:

Վեհափառը խոսեց երիտասարդությանը հասկանալի ոճով, մտերմական շեշտով և սրտաբաց անկեղծությամբ: Նրա գլխավոր պատգամն այն էր, որ երիտասարդությունը իր կյանքը պետք է ապրի պատասխանատվության և պարտավորության սկզբունքներով:

Երկրորդ՝ թե երիտասարդությունը չի կարող վավերական լինել, եթե չունենա ձգտում և նպատակակետ կամ արդար փառասիրություն ավելի բարձր տեղ հասնելու վճռական առաջադրությամբ:

Վերջում տրված հյուրասիրությունը առավել անկեղծություն և անմիջականություն հաղորդեց այս հանդիպմանը:

ՀՈՒՋԻՉ ՀԱՎԱՔՈՒԹ՝ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Երեկոյան Սուրբ Վարդան Մայր եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր հոգեհանգստյան պաշտոն Սումգայիթի և Բաքվի ցեղասպանության ժամանակ զոհված զոհերի հոգիների համար, որը նախագահում էր Ամենայն Հայոց Հայրապետը: Արարողությունը, համաժամանակյա թարգմանությամբ ներկայացվում էր նաև ռուսերեն: Հոգեհանգստյան պաշտոնին ներկա էին հարյուրավոր գաղթականներ,

որոնցից շատերը ընտանիքի անդամ կամ բարեկամ էին կորցրել 1988 թվականի այդ սոսկալի օրերին:

Վեհափառ Հայրապետը, զուգահեռ անցկացնելով այս և Մեծ եղեռնի միջև, ասաց. «Կուզեմ գիտնաք, թե անոնք, որ հոս են, մեռնելու մասին չեն մտածեր: Անշուշտ, մենք բոլորս ալ օր մը պիտի մեռնինք: Բայց ինչ որ կարևոր է՝ կյանքն է. Աստուծո պարգևը: Մենք չենք կրնար մահացած անձի մը կյանք տալ, բայց կրնանք ապրիլ այնպես, որ կյանքը իմաստ ու արժեք ունենա և նյութական գոյության հետ չփչանա: Հայոց պատմության մեջ շատ հայեր մեռած են, բայց կապրին հայոց լեզուն, մշակույթը, կրոնքը, պատմությունը և հայ ազգը:

ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՍՈՒՄԳԱՅԻԹՑԻՆԵՐ

Ասոնք հավիտենական են: Ապրեցեք այնպես, որ երբ մահը գա, միայն ձեր մարմինը առնե-տանի և ոչ թե ձեր հոգին»: Վերջացնելով իր խոսքը, Նորին Սրբությունը պատգամեց. «Աշխատեցեք ձեր ճակտի

քրտինքին ապավինելով և ոչ թե ուրիշներե օգնություն խնդրելով: Ձեր հարաբերությունը պահեցեք ձեր Եկեղեցիին և Հայաստանի հետ և հայերեն սորվեցեք: Ուր կամք կա, այնտեղ ճամփա կա. սպասիբո /շնորհակալություն)»:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԴՊՐԵՎԱՆՔ

***Կիրակի, հունվար 14-ի** առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց Նյու Ռոշելում գտնվող Սուրբ Ներսես դպրեվանք, որը կառավարվում է ամերիկյան երեք թեմերի միասնական ջանքերով և միացյալ հանձնախմբով:*

Լուսահոգի Տիրան արքեպիսկոպոսի գաղափարի և ջանքի ծնունդն էր այս դպրեվանքը, որտեղ այժմ ուսանողներ են պատրաստվում Միացյալ Նահանգների և Կանադայի տարածքում հոգևորական ծառայություն մատուցելու համար:

Շենքը ենթարկված էր հիմնական վերանորոգության, հատուկ կերպով կազմակերպված աշխատանքով՝ գլխավորությամբ դոկտ. և տիկ. Ռաֆի Հովհաննիսյանների: Ամբողջությամբ գեղեցկորեն շենքի մեջ կատարվեց բացումը Տիրան արքեպիսկոպոսի անունով մկրտված գրադարանի: Խաժակ Սրբազանն ու Տեր Առաքել Ալչալյանը Վեհափառին ներկայացրեցին կատարված աշխատանքը:

Վեհափառը, իր հոգևոր կյանքի մեծագույն մասով կապված

լինելով դպրեվանքին, խոսեց Սուրբ Ներսես դպրեվանքին տրված կարևորության մասին: Նա ասաց, որ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը պետք է առավել ճանաչվի և գնահատվի, որովհետև նա մեր ներկա ժամանակների ամենագիտնական և եկեղեցապաշտ հոգևորականներից մեկն էր, որ իր հատուկ դրոշմն է դրել մի ամբողջ հոգևորական սերնդի վրա: Առանց դպրեվանքի որևէ Եկեղեցի չի կարող իրեն վերապահված առաքելությունը սպասված արդյունավետությամբ ու օգտավետությամբ կատարել: Ահա այս հասկացողությամբ նա բարձրորեն գնահատեց դպրեվանքի համար գործողներին, բարերարներին, դասախոսներին, աշակերտներին և հովանավորներին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՍԵՅՆԹ ՋՈՆ ԴԸ ԴԻՎԱՅՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հետմիջօրեին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ շուրջ երկու տասնյակ Հայ և Եպիսկոպոսական Եկեղեցիների հոգևորականների, «Հրաշափառի» հոգեպարար երգեցողությամբ, մուտք գործեց Նյու Յորքի հռչակավոր Սենթ Ջոն Դը Դիվայն Մայր տաճար, ուր Հայրապետական Սուրբ պատարագ մատուցեց: Սա կաթողիկոսական ընտրությունից հետո առաջին հայրապետական Պատարագն էր, որ Վեհափառ Հայրապետը մատուցեց Հայրենիքից դուրս:

Ավելի քան 3000 հավատացյալներ էին ներկա Միացյալ Նահանգների ամենաընդարձակ Մայր տաճարում, որ հայտնի է իր մարմարյա սյուներով, գեղեցկազարդ փայտյա քանդակներով և լուսավոր ու գունավոր պատուհաններով:

Հընթացս Սուրբ Պատարագի Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի Առաջնորդ Խաժակ արքեպս. Պարսամյանը ներկայացրեց Ռիչարդ Գրին եպիսկոպոսին, որն ասաց, թե Գարեգին Ա-ի ընտրությունը «մի մեծ հույս է Հայաստանի համար», և ապա, խոսքը ուղղելով Նորին Սրբությանը, ավելացրեց. «Այս Մայր տաճարում մենք միշտ պատվո աթոռ ունենք, և Դուք միշտ տեղ պիտի ունենաք մեր սրտերում»:

Այնուհետև հավատացյալ բազմությանը քարոզեց Վեհափառ Հայրապետը, շեշտելով ճշմարիտ սիրո արժեքն ու կարևորությունը: Վեհափառը ի մասնավորի ասաց. «Ճշմարիտ սերն ունի երեք միաձուլված աղբյուրներ՝ մաքուր սիրտ, մտքի բարեկամեցողություն և անկեղծ հավատք: Չկա կրոնք մը, որ սիրո մասին չի խոսիր, սակայն միայն քրիստոնեության մեջ է, որ խաչը կա՝ շոշափելի մարմնավորությունը սիրո: Ես ձեզի կու գամ որպես ձայնը Ս. Էշմիածնի, որպես ձայնը ազատ ու անկախ երկրի մը, որպես ձայնը Հայաստանի ժողովուրդին: Այս ձայնը հստակ է: Մենք պիտի մնանք ա՛յն, ինչ որ էինք նախապես, երբ ազատությունն ու անկախությունը երազ էին: Մենք այլևս այն ժողովուրդը չենք, որ անցյալին էինք՝ բաժանյալ և անհամերաշխ: Եթե մենք մեկ սիրտ ունինք, մեկ հավատք, մեկ հոգի, թող ըլլա՛նք մեկ մարմին: Իմ կարելիս պիտի ընեմ այդ միությունը հառաջ բերելու համար: Թող ձեր սերը լեցնե իմ սիրտս: Թող ես ինձի հետ տանիմ ձեր այդ սերը»:

ՊԱՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ

Երեկոյան ժամը 20.00-ին Նյու Յորքի «Ուոլդորֆ Աստորիա» հյուրանոցում, որտեղ հանգրվանում էր Վեհափառ Հայրապետը, տեղի ունեցավ ճաշկերույթ՝ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի: Այս հանդիսությունը գագաթնակետն էր Նորին Սրբության՝ Նյու Յորք վեցօրյա այցելության: Ավելի քան 1400 հոգի ներկա էր հյուրանոցի շքեղ «Grand Ballroom» դահլիճում: Ժողովրդի ցանկությունը, հանդիպել և հաղորդակցվել Վեհափառ Հայրապետի հետ, շատ մեծ էր և անընկարագրելի, որի վկայությունն է սպառված հրավիրատոմսերից հետո կազմակերպող հանձնախմբի կողմից հարյուրավոր դիմումների մերժումը՝ տեղ և հնարավորություն չլինելու պատճառով:

Նորին Սրբության բացման աղոթքից հետո, հանդիսավար Կարո Կարիպյանը ներկայացրեց ճաշկերույթի ատենապետուհի Տիկ. Շաքե Մխչյանին, որ իր բարիգալստյան խոսքում, դառնալով ողջ ամերիկահայության թարգմանը, մեծ հուզումով ասաց. «Հարյուրավոր սրտեր կսպասեն Ձեր օրհնությանը, Վեհափառ Տեր, որի կարիքը մենք ունենք ամեն բանե ավելի»:



Ապա, խոսք առնելով, Հայրապետական Այցելության Կենտրոնական Հանձնախմբի ատենապետ և Հայկական Համագումարի Տնօրենների Ժողովի ատենապետ Կարլ Բազարյանն ասաց, որ «Ազատ ու Անկախ Հայաստանի հիմնադրությամբ, արդեն ժամանակն է, որ Հայ Եկեղեցին ևս իր պատյանեն դուրս ելլե, վերահաստատե Եկեղեցվո ավանդությունները և առաջնորդություն տա: Մենք կբաժնենք Ձեր հանձնառությունները Հայաստանի հանդեպ»: Սրտի խոսքեր ասացին նաև փաստաբան Գարեգին Արզումանյանը, Առաջնորդարանի Թեմական Խորհրդի ատենապետ, դատավոր Վինսենթ Քյուրահյանը և այլոք:

Այնուհետև ներկաները դիտեցին Վեհափառ Հայրապետի ընտրության և գահակալության առթիվ նկարահանված ութ րոպե տևող ժապավենի ցուցադրությունը և մեկ անգամ ևս անդրադարձան ու վերհիշեցին այդ պատմական և բեկումնային իրադարձությունը:

«Գ. Հովնանյան Ընկերության» նախագահ Արա Հովնանյանը, որը որպես օրվա գլխավոր խոսնակ ներկայացրեց «եզական հեռանկար մը»: Կենտրոնանալով այն բոլոր հարցերի վրա, որոնց այսօր դեմ-հանդիման է գտնվում ամերիկահայ երիտասարդությունը, խոսեց «Ամերիկայի Մագդրնըլդսի սերունդին մասին՝ պատրաստ կերակուրի արագ սպասարկություն, մեքենաների միջոցավ դրամատան գործառնություն, ապրանքներու զանազան տեսակներ ներկայացնող գիրքերե ապսպրանք՝ նամակատան միջոցավ, ինքնաշարժերու հեռաձայններ և «ֆաքս»ի գործիքներ: Այսօրվան սերունդը աճա-

պարանքի մեջ է: Ժամանակն ու հանգստավետությունը ճակատագրականորեն կարևոր են, բայց կարիքը կա նաև մարդկային հոգեկան արժեքների մշակմանը մեր կյանքում, և դա Եկեղեցու դերն է»:

Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի Առաջնորդ Խաժակ Սրբազանը, ներկայացնելով Գարեգին Վեհափառին, ասաց. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Էջմիածինը չհաստատեց տեղական գույն մը տալու համար հայկական հողին... Էջմիածնի իրական և բնական ճակատագիրը միշտ եղած է՝ ըլլալ կեդրոնը ոչ միայն Հայաստանի, այլև երկրի վրա տարածված Հիսուս Քրիստոսի կրոնքին հայ ժողովրդի կյանքում: Էջմիածնի գործունեության դաշտը համահայկական է: Ան պետք է ուղղություն տա Եկեղեցվո, հեղինակությամբ լուծե օրվան հարցերը, ուսուցումներ ջամբե մարդու և Աստուծո հավիտենական հարցումներու մասին և առաջնորդություն տա յուրաքանչյուր հայ հոգիի: Այս կենսական դերը լավագույնս պիտի կատարե արտակարգ կարողություն, խորունկ հոգևոր և բարոյական հատկություններ ունեցող առաջնորդ մը, որ զորավոր իմացականությամբ և արժանիքներով կարենա հաղորդակցիլ թե՛ համեստին և թե՛ իմաստունին հետ՝ առաջնորդ մը Տ. Տ. Գարեգին Առաջինի իմացական բարձր կարողությամբ: Եվ որպեսզի Կաթողիկոսը կարենա իր պաշտոնը կատարել, ան կարիքը պիտի ունենա բանի մը, որ միայն իր հոտը կրնա տալ իրեն՝ միասնականությունը իր բոլոր զավակներու»:

Այս բոլոր խոսքերից և բարեմաղթանքներից հետո, ներկաներին իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ նախ շնորհակալություն հայտնելով Հայրապետին վայել այսքան բարձր ընդունելության և ջերմության համար, ապա շեշտելով, որ այսօրվա ազատ և անկախ Մայր Հայրենիքում և վերանորոգվող Սուրբ Էջմիածնի համար յուրաքանչյուր հայ մարդ դեր և պարտականություն ունի կատարելիք: Ապա գնահատեց թեմից ներս կատարված և կատարվող աշխատանքները՝ մաղթելով և խրախուսելով նոր եռանդով ու առավել նվիրումով իրագործել դրանք:

Վեհափառի խոսքից հետո Առաջնորդ Խաժակ սրբազանը հայտարարեց հետևյալ նվիրատվությունները. Տեր և Տիկին Գևորգ և Սիրվարդ Հովնանյան՝ 200.000 դոլար Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերանորոգության համար, Դոկտ. և Տիկին. Հարություն և Շաքե Մխչյան՝ 100.000 դոլար, Տեր և Տիկին Հրայր և Աննա Հովնանյան՝ 100.000 դոլար, Ամերիկայի Հայոց արևելյան թեմի առաջնորդարան՝ 30.000 դոլար:

Այս սիրո ճաշով էլ ավարտվեց Վեհափառ Հայրապետի այցելությունը Նյու Յորքի շրջան, ուր բնակություն հաստատած հայորդիները զգացին Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի հայրական ջերմ սերն ու գնահատանքը՝ որպես մխիթարություն

ստանալով նրա օրհնություններն ու սրտագին հորդորները Եկեղեցու և Հայրենիքի վերաշինության Աստվածահաճո գործում և առաքելության մեջ:

ՆԱԽԱՃԱՇ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄՈՏ

Երկուշաբթի, հունվար 15-ին, *Նյու Յորքից մեկնելուց առաջ, Վեհափառ Հայրապետը նախաճաշի հյուրը եղավ քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանիի՝ նրա բնակարան «Կրեյս Մենշը»ում: Քաղաքապետի և իր Տիկնոջ՝ Ջուլիանիի կազմակերպած այս հանդիպմանը ներկա էին Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, Բաբի Արթուր Շնայերը, Ռուս Ուղղափառ Եկեղեցուց՝ Հայր Լեոնիդ Կիշկովսկին, և մոտ 100 հայ և ամերիկացի հրավիրյալներ:*

Քաղաքապետ Ջուլիանին իր բարիգալստյան խոսքում ասաց. «Պատշաճ էր, որ Դոկտ. Մարտին Լութեր Քինգ Կրտսերի ծննդյան հիշատակության օրը միության, համագործակցության և հարգանքի ոգով մենք հավաքվեինք այստեղ: Մենք պատվված ենք մեզ զգում՝ մեր քաղաքում ընդունելով Նորին Սրբությանը: Հայ ժողովուրդը աշխարհին ցույց է տվել, որ քաջության և վերապրելու կամքով տոգորված մի ժողովուրդ է: Ընտանիքի և Հայրենիքի, մշակույթի և ժառանգության, հավատքի և Հայ Եկեղեցվո սկզբունքների հանդեպ հայ ժողովրդի ցուցաբերած հավատարմության շնորհիվ, հարյուրավոր և հարյուրավոր տարիներ զորավոր կամքով կարողացել է դիմադրել բոլոր դժվարություններին: Հայ ժողովրդի լավատեսության և հույսի ոգու շնորհիվ է, որ կատարվել է Նորին Սրբության ընտրությունը»:

Վեհափառ Հայրապետը իր խոսքում պատմեց այն դժվարությունների մասին, որոնք հայ ժողովուրդը կրում է այսօր: Նա բարձրորեն գնահատեց Մարտին Լութեր Քինգի հիշատակը: Խոսեց քրիստոնեական հավատքին հայ ժողովրդի հավատարմության մասին: Մանրամասնաբար անդրադարձավ Հայաստանում տիրող կացությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Մեկնելով Նյու Յորքից, Վեհափառ Հայրապետը ժամանեց ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոն, ուր շատ կարևոր պաշտոնական հանդիպումներ ունեցավ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Առաջինը տեղի ունեցավ նույն օրը՝ Միջազգային Դրամատան նախագահ Ջեյմս Ուոլֆենսոնի հետ: Նա իր սեփական բնակարանում

ճաշով պատվեց Վեհափառին: Այս առիթով Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետության կառավարության և ժողովրդի խոր գնահատանքը փոխանցեց Միջազգային Դրամատան նախագահին՝ Հայաստանին ցուցաբերած կարևոր օժանդակության համար: Նախագահ Ջեյմս Ուոլֆենսոնը, հանուն Միջազգային Դրամատան անձնակազմի, իր հիացումը հայտնեց Հայաստանի կառավարության նախաձեռնությունների և սկիզբ առնող սեփականաշնորհման գործընթացի համար, որոնք պիտի սատարեն տնտեսական հիմնական բարեփոխումներին:

Վեհափառ Հայրապետը ի մասնավորի ասաց. «Վերջին իններ ամիսներու ընթացքին Հայաստանի մեջ բնակություն հաստատելով, ականատես եղա Միջազգային Դրամատան կողմե Հայաստանին կատարած գնահատելի աջակցության: Քանի մը հանդիպումներ ունեցա Միջազգային Դրամատան Երևանի ներկայացուցիչ Վահրամ Ներսիսյանցի հետ, որ եռանդով ու ձեռնհասությամբ Հայաստանի մեջ գործադրության կդնե Միջազգային Դրամատան ծրագրերը: Այցելեցի կարգ մը վայրեր, մասնավորաբար երկրաշարժի գոտիի շրջանը, ուր տեսա հարյուրավոր վերակառուցված բնակարաններ, որոնք պիտի տրամադրվին երկրաշարժի պատճառավ անտուն մնացած ժողովուրդին: Միջազգային դրամատունը հարազատ գործակիցի մը դեր կկատարե Հայաստանի վերակառուցման ու զարգացման կարևոր գործի մեջ»: Նորին Սրբությունը շեշտեց նաև Հայաստանի նոր Հանրապետությունում ճանապարհների շինության և տարբեր ձեռնարկությունների հաստատումն՝ ի խնդիր տնտեսական պայմանների բարելավման:

Այս հանդիպմանը Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին ՀՀ ԱՄՆ-ի դեսպան Ռուբեն Ծուգարյանը, Ամերիկայի Հայոց արևելյան թեմի Առաջնորդ Խաժակ արքեպս. Պարսամյանը, արևմտյան թեմի Առաջնորդ Վաչե արքեպս. Հովսեփյանը, Հայրապետական այցելության կենտրոնական հանձնախմբի ատենապետ Կառլ Բազարյանը, Վաշինգտոնի տեղական հանձնախմբի ատենապետ Մ. Էրքիլեթյանը և Հայկական Համագումարի գործադիր տնօրեն Ռոս Վարդյանը: Մոտ երկու ժամ տևող ճաշ-հանդիպման ընթացքին հայկական պատվիրակությունը արծարծեց հարցեր՝ Անդրկովկասում անմիջական և հետպատերազմյան շրջանային զարգացման կարիքների կապակցությամբ, որոնցում առաջնահերթ նկատվեցին փոխադրության, հաղորդակցության և վառելանյութի վերաբերյալ ծրագրերը:

Քննարկվեցին Ամերիկահայոց առաջնորդարանի Հայաստանի Օգնության Ֆոնդի և Հայկական Համագումարի զարգացման մեջ եղող ընթացիկ ծրագրերը: Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին

Սրբությունը վերահաստատեց իր բարձր գնահատանքը Հայաստանի Օգնության Ֆոնդին, որպես ոչ-կառավարական կազմակերպություն՝ նպատակ ունենալով զորավիգ կանգնել տնտեսական ծրագրերի զարգացմանը Հայաստանի բոլոր գյուղական շրջաններում:

Նախագահ Ուոլֆենսոնը նշեց, որ ոչ-կառավարական կազմակերպությունը ամենաազդու միջոցն է և արագ դյուրություններ է ստեղծում փոքր ծրագրերի իրագործման համար, որոնք համապատասխանում են ՀՕՖ-ի նպատակներին:

Նախագահ Ուոլֆենսոնը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց շրջանային զարգացման հարցերի և Միջազգային Դրամատան համագործակցության կապակցությամբ՝ ոչ կառավարական ձեռներեց կազմակերպությունների հետ: Նա ցանկություն հայտնեց նաև այցելել Հայաստան: Ապա շեշտեց, թե նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մեջ նոր անկախություն ստացած և տնտեսապես բարեկորոգվող գլխավոր երկրներից մեկը Հայաստանն է:

Նախագահ Ուոլֆենսոնի հետ ներկա էին նաև Միջազգային Դրամատան գործադիր տնօրեն Էվելին Հերֆգենսը, նախագահի խորհրդատու Մաթ Մգհիվը և տնտեսական ծրագրավորման ու միջոցների տեղաշարժման փոխնախագահ Յոհաննես Լինը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը խոսեց Հայ Եկեղեցու ստանձնած դերի մասին և իր խոսքը վերջացրեց՝ ասելով. «Եկեղեցին, որ 70 տարիներե ի վեր լճացած վիճակի մը մատնված էր, այժմ թևակոխած է ներքին վերանորոգման ու բոլորին ծառայելու սահմանված առաքելության նոր ժամանակաշրջան մը»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՑ ՀԱՄԱՑՆՔԻ ՀԵՏ

Դրամատան նախագահի հետ պաշտոնական տեսակցությունից հետո, Վեհափառ Հայրապետը հանդիպեց Վաշինգտոնի հայ համայնքի հետ՝ տեղի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում: Շուրջ 300 հայեր ներսից ու դրսից ուղղակի շրջապատել էին փոքրիկ Եկեղեցին, ստանալու համար իրենց Հայրապետի օրհնությունը: Վեհափառ Հայրապետը հինգ եպիսկոպոսների և թեմի հոգևորականների առաջնորդությամբ «Հրաշափառ»-ով մուտք գործեց Սուրբ Աստվածածին եկեղեցի, որտեղ ջերմության և ոգևորության մթնոլորտում էլ տվեց իր հայրական պատգամն ու օրհնությունը:

Նախ հոգևոր հովիվ Տեր Վրթանես քահանան ջերմ խոսքերով բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին: Ապա Նորին Սրբությունը, խոսքն ուղղելով հատկապես երիտասարդներին, շեշտեց, որ Հայ Քրիստոնեության նոր դարաշրջան է բացվել, և այն կարևորելու ու արժևորելու մեջ մեծ է երիտասարդության դերը. «Այժմ Էջմիածինը Քրիստոնեական ազատության նոր պայմաններ է վայելում, և ես եկել

եմ այդ վերանորոգության հոգին ձեզ բերելու: Սիրել Հայրենիքը մի բան է, բայց լավագույնը այդ երկիրը կառուցելն է: Հայրենիքը սիրելն ի՞նչ արժեք ունի, եթե դուք այն գործի չվերածեք սեփական հարազատությամբ և չկրեք բոլոր դժվարություններն ու ծանրությունները»:

Ապա եկեղեցու սրահներից մեկում տեղի ունեցավ հարցազրույց և երկխոսություն Վեհափառ Հայրապետի հետ, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց արդի աշխարհում մարդկությանը հուզող տարբեր հարցերին, միևնույն ժամանակ նաև ներկայացնելով Հայ Եկեղեցու վերաբերմունքն ու դիրքորոշումը դրանց նկատմամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀՑՈՒՐԱՆՈՑՈՒՄ

*Հունվարի 15-ի հետմիջօրեին Վեհափառ Հայրապետը Հյուրանոցի իր հյուրասենյակում ընդունեց «**Վաշինգտոն Թայմզ**» և «**Վաշինգտոն Փոստ**» թերթերի, ինչպես նաև «**Ամերիկայի Ձայն**» ռադիոկայանի թղթակիցներին, որոնց հարցումներին Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի այժմյան կացության մասին պատասխանեց հանգամանորեն:*

***

Նույն երեկո Վեհափառ Հայրապետն ընդունեց Բալթիմորի Կարդինալ Քիլարին և իրեն ընկերակցող եպիսկոպոսներին ու վարդապետներին: Հանգամանորեն խոսվեց Ամերիկայի Կաթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսների Համագումարի և Հայ Եկեղեցու փոխհարաբերությունների մասին: Կարդինալ Քիլարը եղել էր այդ Համագումարի նախագահը:

Խոսակցության նյութ եղան էկումենական հարցեր, որոնք այսօր այնքան տիրական տեղ են գրավում արդի աշխարհի քրիստոնեական Եկեղեցիների կյանքում:

ԸՆԹՐԻՔ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան «Մարիոթ» հյուրանոցի շքեղ սրահներից մեկում պաշտոնական ճաշկերույթ տրվեց՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որին ներկա էին ավելի քան 300 հոգի: Մեծաթիվ ելույթ ունեցողները հայտնեցին իրենց խորին ուրախությունը Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց մեկ անգամ ևս Վաշինգտոնում գտնվելու համար և ասաց, որ տեղի հայերը մեծ դեր ունեն կատարելու, որովհետև գտնվում են մի հզոր տերության մայրաքաղաքում:

Նա կոչ ուղղեց, որ միասնականության կարգախոսը դառնա կյանք, որովհետև դրանով միայն մենք կարող ենք հարգանք ներշնչել

բոլոր օտարներին և բարձր շահեր ապահովել մեր Եկեղեցուն, Հայրենիքին և նորանկախ պետությանը:

Վեհափառը հանգամանալից կերպով ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կացությունը և առհասարակ Հայաստանի ներկա դրությունը: Կոչ արեց, որ աջակցությունը Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին չհասկանալ օժանդակություն բառի տակ, այլ ըմբռնել ինքնակերտում, ինքնօգնություն գաղափարներով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հաջորդ օրը, Երեքշաբթի, հունվար 16-ին, Նորին Սուրբ Օծության ղեկավարած պատվիրակությունը հանդիպում ունեցավ Գյուղատնտեսության նախարարությունում:

Միացյալ Նահանգների հանձնախումբը գլխավորում էր նախարարի տեղակալ Եվգին Մուսը և որին ընկերակցում էին գյուղատնտեսության նախարարության արտաքին հարաբերությունների բաժնի ներկայացուցիչներ Գլեն Ուայթմանը, Ջիմ Նիգիստոնը և Ֆիլիպ Լիթարթը, բոլորն էլ բարձր պաշտոնյաներ, որոնք առնչվում են Հայաստանին տրվող օգնության հետ:

Նախարարի տեղակալը ողջունեց Վեհափառ Հայրապետին ու իր պատվիրակությանը և հաղորդեց նախարարի՝ Դան Գլիքմանի ողջույնները, որն այդ պահին բացակայում էր երկրից: Նա սիրով խոսեց իր Հայաստան այցելության մասին՝ ասելով. «Հայաստանը մի երկիր է, որը ես համարում եմ քրիստոնեության օրրանը»:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց նախարարի տեղակալին և իր հանձնախմբին այն շոշափելի օգնության համար, որը նրանք տրամադրում են Հայաստանին Հայ Օգնության Ֆոնդի (ՀՕՖ) միջոցով: 1992 թվականից սկսած Գյուղատնտեսության նախարարության հատկացրած նպաստերն անցնում են 70 մլն ԱՄՆ դոլարից:

Վեհափառ Հայրապետը հատկապես նշեց, որ «արտաքին օգնությունը, թեև դրա կարիքը կա, չի կարող և չպետք է փոխարինի տեղի այն ջանքերին, որով մարդիկ վաստակում են իրենց ապրուստը: Մենք զգուշորեն ենք օգտագործում օգնությունը, միայն ժամանակավոր բացը լրացնելու համար՝ առանց կախվածություն ստեղծելու. մենք ընթանում ենք երկար ժամանակ պահանջող մեր զարգացման նախագծերի իրագործման ճանապարհով»:

Պրն. Մուսը մեծ գոհունակություն հայտնեց այն բանի համար, որ ինքը կարողանում է օգնել Հայաստանին կարիքի այս պահին, և

ավելացրեց. «Ձերդ Սրբություն, մենք կիսում ենք Ձեր անհանգստությունն ու հեռատեսությունը, որ պետք չէ օգնությամբ միայն գոհանալ, երբ պայմանները կայունանան: Մենք արդեն զբաղվում ենք այնպիսի նախագծերով, որոնք վեր են զուտ պարզ և անմիջական օգնություն լինելուց»:

ՀՕՖ-ի գործադիր տնօրեն պարոն Սիմոն Պալյանը ամփոփ ընդհանրացմամբ ներկայացրեց պարոն Մուսի զարգացման նախագծերը, որոնք զարգացողական ոգին են ներարկում Հայաստանի ժողովրդին:

Նախարարի տեղակալը և իր անձնակազմը իրենց գնահատանքն արտահայտեցին ՀՕՖ-ի ներդրած ջանքերի համար՝ ինչպես օգնությունը բաժանելիս, այնպես էլ երկար ժամանակ պահանջող զարգացման նպատակների համար այդ օգնությունը աստիճանաբար բաշխելիս:

Շուրջ մեկ ժամ տևած հանդիպման վերջում Ամենայն Հայոց Հայրապետը, ի նշան գնահատանքի, պարոն Մուսին նվիրեց Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի փայտյա մանրակերտը, իսկ տեղակալը Վեհափառ Հայրապետին հանձնեց մի արծաթե գավաթ՝ Միացյալ Նահանգների Գյուղատնտեսության Նախարարություն դրոշմով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆԻ ՀԵՏ

Հունվարի 16-ի կեսօրին Ամենայն Հայոց Հայրապետը, Սպիտակ Տան «Օվալ» գրասենյակում հանդիպում ունեցավ Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Քլինթոնի հետ:

Վեհափառ Հայրապետի շքախմբին անդամակցում էին Վաչե և խաժակ սրբազանները և Հայաստանի դեսպան Ռուբեն Շուգարյանը: Ներկա էին Ամերիկայի Ազգային Ապահովության Խորհրդի գլխավոր խորհրդական Տիար Էնթնի Լեյքը և Նախագահի մի քանի ավագ խորհրդականներ:

Բացառիկ, ջերմ և սիրալիր այս հանդիպումը տևեց երեսուն րոպե և Վեհափառ Հայրապետի կողմից բնորոշվեց որպես մեծապես արդյունավետ:

Ամենայն Հայոց Հայրապետը իր խորին երախտագիտությունը հայտնեց Միացյալ Նահանգների ղեկավարությանը, որ շարունակաբար մարդասիրական օգնություն է ուղարկում Հայաստան, և հատկապես շեշտեց նախագահ Քլինթոնի անձնապես զորավիգ լինելը Հայաստանի անկախությանը. «Տակավին միայն ինը ամիսե ի վեր է, որ հաստատված եմ Հայաստան՝ Հայաստանյայց Եկեղեցվո բարձրագույն պաշտոնին ընտրվելե ետք: Նույնիսկ այս կարճ ժամանակաշրջանին մեջ կրցա դրական փոփոխություններ տեսնել հայ ժողո-

Վեհափառը հանդիպում է ունենում Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Քլինթոնի հետ

«Ես գրկում եմ ազգությունս։ Հայությունը ոչ մի բան չի կորցնում։»

վուրդի կյանքին մեջ, որը կարելի դարձավ շնորհիվ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած պետության իմաստուն ղեկավարության և հասարակական կյանքի այլ պատասխանատուների գործակցության»:

Ապա Նորին Սրբությունը նախագահ Քլինթոնին պարգևատրեց «Սուրբ Գրիգոր Լուսավորչի» բարձրագույն շքանշանով՝ Հայաստանի անկախությանն ի նպաստ ցուցաբերած օժանդակության համար, ինչպես նաև հատկապես առ ի երախտագիտություն Միացյալ Նահանգների տրամադրած մեծ օգնության: Նախագահը նշեց, որ մասնավոր կապ գոյություն ունի Միացյալ Նահանգների և Հայաստանի միջև ու հույս հայտնեց, որ շնորհիվ իր հանձնառության, այդ կապը ավելի պիտի խորանա:

Վեհափառ Հայրապետը նախագահին ուղղելով խոսքը ասաց. «Ինձի համար մասնավոր երջանկություն և գեղեցիկ առիթ մըն է իմ շնորհակալության և երախտագիտության խոսքս արտահայտելու հանուն մեր Սուրբ Եկեղեցու և Հայաստանի ժողովրդի: Իսկ Ձեր միջոցավ ալ՝ արտահայտելու Միացյալ Նահանգներու կառավարության և ժողովրդին»:

Նախագահ Քլինթոնը և Ամենայն Հայոց Հայրապետը խորհրդակցեցին և իրենց խորունկ մտահոգությունները հայտնեցին Ղարաբաղի հարցի կապակցությամբ և ընդհանուր առմամբ՝ Կովկասի կացությամբ:

Նորին Սրբությունը նախագահին հայտնեց Ղարաբաղ կատարած իր այցելության, ինչպես նաև անցնող հունիս ամսին Մոսկվայում Կովկասի մահմեդականների ղեկավար Շեյխ Ուլ Իսլամ Փաշազադեի և Ռուս Եկեղեցու Ալեքսի Պատրիարքի հետ ունեցած հանդիպման մասին՝ անդրադառնալով, որ հարցը կրոնական բնույթ չունի: «Ղարաբաղի հայերը և ազերիները չեն կռվիր քրիստոնյայի-իսլամի հարցերուն համար: Հարցերը կվերաբերին մարդկային իրավանց, արդարության և ինքնորոշման», շեշտեց Վեհափառը:

Նախագահն ու Վեհափառ Հայրապետը նշեցին նաև Հայաստանի բոլոր հարևանների հետ բարելավ հարաբերություններ ունենալու կարևորությունը, ինչպես նաև համագործակցությունը արևմտյան աշխարհի հետ: Այս նեղ օրերին Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը միասնաբար են դիմագրավում մի շարք դժվարություններ՝ անկախությունը առավել զորացնելու, բարգավաճելու, ժողովրդավարական վարչաձևը բարելավելու, մնայուն խաղաղություն հաստատելու և իրենց կապը ամրապնդելու միջազգային հանրակցության հետ:

Նախագահը ջերմորեն ողջունեց խաղաղության այս նոր շրջանը և գնահատեց ամերիկահայ գաղութի ընծայած մարդասիրական

օժանդակությունը Հայաստանին: Նորին Սուրբ Օծությունը կոչ ուղղեց նախագահին, որ կարելին գործի համագործակցելու համար Ռուսաստանի, Եվրոպական երկրների և Հայաստանի հարևան պետությունների հետ «հաստատակամությամբ աշխատելու հարցի լուծման համար՝ խաղաղ միջոցներով և բանակցություններով, որպեսզի հարկ չլինի հարցերը կռիվի և բանակի միջոցավ լուծել»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ավելացրեց. «Մեր Մայր Հայրենիքը՝ Հայաստանը, Սովետական Միությունեն դուրս գալեն հետո, կմտնե խաղաղության և անկախության նոր շրջանին մեջ բազմաթիվ դժվարություններ դիմագրավելով, հատկապես 1988-ի աշոնելի երկրաշարժեն հետո, Ազերբեյջանի և Ղարաբաղի Հայոց միջև ծագած հարցերը, և հանրածանոթ շրջափակումը, որ ցարդ կպարտադրվի: Հակառակ ստեղծված այս չափազանց դժվարին պայմաններուն, փառք կու տամ Աստուծո, մեր ժողովուրդին ցուցաբերած դիմանալու ոգիին համար»:

Վեհափառը առանձնապես խոսեց Հայց. Առաքելական Եկեղեցու բերած և առավել ևս բերելիք մասնակցության մասին մեր ժողովրդի ազգային–պետական վերականգնման գործին: Եկեղեցին այժմ լծված է հոգևոր և բարոյական առողջ սկզբունքները մեր ժողովրդի կյանքում տարածելու հիմնական աշխատանքին, ըստ Քրիստոսի Ավետարանի ուսուցումների և մեր հայրերի դարավոր և սրբազան ավանդության: Մի ազգ առանց բարոյական տոկուն հիմքերի չի կարող երկար գոյատևել, եզրակացրեց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓՐՈՎԻԴԵՆՍՈՒՄ

Մի քանի ժամ հետո Վեհափառ Հայրապետը մեկնեց Փրովիդենս (Ռոդ Այլընդ): Փրովիդենսի «Ուեսթին» հյուրանոցի նախասրահում Վեհափառին ողջունեցին ավելի քան 200 հոգի, որոնց թվում մի մեծ խումբ հայ երեխաներ: Քիչ հետո Վեհափառ Հայրապետը բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք եկել էին բարի գալուստ մաղթելու, ասաց, թե «այս երեխաների անարատ ձայնը պետք է հիշեցնի բոլորին, որ հին ազգերը անցողիկ չեն, այլ հին ազգերը կարող են միշտ նոր լինել»: Այնուհետև տեղի ունեցավ մամլո ասուլիս:

Ապա հյուրանոցում տեղի ունեցավ կարճ ընդունելություն, որին ներկա էին Փրովիդենսի քաղաքապետ Ուինսթոն Սիանսին, Հայ և օտար Եկեղեցիների հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ: Այս հանդիպման ժամանակ քաղաքապետ Սիանսին Վեհափառ Հայրապետին նվիրեց քաղաքի ոսկե բանալին: Ամենայն Հայոց Հայրապետը հիշեց, որ պարոն Սիանսին քաղաքի բանալին ևս մեկ անգամ նվիրել է իրեն սրանից 13 տարիներ առաջ՝ 1981 թվականին, երբ ինքը Փրովիդենս էր ժամանել որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ասաց. «Նա ինձ տվեց բանալին, բայց ինչպես որ սովորաբար անում է նա, ինձ ցույց չտվեց, թե որտեղ է գտնվում դուռը: Դուռը ձեր սիրտն է և բանալիով, ես խնդրում եմ ձեզանից, բացե՛ք ձեր սրտերը»:

Այս հանդիպումը վարեց Բրաունի համալսարանի ռեկտոր դոկտոր Վարդան Գրիգորյանը, որը ժամանակին Լիբանանի «Համազգային»ի ճեմարանում եղել էր Վեհափառ Հայրապետի աշակերտը: Նա ջերմ զգացումով ներկայացրեց Վեհափառ Հայրապետի անձն ու գործը և կարևորեց նրա առաքելությունը Հայաստանում և Սփյուռքում:

Ապա Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Սուրբ Պողոս Պետրոս կաթոլիկ Մայր տաճար, որտեղ տեղի ունեցավ «Հրաշափառ»-ի արարողություն: Այստեղ Մայր տաճարի ավագերեցը բարիգալստյան խոսքերով ողջունեց այս շնորհաբեր այցելությունը՝ այն համարելով էկումենական մի կարևոր պահ Փրովիդենսի ժողովրդի համար:

Ներկա էին Կաթոլիկ, Օրթոդոքս, Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչները և ավելի քան 1000 հավատացյալներ:

Նորին Սրբությունը տվեց իր պատգամը, նախ շնորհակալություն հայտնելով օտար հոգևորականներին՝ իրենց այս եղբայրական ջերմ վերաբերմունքի համար: Ապա խոսեց Հայ Եկեղեցու մասին՝ ընդգծելով վերանորոգության շունչը, որ այժմ տիրում է Հայաստանում: Նա ասաց, քրիստոնեական հավատքի վերաշխուժացումը Հայաստանում պետք է նկատվի ոչ թե որպես միայն Հայաստանի ժողովրդին մատուցված ծառայություն, այլև ընդհանուր քրիստոնեությանը:

Վեհափառ Հայրապետը խոր վերլուծումներ կատարեց արդի աշխարհի կյանքում առաջ եկած երևույթների և նրանց ճշգրիտ գնահատման մասին:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, հունվարի 17-ի առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցի, որտեղ առավոտյան ժամերգությունից հետո, եկեղեցու սրահում տեղի ունեցավ նախաճաշ տեղի երիտասարդության հետ, որի ընթացքում հայ երիտասարդները մտերմիկ խոսակցություններով և հարցերով առավել կենդանի կերպով կարողացան հաղորդակցվել Հայոց Հայրապետի հետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՒՍՏՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Հունվարի 17-ին Վեհափառ Հայրապետը Փրովիդենսից մեկնեց Մասաչուսեթի նահանգ, ուր առաջին հերթին կարճ այցելություն տվեց

Ուստր քաղաքի Սուրբ Փրկիչ եկեղեցուն: Խուռներամ մի բազմություն համախմբվել էր դիմավորելու իր հոգևոր Հորը: Ներկա էին նաև ուրիշ Եկեղեցիների, հատկապես Կաթոլիկ, Օրթոդոքս և Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Եկեղեցականների թափորով և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ, Վեհափառը մուտք գործեց Սուրբ Փրկիչ եկեղեցի, որտեղ կանոնական աղոթքից հետո Առաջնորդ Խաժակ Սրբազանը հակիրճ խոսքով Վեհափառին ներկայացրեց հավատացյալ ժողովրդին:

Նորին Սրբությունը իր պատգամը տվեց եկեղեցու բեմից՝ նախ փառք տալով Աստծուն այն հավատքի կենդանի պահպանության համար, որը նկատեց Ուստրի ժողովրդի հավատարմության լավագույն փաստ:

Նա հիշեց, որ Ամերիկայի տարածքում Ուստր քաղաքը եղել էր առաջին օջախներից մեկը, որտեղ կազմակերպվել էր Հայ Եկեղեցու կյանքը և սկիզբ էր առել Հայոց Եկեղեցու Առաջնորդական թեմը: Կոչ ուղղեց ժողովրդին, հատկապես երիտասարդ սերնդին, որ շարունակեն առողջ և գործուն պահել Հայց. Եկեղեցու ավանդությունը Ուստրում:

Եկեղեցական արարողությունից հետո հովվի գրասենյակում Վեհափառն ընդունեց մամուլի ներկայացուցիչներին՝ թերթերի, հեռուստատեսության, ռադիոյի թղթակիցներին և պատասխանեց նրանց հարցերին:

Եկեղեցու սրահում ժողովուրդը համախմբվեց հյուրասիրության սեղանի շուրջ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Այստեղ քաղաքապետը խոսք ուղղեց Վեհափառին և, ի նշան հարգանքի, նրան հանձնեց քաղաքի խորհրդանշական բանալին:

Նորին Սրբությունը մտերմիկ շեշտով խոսեց ժողովրդի հետ ու իր խոր տպավորություններն ու պատկերացումները ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի մասին՝ քաջալերելով բոլորին, որ անքակտելի կերպով իրենք իրենց կապված զգան իրենց հավատքի մայր օջախին և հայրենական արմատներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ տալով Ուստրի համայնքին, մեկնեց Բոստոն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՍՏՈՆՈՒՄ

Կեսօրից հետո, ժամը 15.00-ին, Նորին Սրբությունը ժամանեց Բոստոն, գնալով «Շերաթոն Քոմանդոր» հյուրանոց:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Ժամը 16.00-ին Վեհափառը մեկնեց Ուոթրթաուն քաղաքի Սուրբ

Հակոբ եկեղեցի: Այստեղ, եկեղեցու ընդարձակ և շքեղ սրահում, հավաքվել էին ավելի քան 500 հայ դպրոցական երեխաներ շրջանի բոլոր դպրոցներից: Բացի Սուրբ Հակոբ եկեղեցու դպրոցի աշակերտներից, եկել էին նաև Սուրբ Ստեփաննոս եկեղեցու ամենօրյա վարժարանի աշակերտները, ինչպես նաև «Անարատ Հղության» քույրերի դպրոցի երեխաները:

Դպրոցականները, առաջնորդված իրենց տեսուչների և ուսուցիչների կողմից, դրոշակներով, մեծ ոգևորությամբ և քաղցր բացականչություններով ընդունեցին իրենց հոգևոր Հորը:

Ցուրաքանչյուր դպրոցից եղան հատուկ և կարճ ելույթներ, բարիգալստյան խոսքեր, արտասանություններ, երգեր, պարեր:

Այս խանդավառ մթնոլորտում Վեհափառ Հայրապետն իր հոգում կարծես մանկացյալ հոգեխառնությամբ սրտագին խոսքեր ուղղեց երեխաներին, գնահատեց նրանց բոլոր գեղարվեստական ելույթները: Հորդորեց, որ միշտ հաճախեն հայկական վարժարաններ՝ ամենօրյա, շաբաթօրյա կամ կիրակնօրյա, և ջանան նաև իրենց հետ ուրիշ հայ երեխաներ ևս բերել հայոց վարժարան, ապա Սուրբ Հակոբ եկեղեցում կարճ աղոթքից հետո մեկնեց Քեմբրիջ:

ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՔԵՄԲՐԻՋԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Երեկոյան, Քեմբրիջի Սուրբ Երրորդություն եկեղեցու հովվատանը մի պահ հանգստանալուց հետո, Վեհափառը հանդիսավոր թափորով մուտք գործեց Սուրբ Երրորդություն եկեղեցի, որտեղ Սուրբ Պատարագ մատուցվեց Առաջնորդ Խաժակ Սրբազանի կողմից:

Ներկա էին օտար Եկեղեցիների ներկայացուցիչներ և հավատացյալների մի հոծ բազմություն, ինչպես նաև Մասաչուսեթի նահանգի 22 հայկական եկեղեցիների հոգևոր հովիվները: Պատարագի երգեցողությունը կատարվեց միացյալ երգչախմբի կողմից՝ ղեկավարությամբ Օշական վրդ. Մինասյանի:

Տերունական աղոթքի պահին Խաժակ Սրբազանը իր ջերմ

ուրախությունը հայտնեց Վեհափառ Հայրապետի այցելության առիթով և նրա հովվապետական ներկայությունը նկատեց մի կարևոր դեպք թեմի ամբողջ կյանքի զարգացման համար: Ապա հրավիրեց Վեհափառին՝ տալու իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը «Նախանձ տան քո կերիցէ զիս» ավետարանական բնաբանով սկսեց իր քարոզը Քեմբրիջի Սուրբ Երրորդություն եկեղեցում:

Մեջբերելով Հիսուս Քրիստոսի այս խոսքերը, շուրջ մեկ ժամ անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատմությանը՝ սկսելով Խրիմյան Հայրիկից, որ «ձերբազատվելով ռուսական ցարի ազդեցութենեն, երկար շունչ մը քաշեց Հայաստանի առաջին անկախության օրերուն»: Ապա հիշատակեց ստալինյան օրերը, Խորեն Կաթողիկոս Մուրադբեկյանի նահատակվելը՝ հասնելով մինչև «Էջմիածնաշեն» վազգեն Ա Վեհափառը, որ «լուռ կերպով աշխատեցավ և շինեց ու բարգավաճեցուց Էջմիածինը»: Այնուհետև Նորին Սրբությունը նշեց, որ Հայաստանի անկախացումով մի նոր շրջան է բացվել, օտար ուժերը «մաքրված» են թե՛ պետության և թե՛ Եկեղեցու վրայից և ժամն հասել է, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դառնա հայության միակ հոգևոր կենտրոնը: Վեհափառը, խոսելով հայերենով և անգլերենով, հայտնեց, որ Սուրբ Էջմիածնի դռները բաց են ամենքի առջև, և ժամանակն է մինչև այժմ եղած խոսքերից վեր կանգնել և «հայու պարտականությունը» կատարել նորաստեղծ Հայաստանի և Էջմիածնի հանդեպ: «Նախ պարտականություն և ապա փառք», «First duty, then glory» երկու լեզվով էլ կրկնեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը շեշտեց Ամերիկայի եկեղեցական առօրյա կյանքում կատարված անսպառ ծախսերի մասին և ավելացրեց. «Ես գիտեմ ինչ կըսեմ, ավելորդ սպառում մը կա, որ ապարդյուն է»:

Նա շեշտակիորեն ընդգծեց այն իրողությունը, որ ներկա ժամանակներում մեր բոլորի ընդհանրական ուղեգիծը պետք է լինի մեր պատմության այս նոր շրջանը վերածել պատվաբեր մի շրջանի, որպեսզի գալիք սերունդները հպարտանան և հարգանք ու օրհնանք ընծայեն մեզ և իրենց հերթին լծվեն հայ ժողովրդի հավերժականության առաքելությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատմեց Հայաստանի և Արցախի տարբեր գյուղեր ու ավաններ կատարած այցելությունների մասին՝ խոսելով ժողովրդի դժվար, բայց տոկուն կյանքի մասին՝ յուրահատուկ կերպով կամարակապելով Հայրենիքը Սփյուռքի հետ:

ԱՑԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հունվարի 18-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը նախա-

ճաշեց հայ և օտար հոգևորականների հետ: Միջեկեղեցական նկարագիր ունեցող այս հավաքույթին Վեհափառը խոսեց ներկա ժամանակներում Եկեղեցիների միջև զարգացող այն գեղեցիկ շարժման մասին, որ ընդհանուր քրիստոնեության կյանքում բնորոշվել է որպես էկումենական շարժում: Փոխադարձ մերձեցման երևույթը արդի կյանքի պահանջն է Եկեղեցիներից: Եվ բնականորեն քրիստոնեական Եկեղեցիների միությունը կամքն ու կտակն է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի: Նախաճաշին ներկա էին նաև քաղաքական գործիչներ, ինչպես ծերակուտական Ջոն Քերրին, կոնգրեսմեն Ջոզեֆ Քենեդին և Քեմբրիջի քաղաքապետ Ֆրանկ Դյուհեյը: Երեքն էլ հատուկ ելույթներով խորապես գնահատեցին Վեհափառ Հայրապետի մտածումներն ու վերլուծումները արդի կյանքի և քրիստոնեական Եկեղեցիների մասին:

***

Կեսօրին Սուրբ Երրորդություն եկեղեցուն կից «Թալանյան» մշակութային սրահում Վեհափառ Հայրապետը ճաշի հյուրը եղավ եկեղեցու համայնքի: Ներկա էին ավելի քան 200 հրավիրյալներ:

Այս պահը Խաժակ սրբազանի կողմից որակվեց որպես «անմոռանալի երևույթ» և «սիրո սեղան», իսկ սեղանակիցները «սիրո սեղանակիցներ»: Այդ բնորոշումը բխում էր ճաշկերույթի մ'ասնակիցների սեղմ շրջանակից և նրանց ներկայացուցչական հանգամանքից՝ Մասաչուսեթի Հայաստանյայց Եկեղեցու քահանա հայրերով, ներառյալ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին ենթակա եկեղեցիները, հայ ավետարանականների վերապատվելիներ, Հայ կաթոլիկների վարդապետը, Հովվապետական այցելության կազմակերպիչ հանձնախմբի անդամներ և հայ մամուլի ներկայացուցիչներ:

Սուրբ Երրորդություն եկեղեցու հովիվ Տեր Մամբրե Գուզույանը հիշեց Անթիլիասի դպրեվանքյան ուսանողական օրերից (1949թ.) այն բացառիկ և «խարիզմատիկ» ուսանողին, որ կոչվում էր Նշան սրկ. Սարգիսյան, որն այսօր իր օրհնաբեր այցելությունն է տալիս ամերիկահայ գաղութին, որպես Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոս, միշտ նույն հմայքով՝ «խարիզմայով». «Հայրապետը Հայ Եկեղեցվո բարձրագույն պաշտոնը ստանձնած է, երբ Հայաստան կբոլորե իր բախտորոշ շրջանը: Իրեն վիճակված է լուծում գտնել ազգային շատ հարցերու, կրոնական հարցերու կողքին: Հոգևոր Հայր, մեզ առաջնորդե և մենք պիտի հետևինք Քեզի, որպես մեր հովիվը», իր խոսքը եզրափակեց Տեր Մամբրեն:

Հուզիչ և հատկանշական էր մանավանդ Վեհափառ Հայրապետի՝ Անթիլիասի դպրեվանքյան տարիների ուսուցիչ, բազմավաստակ երաժիշտ Համբարձում Պերպերյանի հիշողությունը: Պարոն Պերպերյանը տասնամյակներ առաջ ուսուցչական մի ժողովի ժամանակ ոչ միայն իր հիացումն է հայտնել Նշան Սարգիսյան ուսանողի

հանդեպ, այն մաղթել, որ լծվի հոգևոր ծառայության, ավելացնելով, որ նա կարող է դառնալ «մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսը»:

Այնուհետև Առաջնորդ Խաժակ սրբազանը, վեր հանելով օրվա խորհուրդն ու երևույթը, անհրաժեշտություն համարեց «վերադարձ մը դեպի քրիստոնեական մեր ակունքներուն» և դեպի 301 թվականը, իսկ «հայ հոգևորականության ակունքը Սուրբ Էջմիածինն է, որ դարեր շարունակ տվավ իր ավյունը հայ ժողովուրդին»: Սրբազան Հայրը իր խոսքի ավարտին ասաց. «**Եթե Ամենայն Հայոց Հայրապետին հետևիլ գիտնանք, բոլոր հարցերը պիտի լուծվին**»:

Վերջում իր օրհնությունը ու հայրական խորհուրդները տվեց Վեհափառ Հայրապետը՝ իր խորհրդածություններն ու մտածումները բաժանելով ներկաների հետ:

Նորին Սրբությունը, իր խոսքի սկզբում հիշելով ահաբեկչության զոհ դարձած ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարներից Դակ Համարշոլդի խոսքը, թե «սրբությունը 20-րդ դարում անցնում է գործի աշխարհի միջով», կարևորեց կամավոր և ինքնահոժար աշխատանքը, որը ներկաները տանում էին ներեկեղեցական կյանքում: Ապա խոսքը ուղղելով ներկաներին ասաց, որ Էջմիածինը պիտի լինի «այն, ինչ որ դուք կուզեք», և ավելացրեց, որ Էջմիածինը պիտի լինի «ներշնչման աղբյուր և հանձնառության ու վերանորոգման ուժ»: Եզրափակելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետն ասաց. «Ամենեն դժվար պայմաններու մեջ կծառայեմ և ես առանձին ոչինչ չեմ կրնար ընել: Ինչ որ պիտի ընենք, միասին պիտի ընենք»:

***

Կեսօրից հետո Վեհափառ Հայրապետն այցելություն տվեց տեղի Կաթոլիկ Եկեղեցու պետին՝ Կարդինալ Լոյին, վերջինիս բնակարանում: Այստեղ երկու հոգևոր պետերը, առանձնակի խոսակցությունից հետո, իրենց ընկերակցող հոգևորականների հետ ունեցան հոգեշահ զրույց երկու Եկեղեցիների գործակցության մասին:

Բոստոնի քաղաքապետ Թոմաս Մենինոն ևս այցելեց Վեհափառ հայրապետին և Կարդինալին ու մասնակից դարձավ ընդհանուր խոսակցությանը: Նաև տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում:

***

Երեկոյան ժամը 19.30-ին Վեհափառ Հայրապետը «**Ներաթոն**» հյուրանոցից մեկնեց «**Հայաթ Ռիջենսի**» հյուրանոց, ուր տեղի ունեցավ հանդիպում երիտասարդության հետ: Նա նախ ունկնդիրը եղավ երիտասարդությանը հուզող հարցերին, որոնք ներկայացվեցին

Անտոնի Պարսամյանի, Գառնիկ Դուրգարյանի, տիկ. Հ. Քրաֆյանի, երեցկին Ա. Գուզույանի, դոկտ. Թոմաս Սամվելյանի և Գյառնի Ալեսանդրի կողմից, ապա խոսեց ինքը: Այս հավաքույթին մասնակցեցին 900 երիտասարդներ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵՏՐՈՅՏՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Ուրբաթ, հունվարի 19-ի առավոտյան, Գարեգին Ա Հայրապետը իր շքախմբով, Ալեք Մանուկյան ընտանիքի անձնական օդանավով, Բոստոնից մեկնեց Դետրոյտ:

Հակառակ ցրտին և ձյունամրրիկին, օդանավակայանում Մանուկյան «Masco» ընկերության հատուկ բաժնում ավելի քան 200 դետրոյտահայեր, գլխավորությամբ Պարետ ծ. վրդ. Երեցյանի և ընդունելության հանձնախմբի, եկել էին դիմավորելու Վեհափառ Հայրապետին: Դիմավորողների շարքում առաջին տեղը զբաղեցնում էր մեծագործ բարերար Ալեք Մանուկյանը, որը հաշվի չառնելով ֆիզիկական տկարությունը, ընդառաջ էր դուրս եկել Հայոց Հայրապետին՝ Լուսավոչի Գահի 131-րդ գահակալին, որ իր հետ բերում էր Սուրբ Էջմիածնի անմար լույսի ցոլքերը և ազատ ու անկախ Հայրենիքի շնչառության հնքը:

Օդանավակայանի հյուրասրահում Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեց Սուրբ Հովհաննես եկեղեցու հովիվ Հայր Պարետ Երեցյանը, որը նաև այցի կազմակերպիչն ու ղեկավարն էր, ապա խոսքը տրվեց թեմի Առաջնորդ Խաժակ սրբազանին: Նա իր հերթին ձայնը այնուհետև տվեց ՀԲԸՄ-ի ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանին, որն ավելացրեց իր սրտագին խոսքերը: Հայ մեծ բարերարը նշեց, որ ինքը տարիներ ի վեր ճանաչում և հարգում է Վեհափառ Հայրապետին և որ դեռևս երջանկահիշատակ Վազգեն Վեհափառին առաջարկել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ին դարձնել աթոռակից Կաթողիկոս և այսօր իր երազանքն ու ցանկությունը իրականացած է տեսնում: Շնորհավորելով Գարեգին Վեհափառին այս բացառիկ ընտրության առիթով, խոստացավ ամեն կերպ աջակցել նրան Մայր Աթոռի և ընդհանրապես Հայաստանյայց Եկեղեցու վերարթնացման ու վերաշխուժացման դժվարին գործում:

Օդանավակայանից Դետրոյտի ոստիկանությունը Վեհափառ Հայրապետի և իր շքախմբի ավտոշարասյանը ուղեկցեց դեպի Դիրբորնի «Ռից Քարլթոն» հյուրանոց, որտեղ Վեհափառը հանդի-

պեց մամուլի և լրատվության ներկայացուցիչների հետ:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Կեսօրից հետո ավտոշարասյունը ուղևորվեց դեպի Դետրոյտի քաղաքագլխի պաշտոնական նստավայրը՝ հայտնի «Մանուկյան Բնակարան» (Manoogian Mansions) անունով: Սա Ալեք Մանուկյանի նվերն է քաղաքին, որը վերջերս վերանորոգել է նաև Ռիչարդ Մանուկյանը: Նորին Սրբությանը ջերմորեն դիմավորեցին քաղաքագլուխ Դենիս Արչերը և նրա տիկին Թրուդին և պաշտոնական այլ անձինք:

Քաղաքապետը ոչ միայն ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետին, այլև առիթն օգտագործեց շնորհակալություն հայտնելու Դետրոյտի հայ համայնքին իր դրական նպաստի համար քաղաքի կյանքին: Լինելով կաթոլիկ, քաղաքապետը ջերմ և բովանդակալից զրույցի բռնվեց Վեհափառ Հայրապետի հետ, որի համար էլ Վեհափառ Հայրապետը մեկնելուց առաջ կատակեց՝ ասելով. «Պարոն քաղաքագլուխ, Դուք ինձ վրա մեծ տպավորություն թողեցիք: Եթե երբևիցե որոշեք դուրս գալ քաղաքային ծառայությունից, եկեք ինձ մոտ և ես Ձեզ քահանա կձեռնադրեմ»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՏՐՈՅՏԻ ԿԱՐԴԻՆԱԼԻ ՀԵՏ

Քաղաքապետին տեսակցելուց հետո, Վեհափառը առաջնորդվեց կարդինալ Ադամ Մայդայի մոտ, որտեղ շատ սիրալիր ընդունելություն տեղի ունեցավ՝ ի պատիվ Գարեգին Ա Վեհափառի:

Երկու հոգևոր ղեկավարների միջև տեղի ունեցավ զրույց միջեկեղեցական և Եկեղեցի և աշխարհ հարաբերությունների մասին: Վեհափառ Հայրապետը Նորին Սրբազնությանը բացատրեց Հայաստանում տիրող նոր կացությունը և դրանում Եկեղեցու ունենալիք վճռական դերակատարությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵՏՐՈՅՏԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վեհափառ Հայրապետը Կարդինալ Մայիդայի առաջնորդությամբ ուղևորվեց դեպի Սուրբ Հովհաննես հայկական եկեղեցի: Ամերիկայի ամենամեծ և ամենագեղեցիկ հայկական եկեղեցիներից մեկը, ավանդական ազգային ոճով կառուցված տաճարը, լի և ալեծուփ էր Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու եկած հավատացյալներով և քույր Եկեղեցիների ու համայնքների ներկայացուցիչներով, որոնք միացան նաև Հայրապետական թափորին և մասնակցեցին ժամերգությանը: Ան Աստված մատուցած գոհաբանական աղոթքից հետո իր հայրական պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը:

Նա իր ուրախությունը հայտնեց Դետրոյտի ժողովրդին տված

իր այս անդրանիկ այցի համար, որով իրեն հաճելի և օգտաշահ միջոց էր տրված ճանաչելու իր հոգևոր հոտին:

Ապա բարձրորեն գնահատեց Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգևոր և ազգային, կրթական և մշակութային գործունեությունը, որ առատահոս մի աղբյուր էր եղել մեր ժողովրդի կրոնական և հայկական ապրումների առողջ և առույգ պահպանման մարզում:

Օտար Եկեղեցիների ներկայացուցիչներին ևս Վեհափառը հայտնեց իր հատուկ ուրախությունը, շնորհիվ նրանց ներկայությամբ պարզված համաքրիստոնեական ոգու և միասնականության:

ԸՆԹՐԻՔ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան մոտ 700 դետրոյտցիներ հավաքվեցին Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից սրահում՝ մասնակցելու Վեհափառ Հայրապետի պատվին տրվող ճաշկերույթին, որին ներկա էին նաև ԱՄՆ-ի Ներկայացուցիչների Տան անդամներ սենատոր Կարլ Լևինը, կոնգրեսմեններ Ջո Նոլենբերգը, Սանթոր Լևինը, ինչպես նաև նահանգային ծերակուտականներ Ջոն Ջամյանը և Ջորջ Հարթը (Հարությունյանը), Օուքլանդի դատախազ Ռիչարդ Թոմսոնը (Թովմասյան), Հանրապետական կուսակցության Ուեյնի նախագահ Էդուարդ Հարությունյանը և այլ ականավոր հյուրեր ու հայ համայնքի ներկայացուցիչներ:

Երեկոյի հանդիսավարն էր եկեղեցու հովիվ հոգեշնորհ Տ. Պարետ ծ. վրդ. Երեցյանը:

Կոնգրեսմեններ Նոլենբերգի և Սանթոր Լևինի խոսքերից հետո, ողջույնի խոսք ասաց պարոն Երվանդ Ազատյանը, որը Վեհափառին անվանեց Եկեղեցու միասնականության խորհրդանիշն ու այժմյան վերազարթոնքի մղիչը ուժը:

Ապա Առաջնորդ Խաժակ սրբազանը ներկայացրեց Նորին Սրբությանը, որից հետո ներկաներին իր Հայրապետական օրհնությունն ու պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը:

Իր խոսքում նախ անդրադարձավ կարևորագույն այն իրողությանը, թե մեր պատմության մեջ բացառիկ նշանակություն ունի այն, որ մեր Հայրենի աշխարհը՝ Մայր Հայաստանը, այժմ վերագտել է իր ազատությունն ու անկախությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն այժմ կոչված է կատարելու մի այնպիսի գործ, որով կամրանան մեր ժողովրդի քրիստոնեական կյանքի հիմունքները, որոնք իրենց մեջ ունեն մեր ազգի բարոյական բարձրության և տոկունության գաղտնի ուժը:

«Ես ջերմորեն ողջունում եմ այն առողջ մոտեցումը, որով հետզհետե զարգանում է մեր ժողովրդի մեջ միասնականության կամքն ու ձգտումը: Այս օրերին այդ միասնությունը մեզ համար առօրյա հացի

պես կենսական նշանակություն ունի», - ասաց նա:

Վեհափառը պատմեց Հայ Եկեղեցու ներկայի վիճակի և Մայր Աթոռի ժողովրդանվեր ու կրթա-դաստիարակչական ծառայություններին մասին. «Դանը է մեր գործը և այն կարելի է տանել միայն ձեր բոլորի ամբողջական և անվերապահ մասնակցությամբ»:

Դետրոյտի համայնքը թանկագին քարերից պատրաստված երկգլխանի ոսկյա արծիվ շղթայով նվիրեց Վեհափառին, որ պատրաստել էր վարպետ ոսկերիչ Սամվել Դալլաքյանը: Ընդունելով այն, Վեհափառ Հայրապետն ասաց, թե ինչպես Երուսաղեմի Գրիգոր Շղթայակիր Պատրիարքը շղթաներ կրեց իր պարանոցին, մինչև ազատեց Երուսաղեմի Սուրբ Աթոռը իր պարտքերից, այնպես էլ ինքը պիտի իր պարանոցին կրի այս շղթան, մինչև Սուրբ Էջմիածինը վերակենդանացնելու իր ճիգերը արդյունավորվեն:

Խոսք առավ նաև Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Կորյուն ավգ. քհն. Շրիքյանը և հուշանվեր ընծայեց Վեհափառին տեղի հայ համայնքի կողմից:

ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Շաբաթ, հունվարի 20-ին, քաղաքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում մատուցվեց սուրբ և անմահ Պատարագ: Օրվա պատարագիչն էր Խաժակ արքեպս. Պարսամյանը: Եկեղեցին ծփում էր հավատացյալների բազմությամբ:

Հընթացս Սուրբ Պատարագի քարոզեց Վեհափառ Հայրապետը: Նախ փառք և գոհություն ընծայեց Աստուծո, որ այս առիթը պարգևեց, Հայրենիքից ու Սուրբ Էջմիածնից բավականին հեռավորության վրա գտնվող մի այսպիսի չքնաղագեղ հայաոճ եկեղեցում հաղորդակցվելու իր զավակների հետ: Այնուհետև Վեհափառ Հայրապետն անդրադարձավ ու շեշտեց Ավետարանական «առավել կյանքի» գիտակցությամբ ապրելու անհրաժեշտությունը, որ սովորական և ամենօրյա սպառողական կյանքը չէ, այլ դրանից վեր ու գերազանց հոգեկան ու հավերժություն և անմահություն կերտող կյանքն է: Հայի համար ներկա ժամանակում այդ կյանքի առանցքը իր Սուրբ Եկեղեցին ու վերածաղկող Հայրենիքն է:

Հավարտ սրբազան արարողության, Մշակույթի ընդարձակ սրահում տեղի ունեցավ ընդունելություն և հանդիպում համայնքի զանազան խավերի հետ: Սեղանի օրհնությունից հետո, Վեհափառը հանդիպեց նաև համայնքի ամենակրտսեր ներկայացուցիչներին՝ երեխաներին: Հուզիչ էր տեսնել, թե Եկեղեցու Գերագույն Պետը ինչպես է դիմում փոքրիկներին ևս մեկ անգամ հիշեցնելով Հիսուսին, որ ասում էր, թե «Թողեք, որ այդ երեխաները ինձ մոտ գան, քանի որ նրանցն է Երկնքի Արքայությունը»:

Վերևում հայտնվում ձախ մասում Օգոստոս ամսվան, հետ ես Հեղինա Ալեքսի ընդ ծնունդ ցանցում ՀՀԱՀ-ի ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄՈՏ

«Masco» ընկերության կենտրոնատեղիում, ընկերության տնօրեն, խորհրդի նախագահ Ռիչարդ Մանուկյանը ճաշկերույթ տվեց՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Նա մի գեղեցիկ և բովանդակալից խոսքով իր պատվական հոր՝ Ա. Մանուկյանի և Մանուկյան ընտանիքի կողմից իրենց մեծ ուրախություն հայտնեց Վեհափառ Հայրապետի ընտրության համար և մաղթեց, որ նրա գահակալության տարիները լինեն բեղմնավոր տարիներ: «Մանուկյան ընտանիքը միշտ կմնա զորավիգ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և ընդհանրապես Հայ Եկեղեցուն»:

Որպես նշան Վեհափառի այցի պատճառած ուրախության, նա մի «Լիմուզին» մեքենա նվիրեց Վեհափառ Հայրապետին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԼԵՔ ԵՎ ՌԻՉԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԽԱՉԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ՀԵՏ

Այստեղ Նորին Սուրբ Օծությունը օրհնեց պարոն Ալեք Մանուկյանին՝ ասելով. «Ըստ արժանվույն ձեզ այնքան պարգևներ են շնորհվել, որ Ձեզ պարգևատրելու ոչինչ չի մնացել: Այդ պատճառով Հայաստանում ես պատրաստել եմ այս հատուկ նվերը, որի մի կողմում պատկերված է հայության հավերժության խորհրդանիշ Արարատը, իսկ մյուսին՝ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը: Խնդրում եմ այս այնպիսի մի տեղում դրեք, որ միշտ տեսնեք ու հիշեք Ձեր հանդեպ տածած իմ սերը, հարգանքն ու մտերմությունը»:

Ապա Վեհափառը ամենաբարձր աստիճանով գնահատեց Ա. Մանուկյանի կատարած դերը Հայ Եկեղեցու, ժողովրդի, դպրոցի, մշակույթի և Հայրենիքի վերազարթման և վերաշինման նվիրական գործում: Նա գնահատեց նաև իր զավակներին՝ Ռ. Մանուկյանին և

Լուիզ Սիմոնին, որոնք շարունակում են Մանուկյան ընտանիքի բարերարությունների ավանդույթը:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց նաև Հայր Պարետին՝ իր այցը Դետրոյտ այնքան լավ և բարձր մակարդակով կազմակերպելու համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ինչպես այլ վայրերում, այստեղ ևս Վեհափառը հանդիպում ունեցավ համայնքի երիտասարդության հետ, ՀԲԸՄ-ի Այնք Մանուկյան սրահում՝ հրավիրելով հայ երիտասարդությանը լծվել մեր սուրբ Հայրերի Եկեղեցու և Հայրենիքի վերաշինության գործին, լինելով արժանի ժառանգորդներն ու կրողները նրանց թողած սուրբ «շալակի»: Մենք մեր սեփական բազկի ուժով ու երիտասարդական ավյունով և քրտինքով է, որ պիտի կերտենք նոր արշալույս՝ հայության արշալույսը:

Այս հանդիպման ընթացքում երիտասարդների կողմից Վեհափառ Հայրապետին տրվեցին բազմաթիվ և բազմապիսի հարցեր օրվա հասարակական և բարոյական խնդիրների, Հայ Եկեղեցու միության և այլ հարցերի մասին, որոնց Նորին Սրբությունը պատասխանեց ջերմ և նրբանկատ կերպով պարզելով Հայ Եկեղեցու վերաբերմունքն ու տեսակետը այս հարցերի նկատմամբ: Վերջում Վեհափառ Հայրապետն ասաց. «Ես այժմ պիտի գնամ, բայց Աստուծո ողորմությամբ մենք նորից կհանդիպենք: Միևնույն ժամանակ ես յուրաքանչյուրիդ մի փոքրիկ գրքույկ կթողնեմ, որը պատրաստել եմ ձեզ համար, և որը ակնարկներ է պարունակում Հայ Եկեղեցու նոր դարաշրջանի մասին: Վերցրե՛ք և կարդացե՛ք այն՝ մտածելով նրա բովանդակության մասին»:

Հարյուրավոր երիտասարդներ, որ հավաքվել էին այս դահլիճում, խոր գոհունակությամբ և անջնջելի տպավորություններով տոգորվեցին՝ տեսնելով իրենց հոգևոր Հոր սիրազեղ վերաբերմունքը և լսելով նրա իմաստալից հորդորները իրենց կյանքի և գործի համար:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՉԻԿԱԳՈՅՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հունվարի 20-ին, ժամը 21.30-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Հայրապետը, ընկերակցությամբ Խաժակ Սրբազանի և գավազանակիր Արտակ աբեղայի, Մանուկյան ընտանիքի անձնական օդանավով Դետրոյտից ժամանեց Չիկագոյի Միդուել օդանավակայան: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել շրջանի

բոլոր հոգևորականները, ինչպես նաև ընդունելության հանձնախմբի անդամները: Դիմավորումը շարունակվեց «Ուեսթին» հյուրանոցում, որտեղ ջերմ ընդունելություն տեղի ունեցավ համայնքի ներկայացուցիչների հետ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՀԱՎԱՔ

Կիրակի, հունվարի 21-ին, ժամը 10.15-ին, Նորին Սրբությունը «Ուեսթին» հյուրանոցի «Ուելինգտոն Ռում» սրահում հանդիպեց համայնքի երիտասարդ ներկայացուցիչների հետ «Նոր դարաշրջան, Երիտասարդություն, Եկեղեցի և համայնք» թեմայի շուրջ զրուցելու համար:

Ավելի քան 300 երիտասարդ-երիտասարդուհիներ էին եկել հանդիպելու և լսելու իրենց Հայրապետի պատգամը: Վեհափառ Հայրապետի ներածական խոսքից հետո, հանդիպումը շարունակվեց մտքերի փոխանակմամբ: Տրված հարցերին Նորին Սրբությունը սպառիչ և հանգամանալից կերպով պատասխանեց: Հարցադրվող նյութերը հետևյալներն էին. Հայ Եկեղեցու միությունը, հնարավոր գործնական փոփոխություններ Եկեղեցուց ներս, Եկեղեցին համայնքտուն դարձնել, Եկեղեցու արարողական լեզուն, Եղեռնի մասին ուսուցում դպրոցներում, խառն ամուսնություններ և Եկեղեցու մոտեցումն ու վերաբերմունքը արդի կյանքի բարոյական հարցերի մասին և այլն:

Հստակ էր, թե երիտասարդությունն զգաց, որ Վեհափառը հոգու և մտքի համար բավարարություն տվող տեսակետներ հայտնեց վերոբերյալ նյութերի մասին: Նույն ժամանակաընթացքում, մինչ երիտասարդները դուրս էին եկել ընդմիջման, Վեհափառ Հայրապետը հանդիպեց ամենակրտսերների հետ, որոնցից շատերը իրենց ծնողների հետ էին եկել: Հայոց Հայրիկը բացատրեց նրանց իր պաշտոնը Հայ Եկեղեցում, խոսեց Էջմիածնի մասին, անդրադարձավ Հայ Եկեղեցու պատմությանը՝ սկզբից մինչև մեր օրերը: Երեխաները միաբերան արտասանեցին «Տերունական աղոթքը» և ապա մոտեցան Նորին Սրբությանը, ներկայացնելով իրենք իրենց, ու յուրաքանչյուրը Վեհափառ Հայրապետի կողմից Էջմիածնից բերված խաչ ստացավ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Նույն օրը, ժամը 14.15-ին, Սուրբ Պատարագի թափորը, որին մասնակցում էին քրիստոնեական հարանվանությունների 12 ներկայացուցիչներ՝ Հայ Եկեղեցու հոգևորականների հետ միասին, Վեհափառ Հայրապետին ուղեկցեց Չիկագոյի Երիցական եկեղեցի: Պատարագիչն էր Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի շուրջ 1100 հավատացյալների ներկայությամբ ոգեշնչող քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ Հովհաննու Ավետարանի «Ես եկի զի զկեանս ունիցին և առաւել ես ունիցին» բնաբանով: Իր խոսքը հյուսելով Հայ ժողովրդի ու Եկեղեցու պատմությամբ և վեր հանելով հատկանշական դրվագները, կանգ առավ 20-րդ դարի վրա՝ ներառնելով ներկա ժամանակները: Նորին Սրբությունը համայնքին հորդորեց ապրել կյանքի որակային արժեքներով. «Ինչպիսի՞ նպատակի ենք նվիրում յուրաքանչյուրս մեր կյանքը, բացի պարզապես գոյություն ունենալուց: Ինչպե՞ս ենք արժևորում այն»: Ներկայացնելով 20-րդ դարն ու արդի ժամանակը, Վեհափառ Հայրապետը հավատացյալներին հաղորդեց իր հաստատ համոզումներն ու հավատքը Հայրենիքի վերաշինության, Հայ Եկեղեցու ծաղկման ու բարգավաճման:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՑ ՀԱՄԱՑՆՔԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Ժամը 18.30-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց Վրաստանի դեսպան պրն. Թերո Ջափարիձեին և Վրաստանի Խորհրդարանի հայ անդամ պրն. Գիվի Շուգարովին, որը այցելել էր ԱՄՆ և Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի անունից եկել էր ողջունելու Վեհափառ Հայրապետին: Վեհափառն այնուհետև մուտք գործեց «Ուեսթին» հյուրանոցի շքեղ դահլիճ, որտեղ հայ համայնքի հոծ բազմություն էր հավաքված:

Նորին Սրբությունը խոսք ուղղեց բոլոր հավաքվածներին, որը հիմնականում նվիրված էր Հայաստանին և Ղարաբաղին: Վեհափառը հնի և նորի համեմատությամբ նկարագրեց կյանքի պայմանները, շատ հարմարությունների պակասը և Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից շրջափակման հետևանքները, այդուհանդերձ, ավելացնելով և նշելով մի շարքը հաջողություններ, որոնք Հայաստանը արձանագրել է ազատությունից և անկախությունից հետո: Վեհափառ Հայրապետը թվարկեց մի քանի ասպարեզներ, որոնցում Հայաստանը փորձում է լուծում գտնել այսօրվա դժվարությունների համար: Նորին Սրբությունը խոսեց տարբեր ոլորտներում կատարված հատուկ ծրագրերի մասին, հատկապես նրանց, որոնք կատարվում են «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմից: Վեհափառ Հայրապետը ոգևորեց և վստահություն ներշնչեց Հիմնադրամի գործունեության նկատմամբ՝ շեշտելով հատկապես Հայաստանից Ղարաբաղ կատարվող ճանապարհաշինարարությունը: Նա առանձնապես շեշտեց այս բոլորի մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բերելիք մեծ նպաստը հայ

ժողովրդի առողջ վերականգնման տեսանկյունից: «Հայաստանի նոր պայմանների ներքո մեր Սուրբ Եկեղեցին կոչվել է նոր դերակատարության», ասաց նա: «Մեր բոլոր ուժերը միասնաբար լծելու ենք մեր Եկեղեցու գործունեության վերաշխուժացմանը ժողովրդի առօրյա կյանքում, հատկապես նոր սերունդի կյանքում»:

Հանդիպումից հետո Նորին Սրբությունն ընդունեց բոլոր նրանց, ովքեր ցանկանում էին իրենց հարգանքը մատուցել Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 22-ին, երկուշաբթի օրը, միջօրեին, Նորին Սրբությունը ճաշեց քրիստոնեական 11 հարանվանությունների ներկայացուցիչների հետ, որոնց թվում էին Չիկագոյի Կաթոլիկ Արքեպիսկոպոսը, Կարդինալ Ջոզեֆ Բերնարդինը և Սերբ Օրթոդոքս Եկեղեցու Քրիստոֆեր Միտրոպոլիտը, Episկոպոսական, Լութերական, Միսիոներական Սինոդի, Երիցական, Մեթոդիստ, Հնդիկ Մալաբար, Եթովպական, Ղպտի և Հայ Համայնքային Եկեղեցիների առաջնորդները: Կիսապաշտոնական մթնոլորտում տեղի ունեցավ գաղափարների փոխանակում Վեհափառ Հայրապետի և ներկաների միջև: Նորին Սրբությունը խոսեց անկախ Հայաստանում Հայ Եկեղեցու ներկա վիճակի, Հայաստանի Սահմանադրության և հեռանկարների մասին՝ հաշվի առնելով ազատ գործունեության պայմանների վերստեղծումը: Վեհափառն ասաց, որ Հայաստանում պաշտոնապես գրանցված են Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիները, այնուհետև նշեց տարբեր քրիստոնեական և ոչ քրիստոնեական աղանդների ներխուժումը Հայաստան՝ շեշտելով, թե Եկեղեցին պետք է հոգորանա, որպեսզի ամրանա ժողովրդի հավատքը: Ապա Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հոգևոր Ճեմարանին, Մայր Աթոռի տպարանին և տպագրությանը, ընդգծեց Աստվածաշնչի ավելի լայն տարածումը Հայաստանում: Այնուհետև Նորին Սրբությունը խոսեց Հայաստանի տարբեր շրջաններ և ներքին Սփյուռքի հայ համայնքներ կատարած իր այցելությունների մասին՝ անդրադառնալով նրանց առջև ծառացած խնդիրներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՉԻԿԱԳՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԵՏ

Երկուշաբթի, քրիստոնեական հարանվանությունների հետ տեղի ունեցած հանդիպումից հետո, Վեհափառ Հայրապետը Չիկագոյի քաղաքապետարանում տեսակցեց քաղաքապետ Ռիչարդ Դալիի հետ: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը նախ շնորհակալություն հայտնեց քաղաքապետին՝ իր քաղաքում հայության

այսքան ջերմ ընդունելության համար, ապա ներկայացրեց Հայաստանի ներկա իրավիճակը իր բոլոր դժվարություններով և հաջողություններով, ընդգծեց համագործակցության կարևորությունը, ինչպես նաև շեշտեց Հայ Եկեղեցու դերն ու գործունեությունը թե՛ Մայր Հայաստանում և թե՛ նրանից դուրս գտնվող աշխարհասփյուռ հայության կյանքում:

Հանդիպման վերջում տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում, որպես առհավատչյա փոխադարձ հարգանքի և շնորհակալության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՀԱՅ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՉԻԿԱԳՈՅԻ ԿԱՐԳԱԴԻՐ ՀԱՆՋՆԱԽՄԲԻ ՀԵՏ

Երեկոյան «Ռենսթին» հյուրանոցում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, պաշտոնական ճաշկերույթ տրվեց, որին ներկա էին 70 խնամակալներ, շրջանի հայ հոգևորականությունը և ծխական խորհրդի անդամները: Ներկա հյուրերի թվում էին Վրաստանի իշխանության ներկայացուցիչները: Այստեղ արտասանվեցին բազմաթիվ անկեղծ և սրտալից խոսքեր՝ ի նշան Մայր Աթոռի և նրա Գահակալի հանդեպ տածած հավատարմության և հարգանքի ու սիրո: Ընդունելության հանձնախմբի կողմից ջերմագին խոսք արտասանեց Դոկտ. Բաֆի Հովհաննիսյանը, որ Կարգադիր հանձնախմբի ատենապետն էր, ինչպես նաև Վեհափառի երկար տարիների անձնական բարեկամը:

Վերջում ներկաներին իր հայրական հորդորն ու պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը, խոսքի առանցք ունենալով Մայր Հայրենիքի անկախությունն ու ազատությունը և այս պայմաններում Սուրբ Էջմիածնի նորոգության շունչն ու պատասխանատվության ու գործունեության առավել մեծացումը: Վերջում Վեհափառը իր ջերմ ու հայրական շնորհակալությունները հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցել և կազմակերպել էին Ամենայն Հայոց Հայրապետի այս բարձրագույն մակարդակի ընդունելությունը:

ՄԵԿՆՈՒՄ ՉԻԿԱԳՈՅԻՑ

Շորեքշաբթի, հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետն ավարտելով Ամերիկայի Արևելյան թեմի հայ հավատացյալներին տված պցելությունը, Չիկագոյից մեկնեց Տորոնտո (Կանադա)՝ այնտեղ ևս իր հայրական պատգամներն ու օրհնությունը, Մայր Հայրենիքի ազատության շունչը և Սուրբ Էջմիածնի ներկայությունը փոխանցելու տեղի հայության կարոտակեզ զավակներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Հյուսիսային Ամերիկայի հայ գաղութներին տված իր անդրանիկ հովվապետական այցելության ծիրի մեջ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ը հունվարի 24-ից փետրվարի 1-ը իր օրհնաբեր և շնորհաբաշխ այցելությունը բերեց նաև կանադահայ համայնքին:

ՏՈՐՈՆՏՈ

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ՎԵՀԱՓԱՌԸ ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը չորեքշաբթի օրը, հունվարի 24-ի հետմիջօրեին, ժամանեց Տորոնտոյի «Փիրսրն» միջազգային օդանավակայան, որտեղ դիմավորվեց եկեղեցական և աշխարհական անձանց և պաշտոնական մարմինների ներկայացուցիչների կողմից: Վեհափառ Հորն ուղեկցում էին Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և գավազանակիր Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը:

Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Կանադահայոց թեմի Առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Կիլիկյան Աթոռի հովանավորությունը վայելող թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, Վեհափառի Տորոնտո այցելության կարգադիր

հանձնախմբի ատենապետ պարոն Ժաք Ստեփանյանը, Կանադայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գառնիկ Նանագուլյանը, կանադահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ պարոն Թագվոր Հոբեյանը, ինչպես և Տորոնտոյի, Մոնրեալի, Համիլթնի, Սենթ Ջեթրինզի և Ջեմբրիջի հոգևոր հայրերը և պաշտոնական այլ անձինք:

Օդանավակայանի հյուրասենյակում Վեհափառ Հայրապետին ընդունելության ընթացքում բարի գալստյան խոսք ասաց Հովնան սրբազանը:

Այնուհետև ներկաներին ողջունեց Վեհափառ Հայրապետը:

Վեհափառ Հայրապետի խոսքին հաջորդեց աղ ու հացի ավանդական օրհնությունը, որը Նորին Սրբությանը մատուցեցին ՀԲԸՄ-ի «Զարուկյան» վարժարանի սաները:

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 7.30-ին, Նորին Սրբությունը հանդիսավորությամբ, «Հրաշափառ»-ի տպավորիչ արարողությամբ մուտք գործեց Ս. Երրորդություն եկեղեցի, որի մուտքի մոտ Վեհափառ Հորը բարի գալուստ մաղթեցին «Զարուկյան» վարժարանի աշակերտները: Կանոնական աղոթքից ու եկեղեցական արարողությունից հետո, բարի գալուստի սրտառուչ և մեծարանքի խոսք արտասանեց առաջնորդ Հովնան սրբազանը.

«Վեհափառ Տեր,

Հովվապետական Ձեր ջնորհաբեր այցելության երկրորդ հանգրվանին, ի Կանադա և այս պահուն Տորոնտո քաղաքը, Ձերդ Սրբությանը կողջունենք ուրախ սրտով ու այն հավատքով, որ Ձեր անձին մեջեն պիտի տեսնենք նոր Հայաստանը, որ անվերջ կքալե դեպի հավիտենականություն: Ավելին՝ Նոր Էջմիածինը, որ հարատամ կնորոգե ու կշարժե հոգիները հայոց, զմեզ միավորելով ի Քրիստոս:

Սիրելի Վեհափառ, Ձեր անձին միջոցավ արտահայտված ժամանակին հրամայականն է՝ տեր կանգնիլ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիին, որուն ինքնությունը բնորոշող ու տեսիլքի հրավիրող ոգեղեն ներկայությունը Սուրբ Էջմիածինն է, այն Էջմիածինը, որ ժամանակին-անժամանակին մեջ ծնունդ առնող յուրաքանչյուր հայու հոգիին մեջ կծնի ու պիտի ծնի որպես սնուցողը մեր գոյութենականության:

Վեհափառ Տեր, որքան երախտապարտ ենք, որ Դուք հանձն առիք այս երկար ու հոգնեցուցիչ հովվապետական այցելությունը: Մենք քաջ գիտենք, որ Ձեր բոցաշունչ խոսքերը պիտի ցնցեն շատերը ու արթնցնեն զանոնք իրենց թմբիրեն, որպեսզիի հոգիի աչքերով տեսնեն ու զգան Սուրբ Էջմիածնի սրտին վրա բաբախող մեր հայրերու երկիրը՝ նորանկախացյալ Հայաստանը:

Վերջերս Դուք հաճախ կհիշեք այն պատկերը, որ եթե 20-րդ դարը ծնավ յաթաղանի լուծին տակ, ապա 21-րդ դարու սեմին մեր Եկեղեցին ու Հայրենիքը Հարության տեսիլքով պիտի ապրին որպես մեկ ամբողջություն:

Սիրելի հավատակիցներ, հայրենակիցներ, պարտ ենք կարդալ ու սերտել Վեհափառի խոսքերը, որոնց մեջ կը տեսնենք ժամանակի ոգին:

Վեհափառ Տեր, որդիաբար կխոնարհինք Ձեր առաջ և կհայցենք Ձերդ Սրբության օրհնությունները, որպեսզի Ձեր խոսքերով մկրտեք մեր ժողովուրդը նոր ժամանակի ոգիով, նորանկախացյալ Հայրենիքի շունչով և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, որուն՝ դեպի հավիտենականություն երկարող ողողանջներուն մեջ Դուք կտեսնեք վաղվան արշալույսը և դեպի այդ արշալույսը կկանչեք ամբողջ ազգը հայոց:

Թող հավետ ապրի Մայր Հայաստանը: Ձեր այցը արձագանքն է Սուրբ Էջմիածնի: Ձեր խոսքը ճառագայթումն է Էջմիածնի հավատքի օջախին: Այս նվիրական պահը Ձեր մեջ կմիավորե բոլորս, որպեսզի հարազատորեն կապված մնանք մեր հայրերու երկրին և Սուրբ Էջմիածինը դարձնենք մեր հոգիներու լուսավորության ամենատևական, ամենասուրբ վայրը, ուր հայ քրիստոնյան և Աստված կհանդիպին՝ Լուսավորչի տեսիլքին մեջ:

Բարի եկաք, Վեհափառ, հեղ մը ևս Լուսավորչի կանթեղեն լույս իջեցուցեք մեր հոգիներու մեջ»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱԾՐԱՊԵՏԻՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱԾՔԼ ՓԻՐՋԸ

Այնուհետև խոսք տրվեց նաև Կանադայի Անգլիկան Եկեղեցու պետ Մայքլ Փիրզ արքեպիսկոպոսին, որն իր հարգանքն ու բարեմաղթությունները հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ բարձր գնահատելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձն ու կարողությունները, հատկապես եկեղեցական ու միջեկեղեցական մարզերի մեջ:

Անգլիկան արքեպիսկոպոսի խոսքից հետո ներկաներին հայերեն և անգլերեն լեզուներով իր հայրական պատգամն

ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Վերջում Վեհափառ Հայրապետն ու Անգլիկան Եկեղեցու առաջնորդ եպիսկոպոսը փոխանակեցին հուշանվերներ:

«Հրաշափառի» արարողությունից և Վեհափառ Հայրապետի պատգամից հետո Սուրբ Երրորդություն եկեղեցու «Մակարոս Արթինյան» սրահում տեղի ունեցավ Վեհափառ Հոր հանդիպումը Տորոնտոյի, Միսիսագայի, Համիլթնի, Քեմբրիջի և Սենթ Քեթրինզի ազգային-եկեղեցական կառույցները ներկայացնող վարչական մարմինների ներկայացուցիչների հետ, որտեղ խոսվեց հայ ժողովրդի ներկա կացության մասին Հայաստանի, Արցախի և արտասահմանի ողջ տարածքում:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆԳԼԻԿԱՆ ԵՎ ՀՈՒՑՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԵՐՆՍ ՖԻՆԼԻԻ ՀԵՏ

Հունվարի 25-ի առավոտյան Նորին Սրբությունը հյուրընկալվեց Անգլիկան Եկեղեցու Առաջնորդ Թերնս Ֆինլի եպիսկոպոսի կողմից: Հյուրընկալություն էր կազմակերպել նաև Հունաց Օրթոդոքս Եկեղեցու պետ Սոթիրոս եպիսկոպոսը, որի ընթացքում քննարկվեցին միջեկե-

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍՈԹԻՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄՈՏ

ղեցական կարևոր խնդիրներ: Հանդիպման վերջում Սոթիրոս եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին ոսկեզօծ շրջանակով մի պանակ նվիրեց:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՕՆԹԱՐԻՈ ՆԱՀԱՆԳԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հետմիջօրեի ժամը 15.00-ին Նորին Սրբությանն ի պատիվ հյուրասիրություն էր կազմակերպվել Օնթարիո նահանգի խորհրդարանում, որտեղ պատշաճ մակարդակով կեսժամյա պաշտոնական

հանդիպում տեղի ունեցավ Օնթարիոյի նահանգի կառավարիչ «Lieutenant Governor» Հենրի Ջաքմանի հետ, որին ներկա էին նաև պետական ու քաղաքական դեմքեր:

ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն երեկոյան ժամը 19.30-ին Վեհափառ Հայրապետը մեծաշուք թափորով, «Հրաշափառ»-ի հնչյունների ներքո մուտք գործեց Ս. Երրորդություն եկեղեցի՝ մասնակցելու Սուրբ և Անմահ Պատարագին, որտեղ ժողովրդի խուռներամ բազմությունը անհամբերությամբ սպասում էր Վեհի հետ հանդիպմանն ու հաղորդակցությանը: Օրվա պատարագիչն էր Կանադահայոց Առաջնորդ Հովնան արքեպիսկոպոսը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը, բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, ասաց. «Վեհափառ Տեր, այս երեկո մեր բոլորին հոգիները կմիախառնվին Էջմիածնաբեր Ձեր օրհնություններով: Աղոթքի ու գոհաբանական մաղթանքի այս պահուն Ձեր անձին մեջեն կտեսնենք Նոր Էջմիածինը, որուն ձայնը Ձեր սրտին մեջ առած՝ եկած եք Սուրբ Էջմիածնի ճառագայթով վերապրեցնելու աշխարհով տարածված Ձեր հարազատ զավակները:

*Ավելի քան չորս տասնամյակներ Ձեր անձը խոնարհեցնելով Աստուծո խորանին ու մեր հայրերու հավատքին առջև, Դուք այսօր, որպես ազգի Վեհափառ Հայրապետը, եկած եք ժամանակի ոգին բաշխելու մեր ազգի ու մեր Եկեղեցվո զավակներուն, որպեսզի մեր հայրերեն մեզի որպես հոգևոր ժառանգություն ու ավանդություն տրված Հայց. Եկեղեցին կանգուն ու կենսունակ դարձնող բջիջի մը վերածենք մեր կյանքը: Ինչքան տեղին է Ձեր խոսքը՝ ուղղված մեր օրերու հայ քրիստոնյային. «**Մեր Եկեղեցին է նաև շաղախը ազգային միության և սնուցիչ ամրապնդիչ ուժը մեր զորությունականության...**»:*

Վեհափառ Տեր, Ձեր գալուստը թող բարի լինի Կանադայի այս օրհնյալ հողի վրա: Տարածեցեք Ձեր օրհնությունները մեր Սուրբ Եկեղեցվո բոլոր զավակներուն վրա անխտիր: Շաղախեցեք բոլորին Քրիստոսի սիրով ու հայրենյաց շունչով այնպես, որ այս նույն ժողովուրդը դառնա նորին ծնունդն ու մարմնավորողը՝ ճանապարհ դեպի Սուրբ Էջմիածին տեսլականով:

Թող Ձեր խոսքն ըլլա այնպես, ինչպես մշակին խոփին խրումը հողին մեջ, որպեսզի ընդարմանա արտը և պարարտ բերք տա: Փառք Կուտանք Աստուծո այս օրհնաբեր այցելության համար և հանուն թեմի հոգևորականաց, Թեմական Խորհուրդի, Թեմական պատգամավորներուն, Մխական բոլոր մարմիններուն ու հավատացյալներուն Ձերդ Սրբության կհայտնենք որդիական մեր ջերմ սերն ու հավատարմությունը և մանավանդ զորակցությունը հայրենանվեր ու եկեղեցաշեն Ձեր բոլոր ծրագրերու իրականացման ճանապարհին»:

Ապա Սրբազան Հայրը խորան հրավիրեց Հույն Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Սոթիրոս արքեպիսկոպոսին: Սրբազան արքեպիսկոպոսը իր և իր համայնքի անունից բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, ապա անդրադարձավ հայ ժողովրդի պատմությանը, ողբերգություններին, Մեծ Եղեռնին, ինչպես նաև Հայաստանի անկախությանը և արտասահմանում ապրող հայության տագնապներին և հայ մնալու գոյապայքարին, հայ և հույն ազգերի ու Եկեղեցիների եղբայրակցությանը՝ իր հրճվանքն ու ուրախությունը հայտնելով Գարեգին Վեհափառի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրության առթիվ՝ գնահատելով Վեհափառի կարողությունները և իր դրական տպավորությունը 1983 թ., Վանկուվերում Վեհափառի ատենապետությամբ գումարված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 6-րդ ընդհանուր համագումարից, որի փոխատենապետն էր Վեհափառը:

Այս բոլոր խոսքերից ու բարեմաղթանքներից հետո, քարոզ խոսեց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը խոսքի սկզբում գոհություն և փառք վերառաքեց Ամենակալ և Ամենախնամ Աստծուն՝ այս հոգեղից պահը պարգևելու համար: Ապա գնահատանքի խոսք ասաց կանադահայոց ժրաջան առաջնորդ Հովնան սրբազանին և, դառնալով ժողովրդին, պատգամեց՝ ապրել միասնության ու միության եղբայրական հոգով: Մեր իրականության ու ժամանակների թելադրական հրամայականն է սա, որովհետև աշխարհում նկատվող հոգևոր շարժին ու նորոգության շունչին հայ ժողովուրդը չի կարող անմասն և անհաղորդ մնալ: Մեր Հայրենիքը այսօր թեև դժվարությունների և ծանր օրերի միջով է անցնում, բայց ամեն գնով կերտում է իր ազատ ու անկախ ապրելու բնական կյանքը՝ Նոր կյանքի և Նոր Հայրենիքի ու Եկեղեցու տեսլականով:

ՔՈՒԾՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նորին Սրբությունը անդրադարձավ մարդու կյանքի բաղկացուցիչ ազդակներին և իմաստին՝ ազատության, եղբայրասիրության, ազգասիրության և որպես մարդ ապրելու կյանքի համար նպատակ ունենալու գաղափարին՝ կոչ ուղղելով զորավիգ կանգնել դարերով անկախություն և ազատություն կորցնելուց հետո, հայ ժողովրդի քաջարի զավակների կյանքի և արյան գնով ազատություն և անկախություն նվաճած Հայաստանի հզորացմանը և Հայց. Եկեղեցու՝ Սուրբ Էջմիածնի լույսով հայ ժողովրդի զավակների հոգիները լուսավորելու աշխատանքին:

Խոսքի երկրորդ բաժնում Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով քույր եկեղեցիների համագործակցության անհրաժեշտությանը, հայտնեց, որ Հայց. Եկեղեցին չի կարող անտարբեր մնալ այս կարևոր իրադարձության նկատմամբ և ամեն գնով սատար ու գործակից պիտի լինի այդ առաքելության ընթացքին:

Հավարտ Պատարագի Սուրբ Երրորդություն եկեղեցու «Արթինյան» սրահում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն:

ՕՐ ԵՐԿՈՐԴ

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԶԱՐՈՒԿՅԱՆ» ԵՎ «ՍՈՒՐԲ ԽԱՉ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Ուրբաթ օրը՝ հունվար 26-ի մեծագույն մասը տրամադրված էր դպրոցականներին և երիտասարդությանը: Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց ՀԲԸՄ-ի «Զարուկյան» և «Սուրբ Խաչ» ազգային վարժարաններ, որտեղ դիմավորվեց դպրոցների պատասխանատուների, ուսուցչական կազմի և աշակերտության կողմից: Աշակերտները գեղեցիկ հայտագրով ներկայացան և յուրատեսակ բարի գալուստ մաղթեցին Հայոց Հայրիկին, որի հետ հանդիպումը դեռևս երկար ու անջինջ պիտի մնա նրանց մանկական սրտերի և հոգիների մեջ, որպես առաջին հոգևոր և ազգային սերմնացանումն ու ջրտուքը իրենց ապագա գիտակցական կյանքի համար: Վեհափառն իրեն հատուկ մտերմական անմիջականությամբ բառացիորեն գերեց մանուկներին, որոնց հիշողության ծալքերում այս հանդիպումն անկասկած պիտի դրոշմվի իբրև ազգային ինքնությունը հաստատող հուշ ու դրանից բխող գործելու նախանձախնդրություն:

Վեհափառ Հայրապետն իր սրտաբուխ և մանուկներին հասկանալի լեզվով պատգամեց այսօրվանից իսկ հասկանալ և արժևորել Մայր Եկեղեցու և Հայրենիքի դերն ու նշանակությունը: Այս երկու սրբությունները տարիք ու տարածություն չեն ճանաչում, այլ, դուրս գալով այդ շրջանակից, տարածվում են բոլորի վրա անխտիր՝ իրենց մեջ ներառնելով և պարփակելով յուրաքանչյուր հոգու, որ կոչված է հայ լինելու:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, «ՀԱՑ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ ՀՕՄ-Ի ԱԶԳԱՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎԵՀԱՓԱՌԸ Ս. ԽԱՉ ԱԶԳԱՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 15.00-ին, Վեհափառ Հայրապետն ու իր շքախումբը այցելեցին Սուրբ Աստվածածին եկեղեցի, «Հայ Կենտրոն» և ՀՕՄ-ի ամենօրյա վարժարան:

Նորին Սրբությանը եկեղեցու մուտքին դիմավորեցին Կանադայի և Միացյալ Նահանգների Արևելյան շրջանի Կիլիկյան թեմի Առաջնորդ Մեսրոպ արքեպս. Աշճյանը, եկեղեցու հովիվ Շահե ծ. վրդ. Փանոսյանը, թեմական և ծխական խորհուրդների ներկայացուցիչները: Ապա, ՀՕՄ-ի ամենօրյա վարժարանից հայկական տարազներով երկու աշակերտուհիների մատուցած աղ ու հացը օրհնելուց հետո, Վեհափառ Հայրապետը անցավ իրեն ի պատիվ կանգնած ՀԲԸՄ-ի սկաուտների և ՀՀԴ Կանադայի երիտասարդական միության «Սիմոն Զավարյան» մասնաճյուղի անդամների շարքերի միջով և «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի եկեղեցու դասը:

Եկեղեցում կատարված կանոնական աղոթքից և առ Աստված գոհաբանական մաղթանքից հետո, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով առաջնորդվեց «Հայ Կենտրոնի» սրահ, ուր արդեն իսկ հավաքված էին ՀՕՄ-ի ամենօրյա վարժարանի աշակերտները և բարեպաշտ ժողովուրդը, որոնց թիվը հասնում էր շուրջ 1000 հոգու:

Սրահում Վեհափառին ուղղված բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես եկան Սուրբ Աստվածածին եկեղեցու հովիվ Շահե ծ. վրդապետը, Հովնան և Մեսրոպ սրբազանները:

ՀՕՄ-ի ամենօրյա վարժարանի, «Հայ Կենտրոն»-ում գործող բոլոր միությունների և կազմակերպությունների անունից խոսք ասաց թեմի Ազգային վարչության անդամ Պրն. Հարություն Շիթիլյանը:

Այս առիթով «Հայ Կենտրոնի» կողմից Պրն. Հակոբ Ջանբազյանը Վեհափառին նվիրեց կանադացի արվեստագետ Բեն Հենրիի արժեքավոր քանդակներից մեկը:

Այնուհետև, այս հուզիչ և սրտակից մթնոլորտում, ներկաներին իր հայրական պատգամն ու օրհնությունը տվեց Վեհափառ Հայրապետը և որում մասնավորապես անդրադարձավ «Հայ Կենտրոնի», հայ դպրոցի և Հայ Եկեղեցու ծրագրերին ու շինությանը՝ հիշատակելով նաև իր ներդրումը այս ափերի վրա որպես հայ գոյատևելու երեք բերդերի կառուցման գործում: Ապա իր անխառն զգացումները հայտնեց կապված Տորոնտոյի հայ գաղութի կազմակերպման աշխատանքների հետ:

Վեհափառը անդրադարձավ նաև իր եկեղեցական 44 տարիների կյանքի ուղուն և, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, այսօր նոր իրականության առջև կանգնած կոչ արեց՝ անմնացորդ լծվել վերոհիշյալ երեք մարզերում անշահախնդիր ծառայության:

Վերջում Վեհափառ Հայրապետը դիտեց վարժարանների միջանցքներում աշակերտների ուսումնական աշխատանքների նմուշները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Երեկոյան ժամը 18.00-ին Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ Տորոնտոյի հայ երիտասարդության հետ: Շուրջ 400 երիտասարդներ եկել էին ունկընդիր լինելու Նորին Սրբության հորդորներին ու պատգամներին, որոնցում մասնավորապես շեշտվեց այսօրվա դժվար կողմնորոշվելիք ժամանակաշրջանում երիտասարդության, մասնավորապես հայ երիտասարդության դերն ու նշանակությունը, մերժումը անցողիկ, չափազանցված վայելքների ու դյուրահաճ կյանքի և անցումը հոգեկան ու հավերժակերտ առաքելության: Ընթանալ կյանքի ու տվյալ միջավայրի թելադրած ճիշտ ուղիով, որդեգրել առաջադեմ, առողջ գաղափարներ, գործոն մասնակցություն բերել կենսական կարևորություն ներկայացնող բնագավառներում, բայց միաժամանակ չկորցնել ազգային դեմքը և հպարտությամբ ու արժանապատվությամբ պահպանել ինքնությունը, — այս է մերօրյա երիտասարդի ընթանալիք ճանապարհը: Հանդիպման վերջում եղան նաև հարցումներ, որոնց սպառիչ կերպով պատասխաններ տվեց Վեհափառ Հայրապետը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹ «ՊԱՊԱՅԱՆ» ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան ժամը 20.00-ին ավելի քան 500 հոգի էր հավաքվել ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկյան կենտրոնի «Լևոն և Փիրուզ Պապայան» հանդիսասրահում՝ մասնակցելու համար Գարեգին Ա Վեհափառին ի պատիվ կազմակերպած ճաշկերույթին:

Կանադայի և Հայաստանի Հանրապետության պետական օրհներգերի և Հայրապետական մաղթանքի կատարումից հետո, Վեհափառ Հայրապետի բացման աղոթքով սկսվեց ճաշկերույթի պաշտոնական մասը:

Հանդիսավար Պրն. Ժակ Ստեփանյանը հանուն Կանադահայոց Առաջնորդ Սրբազանի, թեմական խորհրդի ու կազմակերպիչ մարմնի բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին՝ ասելով. «Վեհափառ Տեր, մեր Հայրենիքի պատմական անկախությամբ ու Ձերդ Սրբության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գահակալությամբ, համայն հայությունը ինքզինք գտավ նոր իրականություններու առջև: Դուք անկասկած Լուսավորչի անմար կանթեղով պիտի առաջնորդեք մեր Սուրբ Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը անցյալի դժվար ու հերոսական պայմաններեն դեպի 21-րդ դարու լուսավոր ու պայծառ ապագան...»:

Ապա ելույթ ունեցան թեմական խորհրդի ատենապետ Թագվոր Հոբեյանը, ՀՀ Կանադայի լիազոր դեսպան Պրն. Գառնիկ Նանագուլյանը, Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդ Խաժակ Սրբազանը, Կանադայի և Ամերիկայի Արևելյան Կիլիկյան Աթոռի հովանավորությունը վայելող թեմի Առաջնորդ Մեսրոպ Սրբազանը, Կանադայի Հայոց Առաջնորդ Հովնան Սրբազանը: Ելույթներով հանդես եկող թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ բանախոսները մեկ անգամ ևս մատնանշեցին անկախություն ձեռք բերած Հայրենիքում Հայ Եկեղեցու ունեցած ներկայիս բացառիկ իրավիճակը՝ շեշտելով այդ պայմանները առավելագույն չափով Եկեղեցու պայծառացմանը ծառայեցնելու անհրաժեշտությունը:

Վերջում Հովնան Սրբազանը, շնորհակալություն հայտնելով Վեհափառի այցելության հետ առնչված աշխատանքների մասնակիցներին, թվեց նաև այն ազգայիններին, ովքեր այս առթիվ նվիրատվություններ էին կատարել՝ Էդմոնտոնից Տեր և Տիկին Քրիս Չաքմաքչյանները, Պրնք. Վահե և Արամ Իշնարները, Տեր և Տիկին Հակոբ Քեսթեքյանները, Տեր և Տիկին Պերճ Սվազլյանները և ուրիշներ:

Ապա, ներկայացնելով Վեհափառ Հայրապետին, Սրբազան Հայրը հրավիրեց Նորին Սրբությանը տալ իր հայրական պատգամը ներկա ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը նախ իր շնորհակալությունը հայտնեց այսքան ջերմ և հոգեբուխ ընդունելության համար: Այնուհետև շեշտեց

ՎԵՀԱՓԱՌԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՀԱՅԿ ՍԵԼՅԱՆԻՆ

ներկա հանգրվանի կարևորությունը, որ մեզ վրա դարերի խորքից եկած մեր ժառանգության պահպանման, նորանկախ Հայրենիքի բարգավաճման, Սուրբ Էջմիածնի փառավորման և այս բոլորը Սփյուռքից Հայրենիք միասնականության ճանապարհով առավել ևս առաջ տանելու պատասխանատվությանն է կոչում. «Ինչ որ կհավատանք՝ ապրինք և գործով արտահայտենք: Քանի կհավատանք, որ մեկ է մեր Եկեղեցին, մեկ է մեր ազգը, մեկ է մեր Հայրենիքը, ուրեմն ըլլանք մեկ և գործենք մեկությամբ», եզրափակեց Վեհափառը:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից Պրն. Հայկ Սելյանը պարգևատրվեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով, որպես վարձատրություն երկար տարիներ Եկեղեցուն մատուցած ծառայությունների համար:

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՇԱԲԱԹՕՐՅԱ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Շաբաթ, հունվար 27-ի առավոտյան ժամը 9.30-ին, Սուրբ Երրորդություն եկեղեցում Գարեգին Ա Հայրապետը հանդիպում ունեցավ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ շաբաթօրյա և Հայ Կաթոլիկ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիրակնօրյա վարժարանների աշակերտության և ուսուցչական կազմերի հետ:

Վեհափառ Հայրապետը, գնահատելով կիրակնօրյա դպրոցի և

շաբաթօրյա վարժարանների աշխատանքը, կարևորեց նրանց առաքելությունը: Վեհափառը բոլոր աշակերտներին թելադրեց սիրել մայրենի լեզուն, Հայաստանը և Հայ Եկեղեցին: Նա շեշտեց, թե «ամեն երկիր բանակ ունի իր երկրի սահմանները պաշտպանելու համար, իսկ մենք 36 հոգիանոց մի բանակ ունենք, որը պաշտպանում է հայի գոյությունը: Այդ բանակը Հայոց Այբուբենն է»: Պատվիրեց այդ տառերով պաշտպանել և պատերազմել ձուլման ու այլասերման թշնամու դեմ:

Նույնը օրը, կեսօրին, ավարտելով Տորոնտո այցելությունը և Մոնրեալ մեկնելուց առաջ, Վեհափառ Հայրապետը «Հորիզոն» շաբաթաթերթին տված հարցազրույցում ասաց. «Անհունորեն երջանիկ կզգամ, երբ կտեսնեմ մեր ժողովուրդին սիրալիր վերաբերումը Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս այցելության:

Խորապես ինքզինքս կզգամ զորացած մեր ժողովուրդի հետզհետե աճող այն կամքովը, որով ինքզինքը կուզե արտահայտել այլևս գործնապես իբրև մեկ Եկեղեցի, իբրև մեկ Հայրենիք և իբրև մեկ ազգ: Ապրի՛ այս ժողովուրդը, որ այսպես գիտե ուռճանալ միության, զորակցության, փոխադարձ եղբայրության զգացումներով և Մայր Հայրենիքը՝ ազատ ու անկախ Հայաստանը, և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը այլևս ձերբազատված որևէ մեկ տեսակ օտար ազդեցութենե՝ կսպասե իր ա՛յս ժողովուրդին և այդ ժողովուրդին ծառայելու մեջ կտեսնե իր գերագույն արժեքն ու շահը»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Շաբաթ օրը, հունվարի 27-ին, Տորոնտոյից Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Հայրապետը, հետմիջօրեի ժամը 13.30-ին, ժամանեց Մոնրեալի «Դորվալ» օդանավակայան:

Օդանավի մոտ Վեհափառ Հորը բարի գալուստ մաղթեցին Քվեբեքի կառավարության Դիվանագիտական Խորհրդի գլխավոր պատասխանատու տիար ժան Ժյուլ Գիլպոն, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Զարեհ քահանա Զարգարյանը, Հայրապետական այցելության Մոնրեալի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ, դոկտոր Հարություն Արզումանյանը, ինչպես նաև թեմական խորհրդի անդամներ և պատգամավորներ:

Հակառակ աննպաստ եղանակին, հավատացյալ ժողովրդի խուռներամ բազմությունը փութացել էր դիմավորելու իր Հայրապետին: Հայկական «Արմեն-Քվեբեք» և «Սուրբ Նարեկ» վարժարանների սաները հայկական տարազներով ավանդական աղ ու հաց մատուցեցին Վեհափառ Հայրապետին, որն օրհնելուց հետո, որոտ-

ընդոստ ծափողջույնների ուղեկցությամբ նա առաջնորդվեց օդանավակայանի հատուկ հյուրերի սպասարկության սրահը:

Այստեղ առաջնորդ Հովնան արքեպիսկոպոսի՝ Մոնրեալ բարիգալստյան խոսքից հետո, Նորին Սրբությունը իր գոհունակությունը հայտնեց կրկին անգամ Մոնրեալ այցելելու առիթով, բայց այս անգամ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ապա ֆրանսերեն տպավորիչ ելույթով շնորհակալություն հայտնեց Քվեբեքի և Կանադայի կառավարություններին, ինչպես նաև քաղաքապետարանին՝ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած ջերմ ընդունելության համար:

Ի պատասխան Պրն. Գիլբոն, նահանգային կառավարության անունից, բարի գալուստ մաղթեց Վեհին՝ հայտնելով, թե հայոց հոգևոր պետերի այցելությունները մեծ պատիվ և ուրախ առիթ են ու ողջունելի է իրենց համար:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, որտեղ բնության սաստիկ փոթորկումն անգամ տեղի էր տվել հայ հոգու առ իր Հայրապետն ունեցած անխառն սիրո ջերմության առջև և ամբողջ եկեղեցին լեփ-լեցուն էր ժողովրդի բազմությամբ: Այն կարծես թե օտարակենցաղ իրականության այլասերման ու ձուլման «ջրհեղեղի» մեջ մի նոր Նոյյան Տապան էր դարձել, ուր Հայրապետի խոսքին ու պատգամին կարոտ բազում հոգիներ էին հավաքվել երկրի զանազան կողմերից:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ լուսավորյալ եկեղեցին ևս մեկ անգամ լուսավառվեց Լուսավորչի լուսատեսիլ արժանահաջորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մուտքով:

Կանոնական աղոթքից հետո, Առաջնորդ Հովնան Սրբազանը, լինելով ժողովրդի ակնկալիքների և ապրումների թարգմանը, իր ողջույնի խոսքում ասաց. «...Դուք եկաք բերելու համար ձայնը հայրենյաց և նոր կրակ տալու մեր սիրտերուն մեջ անթեղված հավատքի ձայնին: Ձեր օրհնաբեր ներկայությունը մեզ կվերամիավորե հավիտենական Սուրբ Էջմիածնի հովանիին տակ: Դուք կհանդիսանաք նոր ժամանակի ձայնը, նորանկախացյալ մեր երկրի ղողանջն ու առաքելականության ոգին՝ Սուրբ Էջմիածինը դարձնելով շաղախը ի Հայաստան և ի սփյուռս մեր ժողովրդի բոլոր զավակներուն միջև:

Ձեր գալուստը բարի ի Մոնրեալ: Ձեր խոսքին ու պատգամին մեջ ի միություն կոչեք մեր ազգի ու Եկեղեցվո զավակները, որպեսզի անոնք, հավատքի ուժականությամբ, իրենց ուսերուն վրա բարձր պահեն մեր հայրերու կտակով մեզի փոխանցված հավատքի թարգմանը՝ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցին»:

Ապա Սրբազան Հայրը հրավիրեց Վեհափառ Հայրապետին տալու իր պատգամն ու օրհնությունը: Մայր Աթոռը անվանելով «Հայոց Բեթղեհեմ», Վեհափառն ասաց, թե նորանկախ ու ազատ Հայրենիքում, նույնպես ազատ ու անկաշկանդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, վերանորոգված մի կյանք է սկսվել, որը վերանորոգ մոտեցում է պահանջում, որովհետև «մրրկավ էինք բաժանված», իսկ հիմա դադարել են այդ մրրիկները և պահն է վերամիացման. «Նշանակալից երևույթ մըն է, թե Կիլիկյան Աթոռի Կաթողիկոս մը Ամենայն Հայոց Կաթողիկոս կընտրվի: Այսօր ես նույն մարդն եմ: Իմ հոգիս բաց է բոլորին՝ անկախաբար թե ինչ դիրքի վրա են: Բոլորն ալ տեղ ունին սրտիս մեջ: Այսօր մեր ժողովուրդը պետք ունի հոգևոր «պերեստրոյկայի»... Մենք բոլորս միասնաբար բաղարջ մը կներկայացնենք. եթե բաղարջեն կտոր մը փրթի, կչորնա: Ես ձեզի կբերեմ Էջմիածնի նոր շունչը»:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ

Նույն օրը, երեկոյան, Նորին Սրբությունը իր ամբողջ շքախմբով այցելեց տեղի Սուրբ Հակոբ եկեղեցի, որտեղ դարձյալ խուռներամ ժողովուրդը լիախուռն բազմությամբ լցրել էր թե՛ եկեղեցին և թե՛ հարակից սրահը: Կիլիկյան Սուրբ Աթոռի հովանին վայելող թեմի Առաջնորդ Մեսրոպ Սրբազանը իր սրտազեղ և հուզումնալից խոսքում նախ ներկայացրեց Վեհափառ Հայրապետին, որ եղել էր վանքի իր ուսուցիչը և իրեն

եպիսկոպոս օծող Կիլիկյան Աթոռի Գահակալը: Ապա, ողջունելով Վեհափառի գալուստը, Նորին Սրբությանը կոչեց կապող օղակ Մայր Հայրենիքի, Արցախի և Սփյուռքի միջև:

Սակայն հուզմունքի ալիքը հասավ իր կիզակետին Վեհափառ Հայրապետի արտասանած խոսքով: Ամենայն Հայոց Հայրապետը ողջույններ հղեց ազատ Մայր Աթոռից, անկախ Մայր Հայրենիքից, մեր դարավոր հուշարձաններից, Արարատից ու Արցախից՝ ասելով. «Այս ճամփորդության սկսելե առաջ Սուրբ Էջմիածնի Իջման Խորանին վերջին համբույրս տվի: Ահա այդ համբույրը կբաշխեմ ձեզի իբրև հաղորդություն մեր հավատքի խորանեն ու Մայր Հայրենիքեն»: Ապա հուզումնահեղձ ձայնով ավելացրեց. «Ես երբեք չեմ կրնար Կիլիկյան Աթոռը մոռնալ, ան իմ մարմնույս յուրաքանչյուր թելին մեջն է: Ես այսօր նույն անձն եմ Էջմիածնի մեջ, ինչ որ էի Կիլիկիո մեջ: Միայն թե այսօր իմ բեռս ավելի ծանր է: Այսօր պետք է աշխատինք միասնության համար: Ուրիշ ճամփա չկա: Այսօր, ահա՛, հազվադեպ պատեհություն մը կտրվի մեզ կերտելու մեր նոր պատմությունը: Վա՜յ մեզի, եթե փախցնենք Աստուծո կողմե մեզի ընձեռնված այս առիթը: Անցյալին Հայրենիքի ձախորդություններն ու փորձանքները մենք կվերագրեինք բռնակալ պետությանց, որոնց ճիրաններու մեջ կգտնվեր Հայաստանը: Այսօր զո՞վ պիտի մեղադրենք, ո՞վ պիտի ըլլա մեղավորը, եթե, Աստված մի՛ արասցե, մեր անկախության և մեր մեկ բուռ Հայրենիքի գլխուն փորձանք մը գա: Սուրբ Էջմիածինը՝ մեր վանքերն ու Հայրենիքը պարզապես մեր պատմության վկաները չեն, այլ նոր հանգրվանի սեմին նոր պատմություն կերտելու հրավերներ, որովհետև պատմությունն՝ նշանակում է փոփոխություն, այլապես պատմությունը պիտի դադարեր, ինչպես որ եղել էր 1920-ական թվականների քաղաքագետների և ընկերաբանների տրամաբանական եզրակացությունը, թե հայոց պատմությունը այլևս դադարեց: Նրանք սխալվել էին, սակայն և այսօր ահա հազվադեպ մի պատեհություն է տրվում մեզ, կերտելու մեր նոր պատմությունը»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹ

Երեկոյան «Քուին Էլիզաբեթ» հյուրանոցի «Գրան Սալոնում», մոտավորապես 550 հոգու ներկայությամբ, տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Թեմական Խորհրդի անունից ողջույնի խոսքով հանդես եկավ Պրն. Արտո Բասմաջյանը և հույս հայտնեց, թե մեր ժողովրդի պատմության անկյունադարձային այս հանգրվանին Վեհափառի այս անդրանիկ հովվապետական այցելությունը պիտի դառնա նաև անկյունադարձային հանգրվան մեր վերջին հինգ տասնամյակների եկեղեցական պատմության մեջ: Կանադահայ երիտասարդ ու կենսունակ թեմի կողմից նա ամբողջական սեր և հավատարմություն հայտնեց

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և նորանկախ Հայրենիքի պետականությանը:

Իր սրտի խոսքում Մեսրոպ Սրբազանը, անդրադառնալով, որ պատմության մեջ շատ կաթողիկոսություններ ենք ունեցել, ասաց. «Անկախաբար, թե ո՛ր միաբանության կպատկանինք, բոլորս ալ Հայ Եկեղեցու զավակներն ենք և Էջմիածնի զանգերու ղողանջը կհնչե մեր բոլորին սրտերուն մեջ: Այսօր երկու իրադրություն կա մեր առջև. ա՛յն, որ ժամանակները փոխվեցան, և ա՛յն, որ Գարեգին Վեհափառը իմաստուն քայլը առավ: Աստուծո կամքն էր Հայաստան երթալ և 70 տարվան անկրոն մեր ժողովուրդին համար դառնալ նոր օրերու լուսավորիչը»:

Խաժակ արքեպիսկոպոսը, իր խոսքի համար բնաբան ընտրելով «Ազատություն եղբարց մերոց գերելոց» մաղթանքը, որ ամեն անգամ կրկնվում է Պատարագի ընթացքում, ասաց, որ այն այսօր իրականություն է Հայաստանի համար, որը ձեռք է բերվել արյան թանկ գնով և այն շաղկապվում է հոգևոր ազատության հետ, որպեսզի հարգվեն այդ ազատության բարոյական սահմանումները, և մեր ժողովուրդը առաջնորդվի առողջ, նոր դարաշրջանի կերտման, որում կենսական է Ամենայն Հայոց Նորընտիր Հայրապետի դերը. «Ահա՛, նոր ճամփա մը բացված է մեր առջև, ո՛չ միայն արտաքին, այլև հոգևոր ազատության, որուն պետք է հետևինք Վեհափառին առաջնորդությամբը»:

Հաջորդ բանախոսը, Հայաստանի Հանրապետության Կանադայի լիազոր դեսպան Գառնիկ Նանագուլյանը, շատ դիպուկ կերպով արտահայտվեց՝ ասելով. «Վեհափառ Տեր, Ձեր ընտրությունը նշանակալից էր մեր Հանրապետության համար, և նշմարելի են կրոնական զարգացման նշանները: Ես պատկանում եմ այն սերնդին, որ թեև ուսում ստացավ աթեիստական գաղափարախոսության տակ, սակայն պապս պահեց ընտանեկան ավանդությունը: Մանուկիցս հետո նա ինձ գաղտնի կնքել տվեց և միայն 17 տարեկանիս հայտնեց հորս: Իմ սրտի խոսքը այն է, որ Հայրենիքի բախտը Հայաստանի և Սփյուռքի ձեռքում է, ապագան մեզնից է կախված: Հայաստանը այսօր կարիքը ունի, վաղը ուշ կլինի: Այն արհեստածին կասկածը, թե արդյո՞ք պետք է օգնել, պե՞տք է ազգային տուրքը տալ՝ վնասաբեր է մեզ համար: Ցուրաքանչյուր մարդու մեջ կա նորտի մտայնությունը, որից պետք է ձերբազատվել: Ազատությունը կայանում է ճիշտ ընտրություն անելու մեջ: Եթե մտքերում կան կասկածներ, Վեհի այցելությունը պետք է փարատի դրանք: Մեր միասնությամբ կարող ենք Հայաստանը դրախտավայր դարձնել»:

Կանադահայոց Առաջնորդ Հովնան Սրբազանը իր խոսքը սկսեց շնորհակալությունների շարքով բոլոր նրանց, ովքեր մասնակցություն էին բերել Վեհափառ Հայրապետի այցելության հետ առնչված աշխատանքներին, և ապա շեշտեց, թե ժամանակի հրամայականն է՝

ՎԵՀԱՓԱՌԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ԺԻՐԱՅՐ ԴԵՐՎԻՇՅԱՆԻՆ

տեր կանգնել Մայր Հայրենիքին ու Եկեղեցուն, մեր ազգային իսկության նկարագիրը անաղարտ պահելու համար: Ելույթի ավարտին Սրբազան Հայրը հայտարարեց, թե գաղութի ծանոթ ազգայիններից տեր և տիկին Ժիրայր Դերվիշյանները Մայր Աթոռի Գևորգյան Ճեմարանին ի նպաստ նվիրում են 30.000 ԱՄՆ դոլար, ինչպես նաև հաստատում 70.000-ի հիմնադրամ, որի հասույթները պիտի օգտագործվեն Մայր Աթոռի կարիքների համար: Առ ի գնահատություն, Վեհափառը բարերարի կուրծքը զարդարեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի Ա կարգի Հայրապետական շքանշանով: Ապա Հովնան Սրբազանը «Այս երեկո հոգու ամրոց կկերտվի, որուն խարիսխը Ձեր ներկայությունն է: Ժամանակի ոգին եք, ժամանկի հրամայականը» խոսքերով հրավիրեց Վեհափառին տալու իր հայրական պատգամը:

Իրեն հատուկ հաղորդականությամբ և խորիմաստությամբ Նորին Սրբությունը զարգացրեց այն գաղափարը, թե դարերի խորքից եկած մեր ազգն ու մեր հավատքը, որի լուռ վկաներն են մեր նորանկախ Հայրենիքը, Լուսավորչահաստատ Սուրբ Էջմիածինը, Մեսրոպակերտ այբուբենը և հարյուրավոր մեր վանքերն ու հուշարձանները, այսօր մեզ բոլորիս դնում են մի նոր հանգրվանի առջև: Անցյալի հալածանքները, որոնցից վերջինը եղավ 1915-ի Ցեղասպանությունը, այլևս հետևում են մնում: Անցել են ոոմանտիզմի և «կեղտոտ հայ» կամ «սոված հայ» որակվելու շրջանները: Այսօր ջարդված ժողովուրդ չենք, այլ ազգ ու Հայրենիք կերտող ժողովուրդ ենք: Այսօր Սուրբ Էջմիածինն ու մեր հնամյա վանքերը սոսկական քարեղեն հուշարձաններ չեն,

այլ մեր պատմությունը շարունակելու հրավերներ: Այսօր մենք մեզ հետ ավելի մոտ ենք, քան երբեք: Անհրաժեշտ է ավելի ամրապնդել միասնականությունը Հայրենիքի ու Սփյուռքի միջև, եկեղեցիների, կուսակցությունների, կազմակերպությունների միջև. «Այս երեկույթը ես կկոչեմ սիրո սեղան: Ինչպես Սիամանթոն կըսե, «յուրաքանչյուրն մեկզմեկու նայվածքին մեջ իր դրախտը կտեսնե», մենք ալ պետք է Հայաստանի դրախտը տեսնենք, երբ կնայինք իրարու աչքին մեջ: Սակայն այդ դրախտը պետք է կառուցվի մե՛ր ձեռքերով: Ինարարական ու կազմակերպչական անհավոր կարիք կա, ժողովուրդը վերաքրիստոնեացնելու կարիք: Մեր ուզածը օգնություն կամ բարեգործություն չէ, այլ մասնակցություն: Էջմիածինը առաքելություն է, հոգեկան ու մշակութային ջրտուք, ան ո՛չ թե հաստատություն մըն է, այլ շարժում: Եվ քանի որ մեր Եկեղեցին ազգային է, ան ազգակերտումի մեջ դեր ունի: Մեր հողը չէ, որ հայկական է, այլ այդ հողին շաղախված հոգին է, որ հայկական է: Մենք միայն մեկ Հայրենիք ունինք, ո՛չ երկու, ուստի միասնաբար աշխատինք ազգաշինության համար, քանզի Հայրենիքը «քու որդվոց սուրբ քրտինքով պիտի վերաշինվի: Հիմա է ժամանակը վերապրումի»:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՍԵՆ ԺՈԶԵՖ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կիրակի, հունվար 28-ին, Մոնրեալի հռչակավոր Օրաթուար Սեն Ժոզեֆ բազիլիկ եկեղեցում տեղի ունեցավ Հայրապետական աննախընթաց Պատարագ՝ ներկայությամբ ավելի քան 5000 հավատացյալների: Ներկա էին նաև օտար հոգևորական և պետական ներկայացուցիչներ և ՀՀ Կանադայի լիազոր դեսպանը: Երգեցո-

ղությունը կատարվում էր «Կոմիտաս» դպրաց դասի կողմից, որին իրենց մասնակցությունն էին բերում նաև Սուրբ Հակոբ եկեղեցու դպիրներն ու սարկավագները:

Արարողության սկզբնավորությանը նախ, հանուն Քվեբեքի հովվապետ կարդինալ Թյուրքոթի, Սեն Ժոզեֆի վանահայրը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին և պատիվ համարեց աշխարհի ամենահին Եկեղեցիներից մեկի Հովվապետի կողմից Պատարագի մատուցումը այս սրբավայրում: Ապա գեղեցիկ ելույթով Գարեգին Ա Հայրապետը շնորհակալություն և բարձր գնահատանք արտահայտեց քրիստոնեական այս վեհ ու սիրազեղ ոգու համար:

Հընթացս Ս. Պատարագի, ներկաներին Առաջնորդ Հովնան սրբազանը ֆրանսերենով ու հայերենով ողջունեց ու ներկայացրեց Վեհափառ Հայրապետին՝ շեշտելով, թե Վեհափառի այս առաջին այցելությունը զուգադիպում է երկու կարևոր առաքելությունների՝ Հայաստանում Քրիստոնեության հաստատման 1700-ամյակի պատրաստություններին և Կանադայի հայկական գաղութի հարյուրամյակին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախ ֆրանսերենով շեշտեց ոգեղեն արժեքների պահպանման կարևորությունը՝ մակերեսային, զգայարանական և սպառողական ապրելակերպի այժմ տիրող պայմաններում: Ապա հայերեն քարոզում, որի բնաբանն էր Տաղանդների առակը (Մատթ. ԻԵ 14-30), ուր բարի ու հավատարիմ ծառան իր ստացածը կրկնապատկում է իր աշխատանքով, անդրադարձավ, որ մենք նույնպես մեզ տրված աստվածային շնորհներն ու պարգևները պետք է ի սպաս դնենք ազգաշինության ու եկեղեցաշինության համար. «Ցուրաքանչյուր մարդու և յուրաքանչյուր հայու նախախնամությունն տրված շնորհքներն ու

կարողությունները պետք է ի սպաս դնել մարդկության և մեր ազգին ի նպաստ, մեր կյանքը իմաստավորելու համար, այլապես խոտի նման կուգանք ու կերթանք: Քրիստոնեությունը փիլիսոփայություն մը չէ, այլ ապրելու եղանակ մը, որ կիմաստավորվի արդյունք առաջ բերելով: 1915-ին մեր հայրերը հացի պակասեն մեռան, իսկ այսօր մենք հացի առատութենեն կմեռնինք, շռայլության ու սնապաշտության կուռքերուն առատ խունկ կծխինք: Ես Կաթողիկոս չեմ եղած ձեզ գովաբանելու համար, երբ կտեսնեմ, թե Աստուծո տված բարիքը հումպետս կվատնեք, պարտավորություն ունիմ վերարթնության հրավիրել ձեզ: Ով որ կըսե զԱստված կսիրե, բայց իր եղբայրը չի սիրեր, ստախոս է»: Այսպիսի հորդորներով Հայրապետը մատնանշեց նաև, որ ծայրահեղ աշխարհայնապաշտությունը մթագնում է հոգին՝ գեղեցիկ համեմատությամբ և գերազանցությամբ պարզելով և ցույց տալով այն սրբություններն ու հոգեկան արժեքները, որոնց շուրջ պարտավոր է հավաքվել ողջ հայ ժողովուրդը. «Ինչպես հին իսրայելացիներու ուխտի տապանակը երեք առարկա կպարունակեր՝ տասը պատվիրանները, երկինքեն իջած մանանան և Ահարոնի ծաղկած գավազանը, նույնպես ալ այսօրվան տապանակը մեր սիրտն է, որուն մեջ պետք է գետեղենք Լուսավորչի կանթեղը՝ լույսը Էջմիածնի պրիսմակեն, երկինքեն իջած Ա, Բ, Գ-ը և Վարդանի սուրը»:

Պատարագից հետո տաճարի ներքնասրահում տեղի ունեցավ ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի առիթ տալով օտար հյուրերին ավելի մոտիկից ծանոթանալու Նորին Սրբությանը: Այն հնարավորություն տվեց սրտի խոսք ուղղելու Վեհափառին և տպավորություններ գրանցել այցելուների հուշամատյանում: Հյուրերի մեջ էին Մոնրեալի քաղաքապետարանի Գործադիր հանձնախմբի նախագահ Նուշիկ Էլոյանը, խորհրդականներ Հասմիկ Բելելին ու Ժակ Չատրջյանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶՐՈՒՑԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

***Հունվարի 28-ի** երեկոյան ժամը 20.00-ին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «**Մարի Մանուկյան**» սրահում հավաքված մոտ 400 երիտասարդներ թերևս առաջին անգամն էր, որ երկխոսության մեջ էին մտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Թեև հավաքը երիտասարդների համար էր, բայց ներկաների մեջ քիչ չէին նաև տարբեր տարիքի ու հետաքրքրությունների տեր մարդիկ:*

Այս հանդիպմանը մասնակցում էին Մոնրեալի հետևյալ երիտասարդական կազմակերպությունները. ACYOC-Laval, ACYOC-Montreal, AGBU, ARFYOC, SAIYA, *Հայ Կաթողիկե երիտ. միություն, Թեքեյան երիտ. Հանձնախումբ և Կոնկորդիա, Մաք Կիլ և Մոնրեալի համալսարանական միությունները:*

Իր խոսքի մեջ Նորին Սրբությունը հայտնեց, թե 1996 թվականը որոշված էր նկատել հայ երիտասարդության տարի, և համագործակցությամբ Հյուսիսային Ամերիկայի Առաջնորդների ծրագրեր պետք է մշակվեն հայ կյանքից ներս հայ երիտասարդին ավելի գործոն դարձնելու համար: Դյուրահաղորդ ոճով Վեհափառը կարողացավ գրավել բոլոր երիտասարդների մտքերն ու սրտերը ու հորդորեց կառչել մնայուն արժեքների, իմաստավորել իրենց կյանքը նպատակներով և իդեալներով՝ առանց տարվելու միայն զգայարաններին գոհացում տվող անցողիկ հաճույքներից:

Ներածական խոսքում Վեհափառը ծանրացավ մարդկային կյանքում հիմնական նշանակություն ունեցող մի քանի ճշմարտությունների վրա:

Առաջինն այն էր, թե երիտասարդությունը պետք է հասկանա այն հստակ զատորոշումը, որ կա ճշմարտության տեսաբանական և գոյութենաբանական հասկացողությունների միջև. «Տեսաբանականը լոկ իմացական գործողություն մըն է՝ մտքով կբացատրենք կամ կսահմանենք ճշմարտությունը, մինչդեռ գոյութենական իմաստը այն է, թե պետք է ճշմարտությունը ուղղակի ապրիլ, ճշմարտությունը սեփական կյանքով արտացոլել: Քրիստոս ո՛չ թե ճշմարտության մասին խոսեցավ, այլ ճշմարտություն եղավ: Ան ըսավ. «Ես եմ ճշմարտությունը» և ոչ թե «Ես գիտեմ ճշմարտությունը» կամ «Ես կխոսիմ ճշմարտության մասին»: Ճշմարտությունը մեր կյանքին ու էության մաս պետք է կազմե»: Օգտագործելով Ներսես Շնորհալու մեկ պատկերը, Վեհափառն ասաց, թե «Ճշմարտությունը պետք չէ անցնի մարդուն մեջեն՝ ինչպես ջուրը կանցնի խողովակի մը մեջեն, այլ պետք է մաս կազմի մարդուս էության այնպես, ինչպես որ սպունգը կներծծե ու կպահե ջուրը»:

Երկրորդ կարևոր կետը այն էր, թե երիտասարդությունը ընդհանրապես նկատվում է որպես տենչ ու հեռանկար ունեցող սերունդ: Պատմության մեջ մեծագույն առաջադիմություններն ու սխրագործությունները եղել են երիտասարդ սերունդների կողմից և «հարկավոր է, որ երիտասարդությունը իրմե սպասած առաքելության գիտակցությունը ունենա: Մարդ երկու անգամ կծնի՝ առաջինը բնական ծնունդն է, իսկ երկրորդը այն պահն է, երբ անհատը իր էության մեջ կզգա, թե ի՞նչ բանի համար ծնած է: Յուրաքանչյուր երիտասարդ պետք է կոչում մը զգա կամ ստանա, և այդ կոչումին իրագործմանը համար պետք է պատրաստվի իր երիտասարդության օրերուն: Ի՞նչ ըրած է հայ երիտասարդությունը: Տանը ժամանակագրականորեն երկու ծայրահեղ օրինակներ: Ո՞վ կերտեց Ե դարու Ոսկեդարը և ԺԹ դարու Զարթոնքը: Պատմական հսկայական նշանակություն ունեցող երկու հեղաշրջումներ, ահա որոնք ապահովեցին հայ ազգին, եթե ոչ անպայման քաղաքական, այլ մշակութային ինքնուրույնությունն ու գոյատևումը:

Երիտասարդ սերունդներ էին անոնք, կրթված օրվան մատչելի բարձրագույն ուսումնարաններուն մեջ, որոնք առավելաբար ունեին կոչում մը, տեղ մը, հեռանկար մը ազգին ու Հայրենիքին ծառայելու և ա՛նսպիսով իրագործեցին հսկայական նվաճումներ: Մեր այսօրվան երիտասարդությունը նվազ ընդունակ չէ: Պատմություն սորվիլ չի բավեր, այլ պետք է պատմություն կերտել: Մեր երիտասարդությունը օժտված է անսահման կարողականությամբ, սակայն այս կարողականությունը պետք է գործի վերածել՝ աշխատանքի արդյունքի»:

Գալով երրորդ կետին, նշեց, որ «երիտասարդությունը այսօր մեծ տագնապ մը կանցնե: Սա ընդհանուր երևույթ մըն է՝ ո՛չ միայն հատուկ հայ երիտասարդության: Սակայն հայ երիտասարդությունը կպարտի առավել աչալուրջ ըլլալ: Սա արդիականության տագնապն է, որուն կը նկերանա, դժբախտաբար, պատասխանատվության զգացումի պակասը երիտասարդության մոտ: Այն, ինչ որ կկոչվի Արևմտյան մշակույթ, հույժ ավերիչ ազդեցություն ունի նոր սերունդին վրա, գլխավորաբար այն պատճառով, որ ամբողջ շեշտը կդնե լոկ հեշտանքի, զգայարանքներու ցանկությանց հագեցման վրա, որ կսպառնա հոգեկան ու իմացական գեղեցկություններե դատարկեցնելու անհատին կյանքը: Այն, ինչ որ կհրամցվի որպես արդիական երաժշտություն կամ կենցաղային վարմունքի այսպես-կոչեցյալ արդիական ու «ազատագրյալ» ընթացք, ունի երիտասարդությանը գերող ազդեցություն, որ միաժամանակ սպառողական հասարակության լարած ծուղակներեն մին է: Այս երևույթը ահավոր վտանգ մըն է նաև Հայաստանի երիտասարդության համար, որուն դեմ պետք է պայքարիլ կրթական ու կրոնական դաստիարակման բոլոր միջոցներով:

Սպառողական դրությունը, որ հիմնված է անխտրականորեն ապրանքի առավելագույն սպառումը քաջալերելու սկզբունքի վրա, այս անկաշկանդ գնացքով պիտի հանգի մեր երիտասարդության հոգեկան ու իմացական ուժերուն քայքայումին, եթե անոնք անփութորեն անձնատուր ըլլան անոր կործանիչ հորձանուտին: Այսուհանդերձ հույժ խրախուսական է, որ տակավին կան երիտասարդներու ստվար խումբեր, մտացի, լուրջ ու գիտակից, որոնք այս հոսանքեն չեն քշված: Լուռ զանգված մը կկազմեն անոնք, հետամուտ իրենց կյանքի վսեմ նպատակներուն: Մեր երիտասարդները պետք է գիտնան, որ այս հոսանքները անցավոր են, ոչ մեկ մնայուն արժեք կներկայացնեն և ինչպես որ ցորենը կամելու ժամանակ զայն թիով օդ կնետեն, որպեսզի քամին հարդը տանի ու ցորենը մնա, նույնպես ալ նոր սերունդը պետք է գիտնա ցորենը պահել ու հարդը քամիին տալ: Հիշեցեք, երիտասարդներ, որ եթե ծառը գարնան ծաղկած չէ, իզուր է աշնանն անկե պտուղ սպասել»:

Այս հորդորներից հետո Վեհափառը պատասխանեց հավաքված-ների հարցերին: Ժամանակը թույլ տվեց, որ միայն 13 երիտասարդներ

կարողանան հարցեր տալ, որոնք արտահայտում էին նրանց արդարացի մտահոգությունները: Վեհափառ Հայրապետը յուրաքանչյուր հարցին պատասխանեց հանգամանորեն՝ իր բացատրությունները ճոխացնելով անձնական փորձառության դասերով, դրանք օգտագործելով խորհուրդի և խրատի համար:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՄՈՆՐԵԱԼԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

ՀԲԸՄ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Երկուշաբթի, հունվարի 29-ին, Գարեգին Ա Վեհափառը կեսօրվա ժամերը հատկացրեց քաղաքի հայկական վարժարաններ այցելելուն:

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Առավոտյան ժամը 09.30-ին Վեհափառ Հայրապետը այցելեց ՀԲԸՄ «Ալեք Մանուկյան» վարժարան, ուր նրան դիմավորեցին մեծ խանդավառությամբ:

Այս առիթով պատրաստված հանդեսը դպրոցի «Կեռնճյան» սրահում սկսեց Կանադայի, Հայաստանի և ՀԲԸՄ-ի քայլերգներով՝ աշակերտների կատարումով: Բացման խոսքով հանդես եկավ տնօրենուհի տիկ. Պալյանը, որը ուրախության և ակնածանքի խոսքերով ողջունեց Ամենայն Հայոց Ներքնտիր Հայրապետին: Աշակերտների կողմից ներկայացված գեղարվեստական ծրագրից և ողջույնի խոսքերից հետո, ելույթ ունեցավ դպրոցի հիմնադիր և «Արմեն Քվեբեք» հիմնարկի նախագահ դոկտոր Արշավիր Կեռնճյանը, որ ֆրանսերենով ներկայացրեց Վեհափառին՝ ներկաներին փոխանցելով

այս պատմական պահի իմաստն ու տարողությունը: Նա մասնավորապես շեշտեց Արարատի և Սուրբ Էջմիածնի խոր նշանակությունը յուրաքանչյուր հայի համար ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձը որպես խորհրդանիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Ապա իր նույնիմաստ խոսքերով ելույթը ավարտեց հայերենով:

Որդիական ողջույնի խոսքով հակիրճ ելույթ ունեցավ Կանադայի Էջմիածնական թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, որ այնուհետև հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ ներկաներին տալու իր հայրական պատգամը:

Գարեգին Վեհափառը իրեն հատուկ տպավորիչ արտահայտություններով, աշակերտներին մատչելի և հասկանալի ոճով, իր խոսքի սկզբից իսկ հաղորդակցության ջերմ կապ ստեղծեց՝ առինքնելով փոքրիկներին, որոնք խանդավառությամբ պատասխանեցին իր հարցումներին: Վեհափառը հատկապես շեշտեց մայրենի լեզուն լավ սովորելու անհրաժեշտությունը, հիշեց Հայաստանի և Արցախի իրենց հասակակիցների դիմագրաված դժվարությունները և գնահատեց «Ալեք Մանուկյան» վարժարանից ներս տարված աշխատանքը՝ նվիրյալ տնօրենուհու և ուսուցչական կազմի կողմից:

Միաբերան արտասանված Տերունական աղոթքով և Վեհափառի «Պահպանիչ»-ով ավարտվեց պատմական այս հանդիսությունը:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

«Ալեք Մանուկյան» վարժարան այցելելուց հետո, ժամը 11.00-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելեց Սուրբ Հակոբ Ազգային Երկրորդական Վարդգես և Աստղիկ Սարաֆյան Նախակրթարան, որտեղ ծափողջույններով և մեծ ուրախությամբ դիմավորվեց ուսուցչակազմի և աշակերտության կողմից, վարժարանի Բաստրմաջյան սրահում:

Այս այցելությանը ներկա էին հայ և օտար մամուլի ու հեռուստատեսության ներկայացուցիչներ ու թղթակիցներ:

Հանդիսությունը սկսեց Վեհափառի մուտքին երգված «Հրաշափառ»-ով, «Հայրապետական մաղթանք»-ով և «Էջ Միածին ի Հօրէ» շարականներով: Այնուհետև աշակերտության անունից արտասանված խոսքից և ապա հանուն ուսուցչակազմի վարժարանի ընդհանուր տնօրեն պրն. Հակոբ Բուլգարյանի ելույթից ու ներկայացված գեղարվեստական հայտագրից հետո, Վեհափառ Հայրապետին ներկայացնելու համար ելույթ ունեցավ Սուրբ Հակոբ Մայր եկեղեցու հովիվ Տ. Ավագ քհն. Իշխանյանը: Տեր Հայրը հակիրճ խոսքով ներկաներին պատմեց Վեհափառ Հոր կողմից ավելի քան քսան տարիներ առաջ իր քահանա ձեռնադրվելու մասին, երբ որպես Գարեգին արք. Սարգիսյան առաջնորդն էր Արևելյան Ամերիկայի և Կանադայի Կիլիկյան թեմի:

Հանդիսությունը եզրափակվեց Վեհափառ Հայրապետի հուզիչ և սրտագրավ խոսքով: Վեհափառը Հայրապետական այցելության այս օրը որակեց որպես «Հայ դպրոցի օր Հովվապետական այցելության պատմության մեջ»: Ապա Վեհափառ Հայրապետը, շարունակելով իր խոսքը, անդրադարձավ այս դպրոցի ստեղծման պատմությանը, որին մասնակից է եղել նաև ինքը՝ լինելով նրա կնքահայրերից մեկը: Ապա իր ուրախությունը հայտնեց այդ օրերից մինչև այսօր տեղի ունեցած աշակերտության աճի և նկատվող կենդանության համար: Այսօրվա սերունդը Մայր Հայրենիքի արմատների վերընձյուղումով, Ազատ ու Անկախ պետության վերհոչակումով չէ այն, ինչ որ էր նախկինում, այլ բախտավոր, բայց միևնույն ժամանակ պարտավոր սերունդ է. «Եկեղեցի, Հայրենիք, պետություն, լեզու, ամեն բանե վեր է, ատոնց մեջ պետք է ըլլանք այնպես գոտեպնդված, որ մեր մարմինը այդ գոտիով ամուր մնա, այլապես կտկարանանք ու կթուլանանք: Ազատությունը պարտավորություն ու պարտականություն է: Հանձնառություն ստանձնել է պետք»:

Ապա Վեհափառ Հայրապետը ֆրանսերենով ամփոփ վերաշարադրեց իր խոսքը: Ավարտին, Գարեգին Վեհափառը քաջալերական ու երախտագիտական խոսք փոխանցեց Սուրբ Հակոբ Ազգային վարժարանի բարերար Տեր և Տիկին Վարդգես և Աստղիկ Սարաֆյաններին՝ հիշելով, որ նրանք անշահախնդիր և առատորեն նվիրատվություններ են կատարել թե՛ Անթիլիասին և թե՛ Էջմիածնին հավասարապես:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՆԱՐԵԿՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վեհափառ Հայրապետի՝ հայ վարժարաններին տված այցելության երրորդ հանգրվանը եղավ կաթոլիկ հայերի Նարեկյան վարժարանը,

որտեղ Վեհափառի այցելությունը ողջունեցին համայնքապետ Գևորգ վրդ. Զապարյանը, վարժարանի տնօրեն Պողոս վրդ. Գազանճյանը, ուսուցչական կազմը, աշակերտությունը, ծնողները և հյուրերը:

Հանդիսավոր ընդունելության բացումը կատարեց Գևորգ վրդ. Զապարյանը: Նա, հանուն Մոնրեալի կաթոլիկ հայ համայնքի, Վեհափառին ողջունեց որպես Ամենայն Հայոց Հայրապետ՝ իր անհուն գոհունակությունը և խոր շնորհակալությունը հայտնելով այս շնորհաբեր այցելության համար, քանի որ Վեհափառը հայտագրում անխտրաբար տեղ է հատկացրել նաև կաթոլիկ հայ համայնքին: Նա իր ջերմ համոզմունքը հայտնեց, որ ամբողջ հայ ժողովուրդը միասնական ու ամբողջական ճիգերով պետք է սատար կանգնի Հայրենիքի կերտումին և իր դավանական ու վարչական բաժանումներով հանդերձ մեկ ու միասնական պետք է լինի Հայ Եկեղեցին:

Ապա աշակերտության կողմից գործադրվեց խնամքով մշակված հայտագիրը, որը խոր տպավորություն թողեց Վեհափառ Հայրապետի և ներկաների վրա:

Հանդիսության փակումը կատարեց Նարեկյան վարժարանի տնօրեն Պողոս վրդ. Գազանճյանը: Նա Վեհափառ Հայրապետին ուղղած իր ողջույնի և շնորհակալության խոսքում անդրադարձավ տարիներ առաջ Նորին Սրբության՝ Հռոմի Լևոնյան վարժարան տված այցելությանը, այն ժամանակ, երբ ինքը ուսանող էր այնտեղ, և հիշեց այն խոր տպավորությունը, որ կրել էր այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձած Գարեգին Սրբազանից:

«Այս վարժարանեն ներս,- ավելացրեց Պողոս վարդապետը,- մեր անունը կուզենք արժանապես պահել Նարեկ վարժարան: Ինչպես Նարեկացին և իր ընկերները հայ ժողովուրդին սրտին մեջ լույսը սփռեցին գիտության և աստվածավախության, նույնպես և մենք այդ կընենք մեր այս փոքրիկներուն սրտերուն մեջ»: Տնօրեն Հայր Սուրբը իր խոսքն ավարտեց՝ խնդրելով, որ Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղի աշակերտությանն ու ներկաներին:

Վեհափառ Հայրապետը աղը, հացն ու գինին՝ ավանդական խորհրդանիշը համերաշխության և եղբայրության, օրհնելուց հետո, իրեն հատուկ պերճախոսությամբ ու պարզությամբ հայրական խոսքն ուղղեց աշակերտությանը՝ մերթ նրանց հետ մանկանալով և մերթ իր խորիմաստ հորդորը տալով ներկաների միջոցով համայն հայ ժողովրդին՝ վեր կանգնել պառակտումներից, պահելու-պահպանելու Հայ Եկեղեցու միասնականությունը և անսակարկ կերպով նվիրվելու նորանկախ Հայաստանի հզորացման ու հավերժացման գործին: Նորին Սրբությունը ջերմորեն շնորհավորեց Նարեկյան վարժարանի աշակերտությանը այս գեղեցիկ հանդիսության համար, գնահատեց տնօրենությանը և ուսուցչական կազմին՝ վարժարանից ներս կատարած հայապահպանման սքանչելի աշխատանքի համար, և իր

օրհնությունն ու ողջույնները հղեց Մոնրեալի կաթոլիկ հայերի համայնքին:

Ապա, վարժարանի զանազան մասերը այցելելուց և ուսուցչական կազմի ու աշակերտության հետ ճկարվելուց հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տվեց Նարեկյան վարժարանին:

Վեհափառ Հայրապետը գաղութի այս երեք ամենօրյա վարժարաններին տված այցելություններով, ինչպես այլուր, այստեղ ևս անպատմելի ոգևորություն առաջ բերեց: Նորին Սրբությունը ակներևաբար հուզված էր՝ տեսնելով օտար միջավայրում բարբառող, հայերեն երգ ու արտասանությամբ հանդես եկող հարյուրավոր երեխաների, արժանապես գնահատելով ազգային ոգին ու հավատքը վառ պահելու ուղղությամբ կրթական այդ հաստատությունների թափած ջանքերը: Դժվար է ասել, թե այդ այցելություններից ո՞վ էր ավելի տպավորված. ի՞նքը՝ Վեհափառը, ում համար մանուկների աշխարհը հոգեկան վայելք է, թե՞ իրեն հյուրընկալողները, որոնք սրտի թրթիռով պիտի մտաբերեն սիրելի Վեհափառի՝ իրենց տված խրատները, նրա սրամիտ կատակները, բարի ու անկեղծ ժպիտը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՆՐԵԱԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

***Երկուշաբթի, հունվար 29-ի** կեսօրից հետո, Մոնրեալի քաղաքապետը ճաշկերույթ-ընդունելությամբ պատվեց Ամենայն Հայոց Հայրապետին: Այդ օրը զուգադիպում էր նահանգային նոր վարչապետի և իր դահլիճի երդման արարողությանը, որի պատճառով Մոն-*

ռեալի քաղաքապետ պրն. Պիեռ Բուրգը պարտավորված էր գտնվել մայրաքաղաք Քվեբեկում: Նրա բացակայության, քաղաքապետարանի խորհրդի նախագահ օր. Նուշիկ Էլոյանը բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին և շքախմբի մաս կազմող հոգևոր և աշխարհիկ դասի ներկայացուցիչներին, ինչպես նաև տեղի քույր Եկեղեցիների առաջնորդներին և իպամ կրոնապետին: Քաղաքական դեմքերից այս հանդիպմանը ներկա էին Կանադայի Սենատի անդամ պրն. Մարսել Բոյուտոմը, քաղաքապետի փոխանորդն ու քաղաքապետարանի խորհրդի երկու հայ անդամներ՝ տիկ. Հասմիկ Բելեղին և մեթր Ժակ Զատրջյանը: Դիվանագիտական շրջանակներից ներկա էին Միացյալ Նահանգների, Ռուսաստանի և Լիբանանի հյուպատոսները:

Ֆրանսերենով արտասանված իր խոսքում օր. Նուշիկ Էլոյանը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին, ում ճանաչել էր մանկությունից, որպես նվիրումի, ծառայասիրության և մարդկային արժեքների ջատագով օրինակելի անձնավորության, միջազգային, կրոնական և ընկերային հաստատությունների աշխույժ կապերով ու փորձառությամբ օժտված հոգևորականի:

Պատասխան ելույթով Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց, որ աշխարհի մեծագույն քաղաքներից մեկի՝ Մոնրեալի քաղաքապետարանում երկար տարիներ առաջ իր մկրտած մանուկ աղջնակը այսօր դիմավորում է իրեն: Այնուհետև Վեհափառը խնդրեց օր. Էլոյանին՝ իր շնորհակալությունները փոխանցել քաղաքապետ պրն. Բուրգին՝ այս գեղեցիկ քաղաքում և նահանգում հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած հյուրընկալության համար: Այնուհետև Նորին Սրբությունը ավելացրեց, թե հայ ժողովուրդը գիտի երկխոսությամբ, քան թե պայքարով համերաշխ կյանք ստեղծել, այդպես էր, որ կարողացավ համերաշխորեն ապրել Միջին Արևելյան ընդհանրապես իսլամ հյուրընկալ երկրներում և այսօր ապրում է նաև Ամերիկայի և Կանադայի ազատ երկրներում: Այսօրվա գլխավոր ընկերային մի հարցի անդրադառնալով, Վեհափառը նշեց, որ կապը խզվել է երիտասարդության հետ և այդ կապը նորոգելու համար երկխոսությունը նույպես անհրաժեշտ է:

Անդրադառնալով Միջին Արևելքին, Վեհը շեշտեց, թե այսօր այնտեղ պայքարը դադարել է, և մարդիկ փորձում են երկխոսության միջոցով ճանապարհ հարթել: Նորին Սրբությունը, ավարտելով իր խոսքը, մաղթեց, որ ժողովրդի մեջ տիրապետի մարդկային արժեքների և բարոյական սկզբունքների գիտակցությունը, որը հիմքն է կազմում մարդկային ընկերության առողջ զարգացման:

*Քաղաքապետարանի բարձրաստիճան հյուրերին վերապահված տոմարը ստորագրելուց հետո, Վեհափառ Հայրապետը քաղաքապետարանին նվիրեց «**Էջմիածնի Գանձեր**» պատկառելի գեղեցկազարդ*

հատորը և Էջմիածնի քանդակով ճենապակյա մի բաժակ՝ անձնապես քաղաքապետ պրն. Բուրգին:

Ապա տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որի ավարտին օր. Նուշիկ Էլոյանը Վեհափառ Հայրապետին, հանուն քաղաքապետի, գրասեղանի գեղեցիկ ժամացույց նվիրեց՝ որպես հիշատակ Մոնրեալ այցելության: Առաջնորդ Հովնան Սրբազանի շնորհակալության խոսքով ավարտվեց այս տպավորիչ հյուրասիրությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԶԳԱՑԻՆ- ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Քաղաքապետարանի ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետն ու իր շքախումբը փութացին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, ուր Մարի Մանուկյան սրահը ամբողջությամբ լցնող տեղի շուրջ 30 կազմակերպությունների վարչական լրիվ կազմերը եկել էին ունկնդրելու Ամենայն Հայոց Հայրապետի պատգամը և հրաժեշտ տալու նրան: Հակառակ երկար ու ծանրաբեռնված օրվա երկարատև ժամեր տևած հոգնածության, Վեհափառը խանդավառությամբ խոսեց ինքնության գիտակցության գաղափարի մասին, որ ճիշտ բնորոշվում է հաստատ մի էության հետ իր կապով, իսկ այդ հաստատուն կետը, որ երաշխավորում է սփյուռքահայի ինքնությունը, Մայր Հայաստանն է ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Սա Մոնրեալի հայ համայնքի վերջին հավաք-հանդիպումն էր Ամենայն Հայոց Հայրապետի հետ, որով ավարտվեց Վեհափառ Հայրապետի եռօրյա անդրանիկ հովվապետական խտացյալ այցելությունը Մոնրեալի գաղութին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԻՕՐՅԱ ԱՑՑԸ ԿԱՆԱԴԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՕՏՏԱՎԱ

Երկուշաբթի, հունվարի 30-ին, Ամենայն Հայոց Հայրապետն իր Հովվապետական այցելության ընթացքին շքախմբով, որին մաս էին կազմում Հովնան, Խաժակ և Մեսրոպ Սրբազանները ու թեմի եկեղեցականները, Մոնրեալից մեկնեց Կանադայի մայրաքաղաք Օտտավա:

Օտտավայի միջազգային օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպան Գառնիկ Նանագուլյանը և Օտտավայի հայ համայնքի անդամները: Ողջույնի խոսքեր ասացին Պրն. Գառնիկ Նանագուլյանը և Օտտավայի ծխական խորհրդի ատենապետ Հովսեփ Մարդյանը: Ապա ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը, որում գոհունակություն հայտնեց այս ջերմ ընդունելության համար:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱԴԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՊԱՐՈՆ ՌՈՄԵՈ ԼԱՊԼԱՆԻ ՀԵՏ

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետն ու Սրբազան Հայրերը, Հայաստանի դեսպանի ընկերակցությամբ, ուղևորվեցին դեպի Կանադայի ընդհանուր կառավարիչ Ռոմեո Լապլանի նստավայրը, ուր կանադական կառավարության պաշտոնատարների մասնակցությամբ ջերմ ընդունելություն տեղի ունեցավ:

Վեհափառը ընդհանուր գծերով ներկայացրեց Հայաստանի հատկապես վերջին տարվա ընկերային տնտեսական վիճակը և երախտագիտություն հայտնեց Կանադայի կառավարությանն ու ժողովրդին՝ երկրաշարժից հետո Հայաստանին ցուցաբերած օգնության համար: Այնուհետև Նորին Սրբությունը շեշտեց, որ Հայաստանը այսօր ևս ակնկալում է բարեկամ Կանադայի աջակցությունն ու զորակցությունը, սակայն ոչ թե որպես մարդասիրական օգնություն, այլ զարգացման ու արհեստագիտական առաջընթացի ծրագրերի օժանդակության ձևով: Փոխըմբռնման մթնոլորտում անցած այս հանդիպման ընթացքում Վեհափառը հույս հայտնեց, որ Կանադան, լինելով աշխարհի ամենափորձառու և հեղինակավոր երկիրը խաղաղապահության ասպարեզում, այսուհետև ավելի ակտիվորեն կներգրավվի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Վեհափառը հանգամանորեն անդրադարձավ նաև վերջին շրջանում Սուրբ Էջմիածնի գործունեությանը, նոր պայմաններում՝ Եկեղեցու դերի բարձրացման, Եկեղեցու և ժողովրդի միջև նոր միասնականության ստեղծմանն ուղղված ջանքերին:

Որպես Թագուհու ներկայացուցիչ՝ Կանադայի պետության գլուխը եղող ընդհանուր կառավարիչը, ջերմորեն ողջունելով Ամենայն Հայոց

Հայրապետին, մեծապես արժևորեց նրա այցելությունը Կանադա, բարձր գնահատեց Կանադայի հայ համայնքի ներդրումը երկրի կյանքի զանազան ոլորտներում: Նա վստահություն հայտնեց, որ Վեհափառի այցելությունը ակտիվ կենսագործունեության նոր ազդակ կդառնա հայ համայնքի համար, որի հետ ընդհանուր կառավարիչը մեծ հույսեր կապեց՝ հայ-կանադական երկկողմ առևտրա-տնտեսական, գիտա-մշակութային և այլ կապերի առաջխաղացման առումով: Կարելի է ասել, որ այս հանդիպումը էապես նպաստեց հայ-կանադական երկկողմ հարաբերությունների ընդլայնմանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ «ՇԱԹՈ ԼՈՐԻԵ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Նույն օրը, կեսօրին, «Շաթո Լորիե» հյուրանոցի սրահներից մեկում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ընդունելություն էր կազմակերպված Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանատան և Հայ Եկեղեցու Կանադայի թեմի առաջնորդարանի կողմից:

Ընդունելությանը ներկա էին ավելի քան 300 հոգի՝ խորհրդարանի զույգ անդամներ և սենատորներ, քաղաքական-հասարակական գործիչներ, կառավարության բարձր պաշտոնյաներ, բազմաթիվ դիվանագետներ, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ և Օտտավայի հայ համայնքի անդամները: Վեհափառ Հայրապետին առանձնակի ջերմությամբ ողջունեցին Լիբանանի, Իրանի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Հունգարիայի, Արգենտինայի, Ռումինիայի և Իսրայելի հավատարմատարները, բազմաթիվ այլ դիվանագետներ: Լիբանանի դեսպանը մասնավորապես Վեհափառին հանձնեց իր երկրի նախագահի հատուկ ուղերձը:

ՀՀ դեսպանի և Հովնան Սրբազանի կարճ ողջույնի խոսքերից հետո, Գարեգին Վեհափառը ներկաներին դիմեց ընդարձակ խոսքով՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ի մասնավորի շեշտելով, որ, արագորեն դեպի նոր հորիզոններ առաջադիմող Հայաստանի ազատ և անկախ Հանրապետության գոյության պայմաններում, ժամանակն է ձերբազատվել դարասկզբին հայ ժողովրդի ապրած մեծագույն ողբերգության պարտադրած զոհի հոգեբանությունից և ձեռք-ձեռքի տված լծվել ստեղծագործ աշխատանքի՝ ի շահ և ի բարօրություն Հայաստանի և համայն հայության: Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ունկնդրվեց լարված ուշադրությամբ և հաճախ ընդհատվեց ծափողջույններով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Վեհափառ Հայրապետն իր շքախմբով, ընկերակցությամբ հայ համայնքի անդամների, Կանադայի ընդհանուր Կառավարչի հետ պաշտոնական հանդիպումից հետո մեկնեց դեպի Հայաստանի դեսպանատուն, ուր Վեհափառը ջերմեռանդ աղոթքով օրհնեց նորահաստատ «Հայոց Տունը»: Այստեղ ունեցած իր համառոտ ելույթով Նորին Սրբությունը կրկին շեշտեց համազգային միասնականության կարևորությունը, որ իր մեկնաբանությամբ հայության բաղձանքների իրականացման, ազատ ու անկախ Հայաստանի բարգավաճման միակ գրավականն է:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՕՏՏԱՎԱՅԻ ST-PAUL ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կեսօրից հետո մեկ այլ հանդիպում տեղի ունեցավ Օտտավայի St-Paul աստվածաբանական համալսարանի արևելաքրիստոնեական հետազոտությունների հիմնարկում, որ իր տեսակի մեջ համաշխարհային խոշորագույն կենտրոններից մեկն է և Կանադայի աստվածաբանական գրականության ամենահարուստ գրապահոցն ունի: Գրադարանում պահվում են նաև Գարեգին Վեհափառի աշխատություններից մի քանիսը, որոնց անվանաթերթերին, համալսարանի ղեկավարների խնդրանքով, Վեհափառ Հայրապետը հիշատակի մակագրություններ կատարեց: Փոխադարձ պայմանավորվածություն ձեռք բերվեց համալսարանի և Սուրբ Էջմիածնի միջև ծավալելու աշխույժ համագործակցություն՝ պատրաստելու համատեղ հրատարակություններ և այլն: Վերջում, Կենտրոնի Մատուռում տեղի ունեցած

արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տվեց Օտտավային՝ մեկնելով Վանկուվեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՆԿՈՒՎԵՐՈՒՄ

ՎԱՆԿՈՒՎԵՐՈՒՄ՝ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Երեքշաբթի, հունվար 30-ի երեկոյան ժամը 20.00-ին, Վեհափառ Հայրապետը ժամանեց Կանադա այցելության իր վերջին հանգրվանը՝ Վանկուվեր: Օդանավակայանում տեղի ունեցած պաշտոնական ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետը իր ողջ շքախմբով և դիմավորելու եկած անձնավորությունների ընկերակցությամբ ուղղվեց դեպի Սուրբ Վարդան եկեղեցի, որտեղ մուտք գործեց «Հրաշափառ»-ի հնչյունների ներքո:

Վեհափառ Հայրապետի խորիմաստ պատգամից հետո և արարողության ավարտին, հավատացյալները աջահամբույրի համար մոտեցան Նորին Սրբությանն ու ստացան նրա օրհնությունը:

***

Չորեքշաբթի, հունվարի 31-ի երեկոյան ժամը 18.00-ին, «Christ Church Cathedral» *եկեղեցում Սուրբ Պատարագ մատուցեց Խաժակ սրբազանը, իսկ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ ի ներկայության հավատացյալ ազգայինների և օտար հյուրերի: Պատարագին հաջորդեց Նորին Սրբությանն ի պատիվ կազմակերպված ճաշկերույթը, որով եզրափակվեց Վեհափառի մեկօրյա այցելությունը այդ գաղութին:*

***

Հայաստանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատողներից և այժմ Կանադայի Հայոց Առաջնորդարանում գործող Արմինե Քյոշկերյանը հետևյալ խորհրդածություններն է կատարել Վեհափառ Հայրապետի Կանադա այցելության վերաբերյալ.

«Մեր անցյալի պատմությունը պահպանած է անունները եկեղեցական շատ գործիչներու, որոնք իրենց փայլուն գործունեությամբ, օրինակելի վարք ու բարքով արժանացած են նաև օտարներու բարձր գնահատանքին կազմելով պարծանքը Հայց. Եկեղեցվո: Օրինակ՝ Սուրբ Ներսես Շնորհալիի (ԺԲ դար) մասին պահպանված է տեղեկություն, թե հույն ոմն իմաստասեր Թիորիանոսը, Բյուզանդիայի Կիր Մանուել կայսեր թելադրանքով, 1170-ին կայցելե Հայաստան, Եկեղեցիներու միության շուրջ արծարծված հարցերը քննելու նպատակով: Ավանդությունը կըսե, թե լսած ըլլալով Հայոց Հայրապետի մտավոր բացառիկ կարողություններու և հարուստ գիտելիքներու մասին, Թիորիանոսը հետը կտանի բազմաթիվ գիրքեր, փորձելու համար ըսվածի հավաստիությունը: Վերադարձին, երբ կհարցնեն, թե արդյո՞ք Շնորհալու համբավը կհամապատասխաներ ճշմարտության, Թիորիանոս կպատասխանե. «Ինչպես լսած էի, այդպես ալ կա»:

Այս օրինակը բերինք, որովհետև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 131-րդ գահակալեն ստացանք նույնպիսի տպավորություն, ուստի թող թույլ տրվի մեզի ըսել. «Ինչպես լսած էինք, այդպես ալ կա, դեռ բան մըն ալ ավելի»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ (ԿԱԼԻՖՈՐՆԻԱ)

Հինգշաբթի օրը, փետրվարի 1-ին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, ամբողջացնելով կանադահայերին տված իր հայրապետական այցելությունը, ուղևորվեց Լոս Անջելոս, այցելելու Արևմտյան թեմի հավատացյալ ժողովրդին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՐՋԱՆ

ԺԱՄԱՆՈՒՄ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ

ՕՐ ԱՌԱՋԻՆ

***Փետրվարի 1-ին,** հինգշաբթի օրը, Վանկուվերից Լոս Անջելոս ժամանեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընկերակցությամբ ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պար-*

սամյանի, Կանադայի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի և գավազանակիր Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի:

Վեհափառ Հորը դիմավորելու էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արևմտյան թեմի բոլոր քաղաքներից ժամանած մի հոծ պատվիրակություն՝ թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ: Այնտեղ էին նաև Կիլիկյան Աթոռի հովանավորությունը վայելող Արևմտյան թեմի տեղապահ Մուշեղ ծ. վրդ. Մարտիրոսյանը՝ ազգային վարչության անդամներով, Կալիֆորնիայի նահանգապետի ներկայացուցիչը, ՀՀ գլխավոր հյուպատոսության առաջին քարտուղարը, քաղաքական, մշակութային, մամուլի և հեռուստատեսության ներկայացուցիչներ:

Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, բարիգալստյան խոսքով հանդես եկավ Վաչե արքեպս. Հովսեփյանը. «Արևմտյան թեմի ամբողջ հոգևոր դասին և ժողովուրդին անունով բարի գալուստ կըսենք Ձեզի: Իմացե՛ք, Հայրապետ, որ մենք Ձեր կողքին ենք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավատավոր զավակներն ենք, մենք Հայաստանի հավատարիմ զավակներն ենք և զորավիգ կկանգնինք Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին»:

Վեհափառ Հայրապետը չափազանց հուզված արտասանեց իր առաջին խոսքը օդանավակայանում՝ ասելով. «Այս վայրկյանին ես, որպես նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս, ոտք կդնեմ ոսկյա այս նահանգին մեջ (Golden State), փառք կու տամ Աստուծո, որ արևուն հետ կողջունեմ ձեր բոլորին նայվածքները, որոնք ուղղված են ի Մայր Հայաստան, ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Իմ աչքերուս մեջ ես ոչինչ ունիմ անձնական այլևս: Ինչ որ կտեսնեք, Հայրենիքի լույսն է, Մայր Աթոռի՝ մեր բոլորի ազգային ծննդավայր և Բեթղեհեմ Սուրբ Էջմիածնի կանթեղին լույսն է, որ իմ տկար անձիս մեջեն այժմ կարտացոլա դեպի ողջ հայությունը ի Մայր Հայաստան և ի սփյուռս աշխարհի»:

Այնուհետև Վեհափառը, շարունակելով իր խոսքը, ավելացրեց. «Փառք կու տամ Աստուծո, որ ինձի շնորհեց կարելիությունը ձեզ ողջունելու այստեղ, ձեզ աղոթակից դառնալու և օրհնելու Միացյալ Նահանգաց այս երկիրը և Կալիֆորնիո նահանգը, որ մեր ժողովուրդին կյանքին մեջ իր կարևոր ներդրումը ունի: Մեր ժողովուրդի բոլոր զավակներն ալ իմ սրտիս մեջ տեղ ունին, բոլորն ալ Ամենայն Հայոց Հայրապետին զգացումներուն, մտածումներուն, գործերուն մեջ իրենց հավասար տեղն ունին:

Փառք և գոհություն կընծայեմ Աստուծո, որ ինձ նման խոնարհ և փոքր անձի մը տվավ այն շնորհը, որ ըլլամ առաջին հայ կաթողիկոսը, որ կարենամ ազատ ու անկախ Հայաստանեն գալ՝ ազատության ու անկախության շունչը փոխանցելու: Իմ մաղթանքն ու աղոթքն է, որ մինչև վերջին շունչս այդ ազատությունն ու անկախությունը այլևս

ստվեր չտեսնեն, հարաճուն կերպով աճի ու զարգանա, ամրանա, որ մենք այս աշխարհի մեջ մեր պատմությանը արժանի ազգը ըլլանք այսօր, վաղը և հավիտյանս»:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԵՎ «ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ուղղվեց դեպի Արշակ Տիգրանյան վարժարան, Մայր Եկեղեցու և Ազգային Առաջնորդարանին կից, որտեղ արժանացավ ջերմ ընդունելության դպրոցի հոգաբարձության, տնօրենության և ուսուցչական կազմի, աշակերտության ու ժողովրդական բազմության կողմից: Վեհափառին դիմավորողների մեջ էին դպրոցի բարերար 90-ամյա ազգանվեր հայորդի Արշակ Տիգրանյանն ու իր տիկինը:

Վեհափառը վարժարանի մուտքին դիմավորվեց հարյուրավոր ուսանողների և ազգայինների ջերմ ծափողջույններով և առաջնորդվեց վարժարանի սրահ:

Վարժարանի տնօրեն Վարդգես Գուրոյանը վարեց աշակերտների մասնակցությամբ գործադրված հայտագիրը, որում եղան հավուր պատշաճի ուղերձ, ասմունք և երգ ու պար:

Այս կարճ հայտագրից հետո, Վեհափառը օրհնեց աշակերտությանն ու թելադրեց. «Ձեր անձերուն մեջեն, սիրելի փոքրիկներ, կողջունեմ ողջ սերունդը նոր, ամբողջ Արևմտյան թեմի այս սահմաններու մեջ, բոլոր դպրոցներու մեջ անխտիր: Նոր սերունդը կողջունեմ ամենաքաղցր սիրով, ամենախորունկ հավատքով և ամենապայծառ հույսով: Գիտե՞ք ինչու... որովհետև կու գամ Նո՛ր Հայաստանեն: Սիրելի փոքրիկներ, ձեր սրտերուն մեջեն երբեք դուրս չհանեք Ձեր Հայաստանի քույրերն ու եղբայրները: Հայաստանի փոքրիկներն, հակառակ իրենց նեղության, քաջությամբ կդիմանան: Ահա թե ինչու ես հարգանք ունիմ այս նոր սերունդին հանդեպ: Այս ժողովուրդը չէ եղած ընկճվելու համար՝ այլ եղած է ընկճելու համար»:

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը սիրով դարձավ դեպի բարերարներ Տեր և Տիկին Տիգրանյանները՝ ասելով. «Կողջունեմ իմ սիրելի բարեկամ և ազգային բարերար Արշակ Տիգրանյանը: Այս այն հայ մարդն է, որուն հայրը թերևս ձեզմե ջատերը չեն ճանչցած, բայց Միրհրդատը ես ճանչցած եմ և այսօր հարգանք կընծայեմ իր հիշատակին, որ այսպիսի զավակ տվավ: Նա, որ Ամերիկայեն մինչև Լիբանան կու գար հայ ուսուցիչներ համախմբելու համար, ուժ կու տար, սիրտ կու տար նրանց: Արժանավոր Հոր արժանավոր զավակ»:

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Արշակ Տիգրանյան» վարժարանի հանդիսությունից հետո, Վեհափառ Հայրապետը ամպհովանու տակ, եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդվեց Սուրբ Հովհաննես Մայր եկեղեցի:

Այստեղ բարիգալստյան ջերմ ելույթ ունենալով թեմի Առաջնորդ Վաչե Սրբազանը, Վեհափառի այցելությունը պատմական որակեց և հանուն հոգևորական դասի ու ժողովրդի հաջողություն մաղթեց Հայոց Հայրապետին իր առաքելության ու նպատակների իրագործման ճանապարհին , այն դեպի 21-րդ դար առաջնորդելու հեռանկարով: Վեհափառը թելադրեց, որ վեր մնանք երկրորդական նկատառումներից և միասնական ոգով, Հայ Եկեղեցի, հայ ժողովուրդ և հայ պետություն ձեռք-ձեռքի տված կերտենք, ամրապնդենք ու զորացնենք Մայր Հայրենիք Հայաստանը և շենցնենք Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով:

Պատասխան խոսքում Գարեգին Վեհափառը ևս մեկ անգամ շեշտեց նորանկախ Հայրենիքի ամրապնդման կարևորությունը: Իր խոսքի համար առանցք ունենալով մեկ ժողովուրդ, մեկ Եկեղեցի, մեկ Հայրենիք կարգախոսը, Վեհափառ Հայրապետը ասաց, թե հուզումով է կանգնած այս Սուրբ Խորանի վրա, որովհետև «Հայ Եկեղեցու պետականորեն ընդունման օրեն ասդին անցած տասնյոթ դարերը մեզի կնային և ծանր լուծ մը կդնեն իմ ուսերուն՝ Հայ Եկեղեցվո առաքելությունը հառաջ տանելու հրամայականով»: Ապա շարունակելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետն ավելացրեց, թե «Էջմիածինը քար չէ, Էջմիածինը հիշատակ չէ, Էջմիածինը միայն սրբություն չէ: Էջմիածինը առաքելություն է: Նվիրականություններ կան, որոնք ոչ մեկ սակարկության առարկա կրնան դառնալ: Այդ նվիրականություններն են Եկեղեցին, Հայրենիքը, լեզուն, գրականությունը, մշակույթը և մեր հոգևոր վերածննդյան սրբազնագույն օջախը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

Եկեղեցական արարողությունից հետո, ըստ ծրագրվածի, եկեղեցու հարակից «Ուզունյան» սրահում տեղի ունեցավ մամլո ասուլիս՝ ամերիկյան և հայ մամուլի ներկայացուցիչների հետ: Ներկա էին Los Angeles Tims, Fresno Bee, Armenian Observer, California Courier, *«Նոր Կյանք», «Նոր Օր», «Մասիս», «Ասպարեզ», «Նոր Հայաստան», «Հայ Կյանք», «Քաջ Նազար» թերթերի, ինչպես նաև հայ և ամերիկյան հեռուստակայանների ներկայացուցիչները:*

Վաչե Սրբազանը ամփոփ գծերով ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին և ապա խոսքը փոխանցեց նրան:

Վեհափառ Հայրապետը ուրախություն հայտնեց, որ իր ժամանման առաջին օրը հանդիպում է մամուլի ներկայացուցիչների հետ, որովհետև ինքը ևս եղել է ամսագրի խմբագիր և աշխատակցել թե՛ հայ և թե՛ օտար թերթերին, հետևաբար այս հավաքականության հետ հարազատություն է զգում: Ինչ վերաբերում է իր այցելությանը, Վեհափառն ասաց. «Նպատակս է ճանչնալ ժողովուրդը իբրև ապրող ներկայություն, շարժուն համայնք և ոչ իբրև սոսկ մտածողներ, անուններ կամ թվեր, վիճակագրություններ, որոնք նկարագրվում են մամուլի միջոցով՝ գրավոր տեղեկագրերով: Այցելելե ետք Հայաստանի գրեթե բոլոր թեմերը, Սփյուռքի հայկական գաղութներուն իմ առաջին այցելությունս սկսա Հյուսիսային Ամերիկայեն, Միացյալ Նահանգներ և Կանադա, որովհետև մենք այս ցամաքամասին վրա ունինք սփյուռքահայության մեծագույն թիվը: Հետևաբար հոս եկած եմ ծանոթանալու ժողովուրդի կյանքին և միաժամանակ զանոնք հաղորդակից դարձնելու այն նոր կացության և պայմաններուն մասին, որոնց ներքև կապրին այսօր մեր Եկեղեցին և ազգը Մայր Հայրենիքի մեջ: Եթե ես հոս ըլլայի տասը տարի առաջ, միևնույն անձը պիտի չըլլայի, ինչ որ եմ այսօր, Հայաստանի ազատության և անկախության հոչակումեն ետք: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կոչվել է այժմ ավելի աշխույժ և պատասխանատու կերպով ժողովուրդին կյանքեն ներս գործելու, ձերբազատված լինելով Խորհրդային Միության 70 տարվա տիրապետութենեն, որուն մասին դուք լավապես տեղյակ եք»:

Այս հակիրճ նախաբանից հետո, մամլո ներկայացուցիչները ուղղեցին իրենց հարցերը, որոնց Վեհափառ Հայրապետը պատասխանեց անգլերեն և հայերեն լեզուներով:

Հարցերն ընդգրկեցին հետևյալ թեմաները. Հայ Եկեղեցու միության հարցը, Հայաստանում ժողովրդավարության հարցը, ներքին Սփյուռքի այժմյան պատկերը, աղանդների ծավալած գործունեությունը Հայաստանում, Եկեղեցու ընկերային ծառայությունը, Երևանում կառուցվելիք Մայր տաճարը, Հայ Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարության ուղղությամբ նախատեսված աշխատանքները և այլն: Այս բոլորի համար Վեհափառ Հայրապետը կատարեց առարկայական վերլուծումներ և իմաստությամբ օծուն պատասխաններ տվեց:

ՀՈՒԾ-ԵՐԵԿՈ ԼԵՎՈՆ ՋԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վեհափառ Հայրապետը փետրվարի 1-ի երեկոյան իր շքախմբի հետ ներկա գտնվեց բանաստեղծ Լևոն Ջավեն Սյուրմելյանի հիշատակին նվիրված մեծարանքի հանդիսությանը: Ձեռնարկը տեղի ունեցավ Գլենդելում՝ ավելի քան հազար հոգիների ներկայությամբ:

Այս տպավորիչ ու մեծաշուք հանդիսության հանդիսավարն էր Բարսեղ Գարթալյանը: Նա իրեն հատուկ ճարտարությամբ վարեց

ամբողջ երեկոն: Գլխավոր բանախոսն էր Թորգոմ Փոստաջյանը, որ Լևոն Զավեն Սյուրմելյանի մոտիկ բարեկամն էր եղել հատկապես նրա կյանքի վերջին տարիներին:

Գնահատանքի խոսքով հանդես եկան հայ համայնքի ներկայացուցիչներ, մտավորական դեմքեր և լրագրողներ, որոնք վեր հանեցին և բարձրորեն ներկայացրեցին տաղանդաշատ բանաստեղծի կերպարը:

Վերջում իր հայրական պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը, որ ներշնչված ու իրեն հատուկ պերճախոսությամբ իրար զոդեց բանաստեղծին ու նրա ստեղծագործությունը, Հայ Առաքելական Եկեղեցին, մշակույթի՝ գրքի հանդեպ սերը և ընթերցանության անհրաժեշտությունը:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ

***Փետրվարի 2-ին, ուրբաթ** օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն առավոտյան պաշտոնական նախաճաշ-ընդունելություն ունեցավ Կալիֆորնիայում գործող հայ իրավաբանների հետ:*

Հայ իրավաբանները, որոնցից ոմանք մեծ ճանաչում ունեն ոչ միայն հայ համայնքում, այլև ամբողջ նահանգում, ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները, ինչպես նաև ցանկություն հայտնեցին իրենց մասնագիտական պատրաստվածությամբ և կուտակած հսկայական փորձով օգտակար լինել բերել Հայրենիքի վերաշինության գործին՝ պետության իրավական համակարգը բարելավելու և զարգացնելու նպատակով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, գնահատելով նրանց կատարած աշխատանքը և հային վայել պարտականությունների կատարումը մի օտար երկրում, հույս հայտնեց, որ նրանց աշխատանքն ու գործունեությունը չսահմանափակվի սոսկ իրենց բնակության վայրով, այլ նաև տարածվի սեփական Հայրենիքում՝ զորացնելով և ամրապնդելով այն որպես ազատ և ժողովրդավարական մի երկիր՝ աշխարհի մյուս պետություններին համահավասար աստիճանով ու մակարդակով:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ժամը 9.45-ին Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ Վաչե, Հովնան և Արիս սրբազանների ու մի խումբ հոգևորականների ու աշխարհականների, Լոս Անջելոսի քաղաքապետարանի դահլիճում հանդիպում ունեցավ քաղաքապետ Ռիչարդ Ռիրդանի, Քաղաքա-

պետական խորհրդի նախագահ Ջոն Ֆերարոյի և Քաղաքապետական խորհրդի մյուս անդամների հետ:

Վեհափառ Հայրապետին շենքի մուտքի մոտ ընդունեց պաշտոնական այցելությունների պատասխանատու տիկին Լուրտես Սասպը, որը հյուրերին առաջնորդեց քաղաքապետի հյուրասրահ:

Քաղաքապետ Ռիրթընի և Ամենայն Հայոց Հայրապետի հանդիպմանը ներկա էին նաև Քաղաքապետարանի խորհրդի նախագահ Ջոն Ֆերրարոն և փոխքաղաքապետ Բիլ Վիոլանդեն:

Հանդիպումից հետո Վեհափառը քաղաքապետի ընկերակցությամբ և իր շքախմբով ուղղվեց դեպի քաղաքապետարանի պաշտոնական սրահ, որտեղ իրեն ողջունեցին Քաղաքապետարանի խորհրդի անդամներն ու ներկաները:

Նախ քաղաքապետ Ռիչարդ Ռիրթընը շեշտեց Լոս Անջելոսի հայկական գաղութի կարևորությունն ու դրվատեց նրա բերած նպաստը քաղաքի բարգավաճման գործին: Նա նշեց, թե Լոս Անջելոսի հայկական գաղութը Սփյուռքի մեծագույն հայկական գաղութն է և լայն մասնակցություն ունի քաղաքի ծաղկման ու զարգացման մեջ:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ

Իբրև գնահատանք և երախտագիտություն քաղաքապետ Ռիրթընը Վեհափառին նվիրեց «Ֆրանկլին Մինթ» մեդալը: Քաղաքապետը անդրադարձավ նաև, թե Վեհափառ Հայրապետի նախորդ այցելությանը, երբ նա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն էր, փոխանցել էին Լոս Անջելոս քաղաքի բանալին:

Լոս Անջելոսի Քաղաքապետարանի խորհրդի կողմից բարի գալուստի խոսքերով ելույթ ունեցավ նախագահ Ջոն Ֆերարոն:

Փոխադարձաբար, Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալության խոսք ուղղեց քաղաքապետին և Քա-

դաքապետական խորհրդին, որ այս առիթը ընծայելով ողջունեց իր՝ Լոս Անջելոս այցը: Վեհափառ Հայրապետը անդրադարձավ որպես Կաթողիկոս իր ունեցած պարտականությունների հսկայածավալ տարողությանը և ներկայացրեց Հայաստանի և հայության այսօրվա կացությունը: Վեհափառը դիպուկ դիտարկումներով նշեց, որ ամեն ընկերության կյանքում հարկավոր է ավելի լայն և ազդեցիկ տեղ տալ հոգևոր և բարոյական արժեքներին և չխեղդվել սպառողական ընկերությանը հատուկ վաղանցուկ արժեքներով և հաճոյապաշտական վարվեցակերպով: Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը հայկական մի խաչքար նվիրեց քաղաքապետ Ռիրթընին, որպես հիշատակ Հայ Եկեղեցուց:

Պաշտոնական արարողակարգից հետո Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև քաղաքապետարանի պաշտոնեության հետ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 11.00-ին, Լոս Անջելոսի բոլոր հայկական վարժարանների բարձր դասարանների աշակերտների, ինչպես նաև օտար դպրոցներ և քոլեջներ հաճախող շուրջ 2.000-ի հասնող հայ ուսանողների մի ծովածավալ բազմություն էր հավաքվել Հոլիվուդի «Հայ Սքուլի» ընդարձակ դահլիճում:

Ներկայացվեցին գեղարվեստական հայտագիր ՀԲԸՄ-ի և այլ վարժարանների կողմից: Ապա Վեհափառ Հայրապետը տվեց իր իմաստալից պատգամը՝ նախ փառք վերառաքելով առ Աստված, որ ի դեմս այս երեխաների կանգուն և շեն է պահում հայ կյանքը այս հեռավոր և ազգապահպանման իմաստով դժվարություններով լեցուն երկրում: Ապա նա, խոսքն ուղղելով երեխաներին, կարևորեց այս հյուրընկալ ափերին տիպար քաղաքացիներ և տիպար հայեր լինելու անհրաժեշտությունը՝ ավելացնելով նաև, որ այսօրվա հայ մանուկներն ու երիտասարդությունը երանելի օրեր են ապրում, որովհետև իրենց հայրերի և պապերի երազանքը իրականացել է՝ ազատ ու անկախ է Հայաստան աշխարհը, որից էլ ազատության և վերածաղկման նոր շունչ է տարածվում նաև հայոց հավատքի կենտրոն Սուրբ Էջմիածնում, որին նայում է աշխարհի չորս ծագերի հայությունը: Վեհափառ Հայրապետն ավելացրեց, որ ինքը ևս Հայրենիքում չի ծնվել, բայց մանկությունից ի վեր Հայրենիքն է իր մեջ ծնվել և այսօր այն վերածնվել է իր ազատությամբ և անկախությամբ: Այժմ անհրաժեշտ է նոր սնունդով աճեցնել և մեծացնել այն:

Վեհափառ Հայրապետի հայրական պատգամից և հանդիպման պաշտոնական մասից հետո, նույն դպրոցում ճաշկերույթ տրվեց ի պատիվ Գարեգին Վեհափառի և իր շքախմբի, որին մասնակցում էին նաև յուրաքանչյուր դպրոցի տնօրենը, ուսուցիչներ և մեկական աշակերտ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՆ ԹԵՄԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Երեկոյան ժամը 19.45-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Մեծի Տանն Կիլիկիո հոգևոր խնամակալության տակ գտնվող Սուրբ Կարապետ եկեղեցի, որտեղ եկեղեցու բակում խոնված բազմությունը՝ շուրջ 1500 հոգի ծափողջույններով դիմավորեց Նորին Սրբության գալուստը:

Եկեղեցու մուտքին տեղի ունեցավ աղ ու հացի օրհնության ավանդական արարողությունը: Ապա Մեծի Տանն Կիլիկիո Արևմտյան Ամերիկայի թեմի Առաջնորդական տեղապահի, հոգևորականության, աշխարհական մարմինների, կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչների, ՀՄԸՄ-ի արի-արենուշների, երգեցողության և զանգերի իրիկնային ղողանջների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը ամպհովանու ներքո ուղղվեց և մուտք գործեց եկեղեցի:

Գոհաբանական աղոթքից և մաղթանքից հետո, խոսք առավ առաջնորդական տեղապահ Մուշեղ ծ. վրդ. Մարտիրոսյանը: Նա բարի գալուստ և արևշատություն մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին հանուն Հայաստանի, Արցախի և համայն հայ ժողովրդի բարգավաճման՝ ասելով. «Մեզմե շատեր սնած են Ձեր շունչով, շատերի համար եղած եք ներշնչանքի աղբյուր և տեսիլք ունեցող հոգևորական: Հետամուտ նույն այդ տեսիլքին կգործեք իբրև նոր օրերու Խրիմյան Հայրիկ: Ձեր օրհնաբեր ներկայությամբ պատմությունն է, որ կկերտենք այսօր: Ձեր գահակալության տարիներուն ի՞նչ փոփոխություններ կրնան ըլլալ հայ ժողովուրդի կյանքին մեջ: Հուսով ենք մեր ժողովուրդի նավը պիտի առաջնորդեք խաղաղության նավահանգիստ, մեկ Հայրենիքի տեսլականով»:

Իր խոսքի ավարտին Մուշեղ ծ. վրդ. Մարտիրոսյանը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին որպես հիշատակ նվիրեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ոսկյա հուշամեդալը: Ապա Հայր Սուրբը հրավիրեց Վեհափառ Հայրապետին տալու իր պատգամը:

Նորին Սրբությունը մեծ հուզմունքով սկսելով իր խոսքը, նախ եղբայրական ողջույններ հղեց Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետ Արամ Ա-ին՝ մաղթելով, որ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը մնա ծաղկուն և պտղառատ, որովհետև այդ Աթոռը մեծ դերակատարություն է ունեցել մեր պատմության մեջ:

Վեհափառ Հայրապետը վերհիշեց դարասկզբի մեծ ողբերգությունները, որով որոշ քաղաքագետներ այն համոզմանը հանգեցին, թե Հայոց Պատմությունն ավարտված է: Սակայն, ինչպես նշեց Վեհափառը, քաղաքագետները մարգարեներ չեն: Հայ ժողովուրդը կարողացավ բարձրանալ ու Սարդարապատով երկնել իր անկախությունը: Դեպքերի բերումով կորցրեցինք անկախությունը, որին հաջորդեցին 1937 թվականի և Համաշխարհային Երկրորդ պատերազմի զոհերը:

Շեշտելով ներկա պատմական պահի կարևորությունը, Վեհափառն ասաց. «Եթե մեկը կարծե, թե ամեն ինչ անփոփոխ է, ոչինչ կհասկնա պատմութենեն: Ինչպե՞ս փառք չտանք Աստուծո, որ սևով սկսած դարը կփակվի նոր անկախությունով: ՄԱԿ-ի բազմաթիվ դրոշակներու կողքին կտեսնենք Հայոց Եռագույնը, որ մեր ինքնությունը կխորհրդանշե»: Պատմական պահի կարևորությունը ընդգծելով, Նորին Սրբությունը մատնանշեց Սուրբ Էջմիածնի առանձնահատուկ տեղը այսօրվա և ապագայի կերտման գործում՝ ասելով. «Էջմիածինը միայն սրբություն չէ, Էջմիածինը միայն պատմություն չէ: Էջմիածինը առաքելություն է, ո՛չ թե ավանդություն, ո՛չ թե հիշատակ: Այն գործունություն է՝ հակասաստվածյան մի բռնական վարչակարգի բերած հետքերը մեր ժողովուրդի հոգիի վրայեն կամաց-կամաց վերցնելու, որ ժողովուրդը գտնե իր դիմագիծը, որ Գրիգոր Լուսավորիչ տվավ մեզի: Սուրբ Էջմիածինը հայկական Բեթղեհեմ կկոչեմ ես: Այն կոչված է հայ ժողովուրդի կյանքի մեջ բարանորոգումներ կատարելու»:

Նա հատուկ կերպով շեշտեց հետևյալ իրողությունը. «Դուք ինձ լավ կճանաչեք, որովհետև ես իբրև հոգևորական սնվել և կազմավորվել եմ Կիլիկյան Աթոռի դպրեվանքում: Երկար տարիներ ծառայել եմ այդ Աթոռին որպես միաբան՝ աբեղա, վարդապետ, եպիսկոպոս և Կաթողիկոս: Ես իմ բաժինը բերել եմ նաև այս թեմի գործունեությանը, անձամբ եմ օծել այս եկեղեցին, ինչպես ուրիշ եկեղեցիներ այս թեմում: Այսօր, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ես կմնամ նույն անձը՝ նույն, մեկ և անբաժան Եկեղեցու որպես առաջին սպասավոր:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ամբողջ հայության կպատկանի, և իմ սրտի մեջ տեղ ունի մեր Եկեղեցու զավակները առանց խտրության: Պատմական այս նոր դարաշրջանին, մեր բոլորից պահանջված է միության ամրապնդում և միասնության գործնական արտահայտություն»:

Խոսելով Հայաստանի տարբեր շրջաններ և Արցախ կատարած իր հովվապետական այցելությունների մասին, Գարեգին Վեհափառն ասաց. «Հայաստանը դժվար օրեր կապրի: Պարտք զգացի հաղորդակցվելու ժողովուրդիս հետ և ճանչնալու զայն: Տեսա դժվարությունները, և ուխտս ավելի ամրացավ: Այդ ժողովուրդին ծառայելը ամենամեծ պատիվն է ինձի համար, ի գին ամեն զոհողության, նույնիսկ, եթե պետք ըլլա կյանքով»:

Անդրադառնալով մեր ժողովրդի առաջընթացին, Վեհափառը կարևորագույն նշանակություն ընծայեց հոգեկան կերպարանափոխությանը, որ մեզ ազգովին վերելքի պիտի առաջնորդի, պատգամելով. «Կերպարանափոխությունը ազգի մը մեծ արժանիքներեն մեկն է: Մեր Եկեղեցին իր հոգևոր առաքելության կողքին ազգակերտումի դեր ունի: Եկեք շինենք լույսի խորանը մեր հավատքով»:

Սրտահույզ իր խոսքերի ավարտին Վեհափառ Հայրապետը Մուշեղ

Հայր Սուրբին հանձնեց Սուրբ Էջմիածնից բերած սկիհ՝ որպես խորհրդանիշ սիրո, զոհողության և միության:

Ապա դպրաց դասի կատարմամբ հնչեցին «Կիլիկիա»-ն և «Մեր Հայրենիք»-ը՝ ժողովրդի ձայնակցությամբ, որին հաջորդեցին Կաթողիկոսական օրհնությունը և Աջհամբույրը:

Այդ երեկո Հոլիվուդի Սուրբ Կարապետ փոքրիկ եկեղեցին և այնտեղ խոնված բազմությունը վկան եղան պատմական մի պահի: Ամենայն Հայոց Հայրապետի խոսքերը վստահորեն արձագանքվեցին ներկաներից յուրաքանչյուրի սրտում և կարելի էր լսել լռության միջից հնչող պատասխանը.

Բարի գալո՛ւստ, Վեհափառ Տեր:

ՄԱՐԿԵՐՈՒՑԹ ՔԵՍԱՊՑԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Վեհափառ Հորը հանելի անակնկալ մատուցեցին քեսապցի հայրենակիցները: Ուրաթ օրը փետրվարի 2-ին, Քեսապի Ուսուցասիրաց Միությունը նախաճաշի հրավիրեց Նորին Սրբությանը, որին ներկա էին շուրջ 400 քեսապցի հայրենակիցներ: Հայ Ավետարանական Եկեղեցու «Սվազյան» սրահում տեղի ունեցած այս հայրենակցական հավաքը ուներ յուրահատուկ բնույթ: Մթնոլորտը ավելի ազգականական և ընկերային էր, քան պաշտոնական: Վեհափառ Հայրապետն այստեղ ևս տվեց իր պատգամը՝ շեշտելով բոլոր հայերի, անկախ ծննդավայրից ու բնակության վայրից, արյունով և անունով մեկ և նույն լինելու պարագան: Գարեգին Վեհափառը իր պատգամը տվեց՝ մասամբ արտահայտվելով նաև Քեսապի բարբառով:

Ամենայն Հայոց Հայրապետն իր սրտի խոսքն ասելուց հետո իր համագյուղացիներին, «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պատվեց Տիկ. Զվարթ Աբելյանին իր 41 տարվա ծառայության համար, որպես

հայոց լեզվի, պատմության և գրականության ուսուցչուհի հայ դպրոցներից ներս, Բեյրութից մինչև Լոս Անջելես: Իսկ Դոկտ. Ժակ Աբդուլյանին պարգևատրեց «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով՝ հայությանը իր մոտ 50 տարվա անշահախնդիր ծառայության համար:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ՓԱՍԱԴԵՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Շաբաթ օրը, փետրվարի 3-ին, *ժամը 10.30-ին, հակառակ տեղացող անձրևին, խուռներամ բազմություն էր հավաքվել Փասադենայի քաղաքապետարանի մուտքի մոտ:*

Այստեղ Վեհափառ Հայրապետը արժանավայել կերպով և սիրազեղ ծափողջույններով ընդունվեց քաղաքապետ Բիլ Փափարյանի և իրեն դիմավորելու եկած հարյուրավոր հայերի կողմից, որոնք ներկայացնում էին ամերիկահայության տարբեր խավերը: ՀՄԸՄ-ի Փասադենայի «Ազատամարտ» մասնաճյուղի արիների և արենուշների կարգապահ շարքերի ուղեկցությամբ Վեհափառը, մուտք գործելով քաղաքապետարանի դարպասից, նախ իր հարգանքը մատուցեց մուտքի մոտ գտնվող Վիետնամի վետերանների հուշարձանին ու ապա բարձրացավ դահլիճ, ուր արդեն իսկ խռնված էր իրեն սպասող հոծ բազմությունը:

Քաղաքապետարանի դահլիճում ընդունելության պաշտոնական բացումը կատարելով, շրջանի Հայ Դատի Հանձնախմբի ներկայացուցիչ Աիդա Դիմիջյանը բարի գալուստ մաղթեց Վեհափառին՝ հիշելով, որ դեռևս երկու տարի առաջ Նորին Սրբությունը Փասադենա էր այցելել որպես Մեծի Տանն Կիլիկիո Գահակալ, իսկ այսօր՝ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Այնուհետև բարիգալստյան խոսքով ելույթ ունեցավ քաղաքապետ Բիլ Փափարյանը: Նա նախ շնորհակալություն հայտնեց Վեհափառին՝ Փասադենա քաղաքին շնորհած իր օրհնաբեր այցելության համար՝ նշելով, որ Փասադենան, ընկալյալ սովորության համաձայն, այսօր քաղաքի բանալի պիտի չհանձնի Վեհափառ Հայրապետին այն պարզ պատճառով, որ այս քաղաքը դռան կարիք չունի, այլ «Ընդհակառակը մեր ժողովուրդը հյուրասեր է ու ազնիվ... և քաղաքի պարզ բանալիին փոխարեն, որ հիմնականին մեջ բարի գալուստի խորհրդանիշ մըն է, մեր բոլոր բնակիչները իրենց սրտերը բացած են Ձեզի և Ձեր խաղաղության ու սիրո պատգամին»:

Ողջունելով Վեհափառի այս այցելությունը, նա մասնավորաբար շեշտեց երիտասարդությանն ուղղված Վեհափառ Հայրապետի պատգամը, «որովհետև Ամերիկայի մեջ ապրող երիտասարդությունը տագնապալի շրջան մը կդիմագրավե», ասաց նա: Երիտասարդության այդ տագնապների մեջ նա մասնավորեց «հոգևոր արժեքներու

և նյութական կարիքներու պայքարը»՝ ավելացնելով, որ «բոլոր անոնք, որոնք կարիքը ունին առաջնորդության, շատ պիտի օգտվին Ձեր հորդորեն»:

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը, որ ներկաներին ողջունելուց և իր նախորդ այցելությունը հիշելուց հետո, ասաց. «Այժմ ես հայերով ներխուժված Փասադենայի մեջ եմ»՝ անմիջապես ավելացնելով, թե «Մի՛ վախնաք, մենք ներխուժող ժողովուրդ չենք, մենք ուրիշներու կողմե միշտ ներխուժված ենք մեր Հայրենիքին մեջ»: Նա բացատրեց իր խոսքն ասելով, որ հայության ներխուժումը նշանակում է մասնակցություն խաղաղության, կյանքի և ստեղծագործության:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց Փասադենայի նոր քաղաքապետ Բիլ Փափարյանին, որ իր նախորդ այցելության ժամանակ Քաղաքապետական խորհրդի անդամ էր, իսկ այժմ կոչված է ավելի կարևոր պատասխանատվության,՝ և միշտ առաջադիմելով ու վեր բարձրանալով ժողովրդին ծառայելու գիտակցությունն ակնարկելով Նորին Սրբությունը հայտարարեց. «Ա՛յդ, ես կկոչեմ հայկական ոճ»:

«Վարդերի քաղաք» կոչված Փասադենային անդրադառնալով, Վեհափառը հիշեցրեց, որ «երկիրը, ուրկե ես կուգամ, վարդերու երկիր չէ, ոչ ալ մեղրի երկիր: Վարդեր ունի, բայց վարդերն ունին իրենց փուշերը: Մենք կվերականգնվինք 70 տարվան ամբողջատիրական պետութենեն»: Հայաստանի ազատության և անկախության մասին խոսելով, Նորին Սրբությունը այսօրվա Անկախ Հայաստանի Հանրապետությունը նկատեց մեր երազի իրականացումը ու փառք տվեց Աստուծո, որ «մեզ բոլորս ականատեսը ըրավ այդ մեծ նվաճումին, որուն համար մեծ թիվով հերոսներ իրենց կյանքերը տվին, մեծ թիվով բանաստեղծներ իրենց լավագույն բանաստեղծությունները գրեցին, մեծ թիվով մայրեր ազատության «Օրոր»-ը երգեցին, մեծ թիվով ալեհերներ ըսին՝ «Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում էր, Հայրենիքի ազատություն տեսնել ու մեռնել»:

Իր խոսքում Վեհափառը մեկ անգամ ևս վերահաստատեց իր հանձնառությունը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի ու Հայաստանի նկատմամբ՝ եզրակացնելով, որ իբրև «Նոր, Ազատ և Անկախ Հայաստանի մեջ ընտրված առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոս, սիրտս ոչ մեկ ձևի խտրություն կճանչնա, ոչ մեկ հայու նկատմամբ: Հայ Եկեղեցվո բոլոր զավակները ես կնկատեմ զավակները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ինչպես կնկատեի, երբ էի Կիլիկյան Աթոռի Կաթողիկոս»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԲԸՄ-Ի «ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Նույն օրը, առավոտյան ժամը 11.30-ին, Ամենայն Հայոց Հայրապետը իր օրհնաբեր ներկայությամբ պատվեց ՀԲԸՄ-ի

Փասադենայի «Ալեք Մանուկյան» Կենտրոնը:

ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկյան» Կենտրոնի մուտքի մոտ Նորին Սրբությանը դիմավորեցին ՀԲԸՄ-ի Հարավային Կալիֆորնիայի Շրջանային հանձնաժողովի անդամները:

Ընդունելության սրահում բարիգալստյան խոսք ասացին Բարսեղ Գարթալյանը, որ նաև հանգամանորեն ներկայացրեց միության պատասխանատուներին, Ատենապետ Կարո Ատոմյանը և Սինան Սինանյանը:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը նշեց, թե գալիս է Դետրոյտից, որտեղ սիրալիր հանդիպում էր ունեցել ազգային անզուգական բարերար և ՀԲԸՄ-ի ցկյանս պատվակալ նախագահ տիար Ալեք Մանուկյանի ու նրա որդու՝ ՄԱՍԱԲՕ Ընկերության Տնօրեն Խորհրդի նախագահ Ռիչարդ Մանուկյանի հետ և իր բարձր գնահատանքը հայտնեց այն ջերմ ընդունելության համար, որ Ալեք և Ռիչարդ Մանուկյանները վերապահել էին իրեն:

Գարեգին Վեհափառը գերազանց գնահատականով արտահայտվեց ազգաշեն այն բացառիկ գործունեության մասին, որը Բարեգործականը ծավալում է գլխավորությամբ նախագահ Լուիզ Սիմոն Մանուկյանի նվիրյալ առաջնորդության, արտաշխարհում և հատկապես Հայրենիքում, մասնավորաբար ճգնաժամային այս օրերին, երբ Միությունը իր նյութական ու բարոյական միջոցները ի սպաս է դրել Հայրենիքի ազատության և անկախության ամրապնդմանը և Սուրբ Էջմիածնի պայծառացմանը: «Ես եկած եմ իմ տունս»,ասաց Վեհափառ Հայրապետը և հատկապես շեշտեց ՀԲԸՄ-ի հետ ունեցած իր երկար տարիների սերտ գործակցությունը, Բարեգործականի Դարուհի Հակոբյան Օրիորդաց Վարժարանի իր ուսուցչության օրերից մինչև այսօր. «Այդ փոխհարաբերությունը ամեն օր ալ ավելի կզարգանա ու կզորանա», ասաց Վեհափառը և հորդորեց միութենական պատասխանատուներին ու անդամներին՝ շարունակելու իրենց Աստվածահաճո հայրենասիրական գործը ի նպաստ Մայր Հայրենիքի ու Սուրբ Էջմիածնի:

ՍԻՐՈ ՍԵՂԱՆ ՓԱՍԱԴԵՆԱՅԻ ՀԲԸՄ-Ի ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փասադենայի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնում Վեհափառ Հայրապետը, Ծխական խորհուրդների և եկեղեցիների Տիկնանց վարչությունների անդամների հետ հանդիպելուց հետո (ինչպես նաև Պոլսահայ Միություն, ՀԲԸՄ-ի վարչություն), այցելեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր « Հրաշափառ»-ով դպրաց դասի կողմից առաջնորդվեց դեպի Ս. Խորան:

Այստեղ Վեհափառ Հայրապետը իր պատգամը տվեց հավաքված հավատացյալ բազմությանը, հորդորելով արժանի ժառանգորդները լինել Սուրբ Գրիգոր Լուսավորչի, ում անունը տարածվել է մինչև

Ամերիկայի հեռավոր ափերը ի դեմս Սուրբի անունը կրող այս եկեղեցու: Լուսավորչի հավատքի պտղաբերումն է այսօրվա հայությունը, որն այժմ առավել պատասխանատվությամբ պիտի լծվի Եկեղեցու և Հայրենիքի վերաշինության գործին, որի սրբացած հողին որպես ոռոգման անսպառ ու կենսատու ջուր եղավ Մեծագործ Սուրբի պարզկա արցունքը:

Ապա Թաղական խորհուրդը եկեղեցու վերնասրահում սիրո-սեղան ճաշկերույթով պատվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ներկա էին եկեղեցու հովանու ներքո գործող հարակից կազմակերպությունները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Կեսօրից հետո ՀԲԸՄ-ի Կենտրոնում Վեհափառ Հայրապետը նախագահեց Հայց. Եկեղեցու Երիտասարդական Կազմակերպության նախաձեռնած երիտասարդական հավաքին, որին ներկա էին ավելի քան 600 երիտասարդներ:

Գեղարվեստական կոկիկ հայտագրի գործադրումից հետո, երիտասարդներին իր պատգամը ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Շեշտելով երիտասարդության առջև ժամանակակից աշխարհի հարուցած դժվարություններն ու տագնապները, Նորին Սրբությունը անդրադարձավ ընտրելու կարողությանն ու կարևորությանը՝ զանազանել անցողիկը մնայունից ու հավիտենականից, ապրել հոգևոր արժեքների գիտակցությամբ, որ այսօր ամենուր կարծես թե տեղատվություն է ապրում, և կյանքը գնալով ավելի աշխարհայնանում է: Եզրափակելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետն ասաց. «Իմ երիտասարդ եղբայրներ և քույրեր, եթե դուք ճշմարտապես հավատում եք գիտության և ծառայության, ուրեմն մատուցեք ձեր աշխատակցությունը ձեր համայնքին և ժողովրդին, Հայրենիքին ու Եկեղեցուն»:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց տարբեր կազմակերպություններ ներկայացնող երիտասարդ-երիտասարդուհիների հուզող այժմեական հարցերին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍԱԴԵՆԱՅԻ ՀՄՄ-Ի ԿԵՆՏՐՈՆ

Երիտասարդական հավաքից հյուրանոց վերադառնալու ճանապարհին Վեհափառն այցելեց ՀՄՄ-ի Կենտրոն, որտեղ գտնվում են նաև ՍԴՀԿ գրասենյակները և «Մասիս» շաբաթաթերթի խմբագրատունը:

Վեհափառը դիմավորվեց որոտընդոստ ծափերով և ծաղկեփնջերով և ապա առաջնորդվեց ՀՄՄ-ի Տան հյուրասրահ, ուր արժանացավ բացառիկ և ջերմ ընդունելության:

Գաբրիել Մոլոյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ՍԴՀԿ-ի Կենտրոնի և Վարիչ Մարմնի պատասխանատու անդամներին, ինչ-

պես նաև ՀՄՄ-ի «Նոր Սերունդ» Մշակութային Միության, «Կայծ» երիտասարդական Միության, «Մասիս» շաբաթաթերթի «Նոր Սերունդ» հեռուստաժամի և այլ ենթակազմակերպությունների բաժինների աշխատակիցներին և վարիչներին:

Ողջույնի սրտաբուխ խոսքով հանդես եկավ ՍԴՀԿ Վարիչ Մարմնի ատենապետ Տիրան Մերեճյանը:

Պատասխան խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը պարզեց մեր Եկեղեցուն ու ժողովրդին հուզող հարցերը՝ շեշտը դնելով հայության միասնականության անհրաժեշտության վրա, մատնանշելով, որ այսօրվա Ազատ ու Անկախ Հայաստանն է միասնության և միատեղ քայլելու ճանապարհը, որը մեր անցյալից եկող և դեպ ապագան գնացող հարազատ ուղին է:

Նա խոսեց նաև Հայ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության վերաշխուժացման անհրաժեշտության մասին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՇԿԵՐՈՒԹԹ «ՍԵՆՉՐԻ ՍԻԹԻ ՓԼԱԶԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Փետրվար 3-ի երեկոյան «Սենչրի Սիթի Փլազա» հյուրանոցի շքեղ սրահներից մեկում հավաքվել էին 1500 հայ և ամերիկացի հյուրեր՝ պաշտոնական ճաշկերույթով պատվելու Ամենայն Հայոց Հայրապետին:

Պատվո սեղանին Վեհափառ հայրապետի կողքին տեղ էին գրավել Վաչե Սրբազանը, Կալիֆորնիայի նախկին նահանգապետ Ջորջ Դեքմեջյանը տիկնոջ հետ, ՀՀ հյուպատոս Արմեն Բայբուրդյանը, Հովհան Սրբազանը, Կիլիկյան թեմի առաջնորդական տեղապահ Մուշեղ ծ. վրդ. Մարտիրոսյանը, Ազգային Թեմական Խորհրդի ատենապետ Ալեն սրկ. Ջենտյանը, Լոս Անջելոսի Կաթոլիկ համայնքի Առաջնորդ Կարդինալ Մահոնին, Ղպտի Եկեղեցու Առաջնորդ Սերապիոն եպիսկոպոսը, Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ Ֆրեդերիկ Պորշը, Վեհափառ Հայրապետի դիմավորման հանձնախմբի ատենապետ և օրվա հանդիսավար Ռոբերտ Պարսամը՝ տիկնոջ հետ, և Արևմտյան Թեմի եկեղեցական դասը:

Գարեգին Վեհափառը հոտնկայս ծափողջույններով մուտք գործեց սրահ, ապա «Կոմիտաս» և «Խաչատրյան» միացյալ երգչախմբերը կատարեցին Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության օրհներգերը:

Հանդիսավար պրն. Պարսամը նախ հրավիրեց Կալիֆորնիայի փոխկառավարիչ Գրեգ Դեյվիսին, որը կարդաց կառավարիչ Փիթ Ուիլսնի ողջույնի գիրը:

Հայտնի իրավաբան Ուոլթր Քարապյանը ներկայացրեց սրահում գտնվող ամերիկացի քաղաքական դեմքերին, որոնց մեջ էին Լոս Անջելոսի գլխավոր Շերիֆ Շարման Բլոկը, ընդհանուր դատախազ

Գիլ Գասեթին, Լոս Անջելոս գավառի վերակացուներ Մայք Անտոնովիչին և Զև Յարոսլավսկուն, Կալիֆորնիայի Գերագույն Դատարանի անդամներ Արմանդ Արաբյանին և Մարվն Բաքսթերին և այլոց:

Ողջույնի խոսքերով հանդես եկան Կաթոլիկ, Ղպտի և Եպիսկոպոսական Եկեղեցիների Առաջնորդները: Կուռ ելույթ ունեցավ նաև Առաջնորդ Վաչե Սրբազանը՝ հայտնելով Թեմի ժողովրդի սերն ու հարգանքը իրենց Վեհափառի հանդեպ, որի լավագույն օրինակն էր այդ օրը սրահում ազգային բոլոր կուսակցությունների, կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչների անխտիր ներկայությունը: Սրբազան Հայրը ապա հրավիրեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ փոխանցելու իր պատգամը:

Նորին Սրբությունը շուրջ մեկ ժամ տևող ելույթի ընթացքում հայերեն և անգլերեն լեզուներով անդրադարձավ հայ ժողովրդի ազգային ու եկեղեցական այժմեական բոլոր հարցերին, նորանկախ Հայրենիքի այսօրվա կյանքին, ազգային միասնականությանը և մի շարք այլ հարցերի:

Գարեգին Վեհափառն իր պատգամը սկսեց շնորհակալություն հայտնելով Վաչե արքեպիսկոպոսին և կազմակերպիչ հանձնախմբին, ապա, իր խոսքն ուղղելով ներկաներին, ասաց. «Պատիվ ձեզի, որ գիտեք Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունել միասնական սիրտով»: Շարունակելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետն ավելացրեց. «Նոր առավոտ մը ծագեցավ մեր երկրի ու մեր ազգին համար: 20-րդ դարը սկսավ հայկական եղեռնով, մեզ պարտադրվեցավ սփյուռքը ու ապա սև ամպերու ետևեն երևցավ անկախության լույսը Հայաստանի վրա: Խորհրդայնացումեն ու Երկրորդ Համաշխարհային պատերազմեն ետքը, որու ընթացքին տվինք 300.000 զոհեր, լույսը դարձյալ ծագեցավ: Փա՜ռք, ով Աստված, նոր ու անկախ Հայաստանին համար»:

Խոսելով Հայաստանի ներկայի մասին, Վեհափառն ասաց. «Ես կուգամ Սուրբ Էջմիածնեն, որ այսօր ազատ ու անկախ է իր Հայրենիքի պես: Այդ անկախությունը արդեն չորս տարեկան է ու այժմ ազգակերտման ու պետականության կերտման ժամանակն է: Ժողովրդավարությունը ազատութենեն ավելի է: Ժողովրդավարությունը պատասխանատվություն կնշանակե»:

Անդրադառնալով մեր ազգային ներքին կացությանը Նորին Սրբությունն ասաց. «Ժամանակները կփոխվին, և եթե մենք ալ չփոխվինք, արժանի չենք ըլլալ պատմություն կերտելու: Հայաստանի և Սփյուռքի միջև պատերը պետք է փշրվին ու ես իմ ամբողջ ուժս պիտի նվիրեմ Հայրենիքին մինչև վերջին շունչս»:

Վեհափառը հանգամանորեն խոսեց Էջմիածնի Մայր Աթոռի ներկայիս կենսալից ընթացքի մասին: Կոչ ուղղեց ժողովրդին զորավիգ կանգնել իր հոգևոր մորը:

Վեհափառի պատգամով և ժողովրդի հոտնկայս ծափահա-

րություններով էլ ավարտվեց այս պաշտոնական ճաշկերույթը:

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՑՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 4-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա Կաթողիկոսն իր անդրանիկ Պատարագը մատուցեց Հարավային Կալիֆորնիայի Վեն Նայսի Ս. Պետրոս Եկեղեցում: Սուրբ Սեղանին սպասարկում էին Վաչե և Հովնան արքեպիսկոպոսները:

Սուրբ և անմահ Պատարագին ներկա հյուրերի թվում էին նաև Հույն Օրթոդոքս և Ղպտի համայնքների առաջնորդները:

Հընթացս Ս. Պատարագի Նորին Սրբությունը հոգեշունչ քարոզ խոսեց՝ «Ես եմ հացն կենաց» բնաբանով: Վեհափառը խոր վերլուծումներով բացատրեց հաց բառի իմաստը՝ ֆիզիկական և հոգևոր տեսանկյունից: Շեշտեց հոգևոր հացի կարևորությունը, «որի սակավությունից է տառապում աշխարհը»: Քրիստոսով բերված և Ավետարանով մեզ փոխանցված այդ հացի օջախը մեր Սուրբ Եկեղեցին է: Այդ հացի պատրաստության և մատակարարման առաքելությանն է կոչված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ապա Վեհափառը խոսեց Հայրենիքի իրական կացության մասին՝ շեշտելով վերաշինության անմիջական և անհետաձգելի կարևորությունը. «Բոլոր հայերուն պարտականությունն է այդ»:

Այնուհետև կոչ ուղղեց զորավիգ լինել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին և վստահել նրան. «Ամեն ինչ կրնանք ընել, եթե միասին գործենք: Ոչինչ կրնանք ընել, եթե միասին չի գործենք: Եթե միասնաբար գործենք, այդ ժամանակ արժևորած կլինենք ազատությունն ու անկախությունը», եզրափակեց Գարեգին Վեհափառը:

Նույն օրը տասնյակ հազարավոր հայեր, նույն ժամին, հետևեցին Սուրբ Պատարագին՝ շնորհիվ «24 ժամվա հեռուստատեսություն» ընկերության ստեղծած պատեհության, երբ հայկական որոշ սրահներում և եկեղեցիներում զետեղված էին հատուկ լայնապաստառ հեռուստացույցներ՝ մեծապես դյուրացնելով ճշանակալից այս արարողությունից անմասն չմնալու բաղձանքը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆԸ «ԱՍՊԱՐԵԶ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 16.30-ին, Վեհափառ Հայրապետը ժամանեց ՀՀԴ Արևմտյան Ամերիկայի օրգան «Ասպարեզ» օրաթերթի խմբագրատուն և ընդունվեց Կենտրոնական Կոմիտեի, «Ասպարեզի» խմբագրական կազմի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Արևմտյան Ամերիկայի թեմի առաջնորդական

տեղապահ Մուշեղ ծ. վրդ. Մարտիրոսյանի, Ազգային վարչության, Հոգաբարձության, ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-ի և «Համազգային» կենտրոնական և շրջանային վարչությունների ներկայացուցիչների և գաղութը ներկայացնող ավելի քան հարյուր պատասխանատուների կողմից:

«Ասպարեզ» օրաթերթի շրջափակում բոլոր ներկաները հարազատորեն ու սիրալիր ծափողջույններով դիմավորեցին Ամենայն Հայոց Հայրապետին: Ողջույնի իր խոսքում թերթի խմբագիր Ժան Գոսագյանը, բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, նշեց, թե անկախ այն իրողությունից, որ Վեհափառը անծանոթ չէ մեզ, սակայն այս առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելում է խմբագրատուն, և ուրախ ենք մեր տան մեջ իր ներկայությամբ:

Ի պատասխան բարիգալստյան խոսքի, Վեհափառ Հայրապետն ասաց. «Շատ շնորհակալ եմ և խորապես ուրախ կզգամ ինքզինքս, որ այս անգամ գալով նոր պատասխանատվությանս մեջեն ինքզինքս երբեք հեռացած չեմ զգար այն շրջանակեն, այն բարեկամներու և գործակիցներու ընտանիքեն, որ այս հաստատություններով արտահայտվող ընտանիքը եղած է և որուն հետ կյանքիս կարևոր մեկ մասը անցուցած եմ: Նույն սիրով և մեծ ուրախությամբ կողջունեմ ձեզ այսօր:

Գիտեմ, թե ինչպես նվիրված եք դուք մեր ժողովուրդի ծառայության և ես իմ գնահատանքի խոսքս կուղղեմ ձեզի այն բոլոր աշխատանքներուն համար, որ կտանիք հատկապես մեր ժողովուրդի հայկական դիմագծության առողջ պահպանության հիմնական առաքելությամբ: Այսօր՝ ուրախ եմ նաև, որ ձեզի կբերեմ Հայրենիքին շունչը»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց խմբագրի գրասենյակը, որտեղ առանձին-առանձին ընդունեց ներկա բոլոր կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչներին, որից հետո խորհրդակցական հանդիպում ունեցավ ՀՀԴ Բյուրոյի անդամ Աբո Պողիկյանի և Կենտրոնական Կոմիտեի կազմի հետ:

Ապա «Ասպարեզ»-ի խմբագրատան մեջ համախմբված միությունների և կազմակերպությունների ներկայացուցիչները առիթ ունեցան լսելու Վեհափառ Հայրապետի սրտի խոսքը, որում ի մասնավորի Նորին Սրբությունն ասաց. «Հիմա նոր իրադրության առջև ենք բոլորս: Հրապարակային խոսքերուս մեջ ըսի և այստեղ ալ, այս մտերմական շրջանակին մեջ կուզեմ կրկնել, որ որևէ հաստատություն, որևէ կազմակերպություն, որևէ միություն, որևէ ազգ,, և նույնիսկ որևէ եկեղեցի չի կրնար ժամանակներու հոլովույթին հետ չքալել: Այսօրվա ազատ և անկախ Հայրենիքի և ազատությամբ գործող Մայր Աթոռի՝ այդ երկու կարևորագույն արժեքներու հանդեպ թե՛ Հայաստանի և թե՛ արտերկրի հայը պետք է ունենա փոփոխության, պետք է ունենա առաքելության հստակություն, թե ինչպես կրնան զորացնել այդ երկու նվիրական սրբությունները՝ մեկը Եկեղեցին և մյուսը Հայրենիքը, իր անկախ հանրապետությամբ: Հայաստանի և Սփյուռքի միջև տարբե-

ությունները զուտ մշակութային են և էության ու ոգիի տարբերություն ես չեմ տեսներ և հայության մեջ բաժանում չեմ կրնար ըմբռնել: Հարցերուն մեջ կրնանք տարբերություններ ունենալ, ատիկա բնական է, բայց հայության մեջ ճեղք ես չեմ կրնար հասկնալ: Որևէ մարմնի մեջ որևէ ճեղք այդ մարմնին ամբողջությանը կվնասե և կրնա անոր գործունեությունը նույնիսկ վտանգել: Հետևաբար այդ ոգիով կողջունեմ ձեզ և դուք ձեր Կաթողիկոսը ունիք այնտեղ՝ Ամենայն Հայոց Գահի վրա, ես ալ ձեզ ունիմ իբրև մեր ժողովուրդը առանց խտրության, դասակարգային կամ եկեղեցական կամ քաղաքական: Ապրի՛ք, հազար ապրիք և այդ ոգիով ապրիք: Կկարծեմ, որ բոլորս ալ այս օրերու դժվարությանց մեջեն կանցնինք և կհասնինք այնտեղ, ուր չեմ ըսեր դժվարություն չենք ունենար, որովհետև չկա մարդկային ընկերություն, որ դժվարություն չունենա, բայց կգիտնանք գոնե նախընտրություններ կատարել, առաջնահերթություններ ճշտել, էականը երկրորդականեն զատորոշել և ընդհանրականին տալ ուժը, որուն մեջ մասնավորը գտնե իր արժեքը»:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

«Ասպարեզ» օրաթերթի խմբագրություն այցելելուց հետո, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ուղղվեց դեպի Մոնտեբելլոյի Նահատակաց Հուշարձան, որտեղ ծաղիկների զետեղումից հետո կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Եղեռնի զոհերի:

Այստեղ, խոր հարգանք ընծայելուց հետո ցեղասպանության զոհերի հիշատակին, Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց ներկաների հավատարմության ոգին նահատակների կտակին և հայ ժողովրդի արդար դատին:

Ապա այցելեց Սուրբ Սարգիս եկեղեցի, որտեղ հոծ բազմության ներկայությամբ Նորին Սրբությունը օծեց եկեղեցու Սուրբ Մկրտության Ավազանը և Սուրբ Սարգիս զորավարի պատկերը, օրհնեց օրվա մատաղը և իր հայրական պատգամը փոխանցեց ներկա հավատացյալներին, շեշտելով օրվա՝ Սուրբ Սարգսի տոնի խորհուրդը և կոչ ուղղեց ներկաներին ապրել նահատակաց օրինակով Հայրենիքի և Եկեղեցու բարգավաճման, առավել կենսավորման ու զորացման գիտակցումով:

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ՏՈՒՆ

***Փետրվարի 5-ը** Վեհափառ Հայրապետի համար եղավ ծանրազբաղ օրերից մեկը:*

Առավոտյան ժամը 08.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Լոս Անջելոսում հայ տարեց սերնդին հոգատար խնամատարական ծառա-

յություններ մատուցող հաստատություն՝ «Արարատ» Ընկերական անունով ճանաչված ծերանոց:

Ի պատիվ Հայոց Հայրապետի պաշտոնական նախաճաշ էր կազմակերպվել, որին ներկա գտնվեցին ավելի քան 400 հոգի՝ պատասխարյալներ, բարերարներ, բարեկամներ և Վեհափառի շքախմբի անդամները:

Հոգաբարձության ատենապետի և տնօրենի բարիգալստյան ջերմ խոսքերից հետո, Նորին Սրբությունը զգացված սրտով իր պատգամը տվեց ներկաներին: Նա առանձնապես իր խոսքն ուղղեց հայ հայրիկներին և մայրիկներին՝ ասելով նրանց, որ մեր ազգը երբեք չի կարող մոռանալ իր տարիքավոր անդամներին և նրանց խնամքը համարում է իր սրտի պարտքն ու պատիվը. «Դուք երջանիկ պետք է լինեք, որովհետև ձեր երկար տարիների նեղություններից և տառապանքներից հետո, այսօր տեսնում եք հայ ժողովրդի վերածնության շքեղ երևույթը թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ արտասահմանում: Ձե՛րն է առաջին իրավունքը ուրախ լինելու, որովհետև դուք տառապեցիք, տքնեցիք, որպեսզի ձեր զավակներն ու թոռները բարեկեցիկ կյանք ունենան և իրենք իրենց զգան միջտ կապված և նվիրված իրենց Եկեղեցուն և ազգին: Ես նոր Հայրենիքից լույս և հույս եմ բերել ձեզ: Հրճվեցե՛ք և աղոթեցեք առ Աստված, որ կենսունակ կյանքով վերածաղկի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և մեր Մայր Հայրենիքը իր նոր հանրապետությամբ»:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՑՑԸ ՀՀ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Իր Հովվապետական առաջին այցով Կալիֆորնիայում գտնվող Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Վեհափառը փետրվարի 5-ին այցելեց Լոս Անջելոսում ՀՀ Գլխավոր Հյուպատոսություն: Նորին Սրբությանն ուղեկցում էին Վաչե արքեպս. Հովսեփյանը, Հովնան արքեպս. Տերտերյանը և այլ հոգևոր հայրեր:

Վեհափառ Հայրապետը ծանոթացավ հյուպատոսության աշխատակիցների հետ և օրհնեց Հայաստանի պետական ներկայացուցչությունը: Հյուպատոսարանի ընդունելությունների սրահում տեղի ունեցած զրույցի ընթացքում գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրդյանը, բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, նշեց այն կարևոր դերն ու նշանակությունը, որ ունի Հայ Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մեր իրականության մեջ: Վեհափառի այս պատմական այցը հյուպատոսը գնահատեց որպես ժողովրդի խանդավառության և հոգևոր զորության մի հզոր աղբյուր:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում ասաց, որ գտնվելով հյուպատոսությունում՝ Հայաստանյան հողի վրա, իրեն զգում է ինչպես տանը. «Ինձ համար բոլորովին նոր զգացում է, երբ Հայաստան երկրից

դուրս գալով տարբեր պետություններում ինձ դիմավորում են Հայաստանի Հանրապետության դեսպանները, իսկ այստեղ՝ Կալիֆորնիայի հողում, Հայաստանի գլխավոր հյուպատոսը»:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայոց անկախ պետության ներկա իրավիճակին և նշեց, որ, չնայած բոլոր դժվարություններին և փորձություններին, Հայաստանը վստահ քայլերով առաջ է շարժվում: Վեհափառ Հայրապետն առանձնացրեց այն երկու գործոնները, որոնք մեծապես պայմանավորում են Հայաստանի առաջընթացը. դրանք են՝ երկրի կայունությունն ու ապահովությունը: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական բարեփոխումներին, ապա դրանք տեսանելի են ոչ միայն առօրյա կյանքում, այլև լսելի բազմաթիվ օտարերկրյա մասնագետների կարծիքներում:

Հանդիսությունների սրահ էին հրավիրված նաև «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արևմտյան Ամերիկայի տեղական հանձնախմբի ղեկավարներն ու անդամները: Վեհափառ Հայրապետը նշեց Հիմնադրամի առանձնահատուկ կարևորությունը՝ շեշտելով, որ սա այն կառույցն է, որին յուրաքանչյուր հայ պարտավոր է բերելու իր մասնակցությունը: Նորին Սրբությունն ավելացրեց, որ որպես հոգևոր առաջնորդ իր բոլոր ջանքերը կներդնի, որպեսզի ապահովվի հայոց ազգովին մասնակցությունը Հիմնադրամի ծրագրերին:

Իր խոսքում «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արևմտյան Ամերիկայի հանձնախմբի նախագահ Ռաֆի Ուրֆալյանը համառոտ ներկայացրեց Արևմտյան ափում Հիմնադրամի կատարած աշխատանքներն ու հեռանկարները: Այնուհետև հայտարարեց, որ հայտնի բարերար, ծնունդով Սասունից Հարություն Սիմոնյանը 200.000 դոլար է նվիրել Հիմնադրամին՝ Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում դպրոց կառուցելու նպատակով:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով Հարություն Սիմոնյանի բարերարությունը և ընդհանրապես առանձին անձանց կողմից խոշոր գումարներով Հիմնադրամի ծրագրերին մասնակցելը, միևնույն ժամանակ նշեց, որ յուրաքանչյուր հայ իր հնարավորության սահմաններում պետք է իր մասնակցությունը ունենա Հիմնադրամի աշխատանքներին: Գարեգին Վեհափառը մասնավորապես անդրադարձավ Հիմնադրամի կողմից Գորիս-Ստեփանակերտ մայրուղու կառուցմանը՝ կանգ առնելով այս համազգային կառույցին բոլորիս պարտադիր մասնակցության անհրաժեշտության վրա:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԱԿՐԱՄԵՆՏՈՅՈՒՄ

Հյուպատոսարանից Գարեգին Վեհափառը, ընկերակցությամբ Վաչե և Հովնան սրբազանների ու շքախմբի մյուս անդամների, հատուկ իրեն տրամադրված անձնական օդանավով մեկնեց Սակրամենտո՝ Կալիֆորնիա նահանգի մայրաքաղաք:

Օդանավակայանում նրան դիմավորեցին Արիս եպս. Շիրվանյանը, տեղի հոգևոր հովիվ Եղիա քհն. Հայրապետյանը և հայ համայնքի ներկայացուցիչները:

Նորին Սրբությունը օդանավակայանից ուղղակիորեն առաջնորդվեց Կալիֆորնիա նահանգի նահանգապետարանի շենք, որտեղ դիմավորվեց նահանգի Խորհրդարանի նախագահի կողմից: Այստեղ Վեհափառ Հայրապետը բազմաթիվ առանձնակի հանդիպումներ ունեցավ Կալիֆորնիայի Համագումարի և Կոնգրեսի անդամների հետ և ապա առաջնորդվեց Խորհրդարանի սրահ, որտեղ հավաքվել էին թե՛ Համագումարի և թե՛ Կոնգրեսի անդամները:

Նախագահի հրավերով, այս միացյալ նիստին ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը և առաջին հերթին իր գոհունակություն հայտնեց, որ գտնվում է Կալիֆորնիա նահանգի գերագույն ժողովի այս պատմական կենտրոնում:

Իր ճառում նա խոսեց Հայաստանի անկախությամբ ստեղծված նոր իրադրության մասին՝ ասելով, որ դա հայոց պատմության մեջ դարձակետային նշանակություն ունեցող երևույթ է, որ ամբողջ ազգի վերանորոգության բարիքն է բերում ազատության և անկախության պայմանների ներքո. «Միշտ է, որ բազում դժվարությունների միջից է անցնում մեր նոր Հայրենիքը, տնտեսական, ընկերային, քաղաքական պայմանները ծանր են, բայց զարգացման ընթացքը դեպի բարելավում օրեօր առավել է շեշտվում»: Ապա շնորհակալություն հայտնեց Ամերիկյան պետությանը և ժողովրդին, հատկապես Կալիֆորնիա նահանգի ցույց տված զորակցության համար, և մաղթեց, որ օրեօր առավել բարգավաճի Կալիֆորնիայի նահանգի կյանքը:

Այնուհետև Վեհափառը անդրադարձավ Հայց. Եկեղեցու կացությանը և բերելիք նպաստին Հայաստանի և հայ ժողովրդի վերակենդանության այս ճակատագրական շրջանում: Խոսեց 1700-ամյակի մասին և ասաց, որ 1700 տարիների քրիստոնեական հավատքի ներգործությունը Հայաստանում վերստին է արժևորվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրից օր աշխուժացող հոգևոր ծառայության միջից: Իր խոսքի վերջում Վեհափառն անդրադարձավ նաև արդի աշխարհում և արդիապաշտ կյանքի պայմաններում հոգևոր արժեքների տեղատվությանը և հորդորեց, որ բոլոր պատասխանատու անձերը իրենց գործունեության մեջ առավել ևս կարևորեն հոգևոր և բարոյական առողջ կյանքի սկզբունքների և ապրելակերպի ընթացքը:

ՎԱՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԱԿՐԱՄԵՆՏՈՅԻ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կառավարական տուն այցելությունից անմիջապես հետո, Նորին Սուրբ Օծությունը ուղղվեց դեպի հայոց Սուրբ Հակոբ եկեղեցի, որտեղ երկու հանդիպում ունեցավ ժողովրդի հետ:

Նախ եկեղեցում կատարվեց գոհաբանական աղոթք, որին ներկա գտնվեցին նաև ոչ հայկական եկեղեցիներից, հատկապես, Կաթոլիկ Եկեղեցուց ներկայացուցիչ հոգևորականներ:

Հոգևոր հովիվ Եղիա քահանայի բարիգալստյան սրտալից խոսքից հետո, Վեհափառը հոգեկից քարոզով քաջալերեց հավատացյալներին, որ իրենց մասնակցությունը Եկեղեցու կյանքին վերածեն շարունակական ընթացքի և ոչ թե պատահական դեպքերի:

Ապա եկեղեցուն կից սրահում ճաշկերույթ տրվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Այստեղ նա մտերմական շեշտով խոսեց ժողովրդի հետ և մանրամասն տեղեկություններ տվեց նրանց Հայաստանում եկեղեցական և աշխարհիկ կյանքի իրական կացության մասին:

Նորին Սրբությունն ասաց, որ վերածնության շունչն է այժմ տարածվում ողջ հայության կյանքում, և Սակրամենտոյի հայությունն էլ պարտավոր է մասնակից դառնալ և իր նպաստը բերել այս պայծառ երևույթին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՍ ՎԵԳԱՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Փետրվարի 5-ին, երեկոյան ժամը 18.30-ին, Գարեգին Վեհափառը ժամանեց Լաս Վեգասի օդանավակայան, որտեղ ծխի հովիվ Տ. Շահե ավ. քհն. Սեմերճյանը, ըստ հայկական սովորության, Վեհափառին ներկայացրեց ավանդական հացն ու աղը օրհնության համար, ապա, հանուն Լաս Վեգասի հայության, բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբով առաջնորդվեց Հունաց Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, որտեղ դպրաց դասը «Հրաշափառ»-ով դիմավորեց Հայոց Կաթողիկոսին: Կանոնական աղոթքից հետո Առաջնորդ Վայե Սրբազանը ներկայացրեց Հույն եկեղեցու հովիվ Իլայա Քաթրիին: Վերջինս, բարի գալուստ մաղթելուց հետո, երգեց Հունարեն Հայրապետական Մաղթանքը: Ապա Սրբազան Հայրը հանգամանորեն ներկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Վեհափառը հուզիչ և ներշնչուն խոսքերով ասաց.

Ա. Անհրաժեշտ է, որ հայորդիները նեցուկ լինեն Հայաստանի այսօրվա անկախությանը: Այն ոչ մի կուսակցության չի պատկանում, այլ բոլորինն է:

Բ. Անկախությունը, որ այսօր 70-ամյա բռնատիրությունից հետո վայելում է Հայաստանը, պետք է պահվի որպես նվիրականագույն արժեք, հարգենք, զորավիգ լինենք, քաջալերենք և հպարտ լինենք ինչպես մյուս ազգերը:

Գ. Անկախության պտուղը սկսել է վայելել Հայց. Եկեղեցին, բացելով նորանոր եկեղեցիներ հայրենի աշխարհում և նաև ազատորեն քարոզել, աղոթել և Հոգևոր Մեմարանը զարգացնել նոր ուժերով:

Դ. Այդ մարզում իր գերագույն աստիճանի դերն ունի Սուրբ Էջմիածինը, հայ ժողովրդի հավատքի կենտրոնը, հույսը և սերը: Հարկավոր է խմբվել նրա հովանու ներքո, նրանից հոգևոր լույս և ջերմություն ստանալու համար:

Ե. Այս ամենը կարելի է իրագործել միայն ու միայն հայ ժողովրդի միասնականությամբ, համագործակցությամբ, բարոյական ու նյութական զոհողությամբ:

Զ. Իբրև ազատ ու անկախ Հայաստանում ընտրված առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոս. «սիրտս ո՛չ մեկ խտրություն կճանչնա ոչ մեկ հայու նկատմամբ: Հայ Եկեղեցվո բոլոր զավակները ես կնկատեմ զավակները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ինչպես կնկատեի, երբ Կիլիկյան Աթոռի Գահակալ էի»: Հավարտ Վեհափառի հայրական խոսքերի, դպրաց դասը երգեց «Հայրապետական Մաղթանքը», որից հետո շքախումբը մեկնեց մեծ բարերար պրն. Քրք Գրգորյանի կողմից տրամադրված «Էմ Զի Էմ» հյուրանոցի հանդիսասրահը որտեղ հավաքված շուրջ 400 ազգայիններ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին: Հյուրասիրությունը ընծայվեց՝ հյուրանոցի գլխավոր կազմակերպիչ ունենալով տիկ. Աիդա Եմենեջյանին:

Այստեղ ծխական խորհրդի ատենապետ պրն. Գառնի Օվյանը ներկայացրեց պատվո սեղանի անդամներին և մատնանիշ արեց Շահե ավ. քահանայի մատուցած ծառայությունը այս համայնքից ներս: Ապա մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց Հունաց Եկեղեցու հովվին, որ ամսվա երկրորդ կիրակիներին Լաս Վեգասի հայ համայնքին տրամադրում է իրենց եկեղեցին:

Վաչե Սրբազանի ներկայացնող խոսքից հետո, Վեհափառ Հայրապետը տվեց իր պատգամը՝ շեշտելով ծխի ներսում խաղաղությամբ ապրելու անհրաժեշտությունը, «Մեկ կրոնք, մեկ Եկեղեցի, մեկ ազգ և մեկ Հայրենիք ասելը ճշմարիտ իմաստ կզգենու, երբ ապրինք այդ կարգախոսի համաձայն:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով էլ ավարտվեց այս օգտաշահ ու կարևոր հավաքույթը, որից հետո Վեհափառը նույն օդանավով վերադարձավ Լոս Անջելոս:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ
ՓԵՏՐՎԱՐ 6-10

Երեքշաբթի, փետրվարի 6-ի առավոտյան, Վեհափառ Հայրապետը Ֆրեզնո մեկնելու համար ուղղվեց դեպի Լոս Անջելոսի միջազգային օդանավակայան, որտեղ նրան սպասում էր Սասուն վրդ. Զմրուխտյանի և ընդունելության հանձնախմբի ատենապետ դոկտ. Վարուժան սրկ. Ալթընբարմաքյանի առաջնորդությամբ Ֆրեզնոյից ժամանած հատուկ ինքնաթիռը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՖՐԵԶՆՈՑՈՒՄ

Փետրվարի 6-ին երեքշաբթի օրը, բազմամարդ էր Ֆրեզնոյի օդանավակայանը: Եկել էին դիմավորելու Ամենայն Հայոց 131-րդ գահակալին:

Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի, Կանադայի Առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և գավազանակիր Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի, կեսօրվա ժամը 12.00-ին ժամանեց Ֆրեզնոյի օդանավակայան: Ավանդական աղ ու հացի օրհնությունը կատարելուց հետո, Նորին Սրբությունը ներկա հավատացյալ հարյորդիներին հղեց իր հայրական պատգամը.

«Այս արևին տակ ես աչքերս դեպի երկինք կբարձրացնեմ ձեր աչքերուն ընդմեջեն և փառք կուտամ Աստուծո, որ այս օրը շնորհեց ինձի 44 տարվան իմ ծառայությանս մեջ: Կուգամ տեղե մը, որ մեր բոլորին ծննդավայրն է, այն տեղեն, ուր մենք ծնանք որպես քրիստոնյա ազգ, երկիր մը, որուն մեջ ապրեցին մեր նախնիք և որի անկախության համար երազեցինք, որ կկոչվի Հայաստան, որ այսօր կորոշի իր ապագան առանց ճնշումի և կաշկանդման: Գալիք օրերուն ձեր բոլորին հարցումներուն պատասխանելու ժամանակ պիտի ունենամ և, մանավանդ, ձեզ լսելու:

Մի քանի տարիներ առաջ հոս եղա որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, այսօր եկած եմ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, բայց ես նույն անձն եմ առանց վարանումի, որովհետև կուգամ նույն Եկեղեցիին անունով, նույն Եկեղեցիին համար»:

Օդանավակայանում արտասանած խոսքից հետո, Վեհափառ Հայրապետը հանդիպեց թերթերի թղթակիցների հետ՝ պատասխանելով զանազան հարցումների, մատնանշելով Հայց. Եկեղեցու կացությունն ու դերը Անկախ Հայաստանում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՖՐԵԶՆՈՑԻ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 14.00-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ֆրեզնոյի Սուրբ Պողոս եկեղեցի՝ հոգևորականների, դպրաց դասի և սարկավագների առաջնորդությամբ:

Արևմտյան թեմի Առաջնորդ Վաչե արքեպիսկոպոսի բարի-գալստյան խոսքից հետո, եկեղեցու հովիվ Սասուն վրդ. Ջմրուխտյանը անգլերենով արտահայտեց իր և իր ծուխի ուրախությունը Ամենայն Հայոց Հայրապետի այցելության առիթով:

Այնուհետև իր օրհնության խոսքն ու պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը՝ ասելով. «Փառք կուտամ Աստուծո, որ այս օրվան արժանացա: Բոլորս որպես մեկ հոգի, մեկ սիրտ և մեկ հավատք ըլլանք կողք-կողքի, միացյալ հոգով»: Խոսելով այսօրվա ազատության շնչով

ապրող Հայրենիքի ու նրանից անբաժան Սուրբ Էջմիածնի մասին, Վեհափառը վեր հանեց երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի գործունեությունը, որպես Էջմիածնաշեն Հայրապետի, և ավելացրեց, թե այսօր մեր Հոգևոր Մեմարանում 110 աշակերտներ են պատրաստվում, որպեսզի վաղվա մեր Եկեղեցու հովիվները լինեն և առաջնորդեն մեր ժողովրդին. «Ես ինչպե՞ս կրնամ մինակս իմ վրա դրված այս ծանր պարտականությունը տանիլ առանց ձեր օժանդակության և օգնության»: Ապա Սուրբ Էջմիածնի պատմական ակնարկը կատարելով՝ Նորին Սրբությունը հուզումնախառն ասաց. «Ոտքի կանգնինք Աստուծո առջև որպես մեկ Եկեղեցի և մեկ ազգ: Աստված պիտի չներե մեզի, եթե բոլորս ձեռք-ձեռքի չտանք և արժանի պիտի չըլլանք ուրեմն ազատ ու անկախ ըլլալու»:

Վեհափառը իր խոսքը եզրափակեց գոհունակություն և ուրախություն հայտնելով Վաչե և Տաթև Սրբազաններին, Մյուռոն ծ. վարդապետին և Սասուն վարդապետին ու բոլոր հարանվանությունների ներկայացուցիչներին, որոնք եկել էին նրան դիմավորելու և իրենց հարգանքն ընծայելու:

Արարողությունից հետո հավատացյալ ժողովուրդը եկավ համբուրելու Վեհափառ Հայրապետի Աջը՝ ստանալով Սուրբ Էջմիածնից բերված խաչեր:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 7-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 9.30-ին, «Հրաշափառ»-ի արարողությամբ Հայոց Հայրապետը մուտք գործեց Ֆաուլերի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր նրան անհամբերությամբ էր սպասում հավատավոր ժողովուրդը:

Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գևորգ քհն. Առաքելյանը գեղեցիկ ուղերձով իր սրտագին բարիգալստյան խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին նրան ներկայացնելով իր հոգևոր հոտի անդամներին, հատկապես նոր սերունդի՝ երեխաների և պատանիների աշխույժ մասնակցությունը Եկեղեցու կյանքում թե՛ կիրակնօրյա վարժարանի և թե՛ եկեղեցական արարողությունների միջից:

Երեխաները ևս իրենց նվերներն ընծայեցին Վեհափառին և իրենց կենսուրախ ներկայությամբ խոր հրճվանք պատճառեցին նրան:

Ապա Հայոց Հայրապետը ջերմ խոսքերով ողջունեց եկեղեցու կենսունակ կյանքը և հատուկ խոսք ուղղեց նաև երեխաներին: Մասնավոր կերպով շեշտեց այն ճշմարտությունը, որ եկեղեցին եկեղեցի է իր հավատացյալներով: «Դա՛ է կենդանի եկեղեցին», ասաց նա:

Նորին Սրբությունը շեշտեց նաև այսօրվա պահի կարևորությունը, որ յուրաքանչյուր մարդ և առավել ևս հայ մարդ իր պարտակատարությունների կատարման ճանապարհին աչքի առջև պիտի ունենա հարափոփոխ ժամանակների առաջ բերած հրամայականները: Ներկայիս այդ հրամայականն է ապրել ազատագրված Հայրենիքի զորացման և Գրիգոր Լուսավորչի Տեսիլքի շողարձակում Սուրբ Էջմիածնի վերածաղկման գաղափարով: Տարակարծություններ և հարցերի բազմաթիվ ընկալումներ կարող են լինել, սակայն դրանք էական նշանակություն պիտի չունենան, այլ շաղախված պետք է լինեն սիրո և միության անխախտելի և ամենազոր գիտակցությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 10.40-ին, դարձյալ «Հրաշափառ»-ի արարողությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց Ռիթլիի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցի: Խուռներամ բազմությունն անկարագրելի սիրով և ըղձանքով էր սպասում իր Հովվապետին:

Եկեղեցում ողջույնի խոսք ասաց եկեղեցու ծխական խորհրդի նախագահ Ջերրի Սրապյանը նշելով, որ այս օրը մեծ ուրախության և բերկրանքի օր է այս ծխի համար, «կարծում եմ այն պատմական է ոչ միայն այս փոքրիկ համայնքի, այլև ողջ շրջանում ապրող հայության համար: Մենք մեծ պատիվ ենք համարում Ձեր այցելությունը մեզ, որովհետև Ձերդ Սրբության այդքան բազմազբաղ ժամանակում չմոռացաք այցելել և օրհնել նաև մեր փոքրիկ եկեղեցին ու համայնքը: Սրանից 36 տարիներ առաջ, 1960 թ. Հուլիսին, մեզ այցելեց Վազգեն Ա Երջանկահիշատակ Կաթողիկոսը և այսօր՝ 36 տարիներ հետո մեզ օրհնելու է եկել Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա-ը:

Շնորհակալություն և Աստված թող զորացնի Ձեզ»:

Խոսքի սկզբում Վեհափառ Հայրապետը նախ իր շնորհակալությունը հայտնեց այսքան ջերմ և սրտամոտ ընդունելության համար և փառք վերընծայեց առ Աստված, որ իրեն բերել է այսպիսի ժողովրդին ծառայելու: Ապա շարունակելով խոսքը Նորին Սրբությունն ասաց. «Այս դարը, որ կբացվի իբրև լույսի շրջան մեր Հայոց պատմության, մեր բոլորի պարտքն է ուր ալ ըլլանք, ինչ ալ ըլլանք, ինչ ժամանակի մեջ ալ որ ապրինք, ինչ տեսակի մասնագիտություններ ալ ունենաք՝ այսօրվա հրամայականն է մեր ամբողջական և մեկ հայության պատկանելիության տակ գործել, այլապես արժանի չենք Աստուծո այս մեծ տուրքին՝ մեր ազատության և անկախության»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԴԵՄԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 12.00-ին Ն.Ս.Օծությունը, եկեղեցական թափորով և «Հրաշափառի» երգեցողությամբ, մուտք գործեց Եդեմի Ս. Աստվածածին Եկեղեցի՝ հանդիպելու իր հոտի հավատավոր զավակներին, բաշխելու հայրական պատգամ-հորդորները:

Եդեմի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ստեփանոս քհն. Դինգիլյանը սրտագին խոսքով իր և իր հոգևոր հոտի երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Եդեմի եկեղեցու հավատացյալների հանդեպ նրա ցույց տված հայրական սիրո և հոգածության համար:

Նորին Սրբությունն իր քարոզ-խոսքում ասաց, որ առաջին անգամն է մեկ առավոտվա ընթացքում երեք եկեղեցիներ այցելում և փառք ու գոհություն հայտնեց Ամենաբարձրյալն Աստուծո, որ այս գեղեցկագույն առիթն ընծայեց հաղորդվելու իր ժողովրդի բոլոր զավակների հետ:

Նա ավելացրեց, որ ինքը շատ է լսել Եդեմի հայոց եկեղեցու անցյալի դերի մասին և ուրախ է տեսնելով այսօր եկեղեցին լեցուն հավատացյալների բազմությամբ: Նա ասաց, որ պատմության ընթացքը միշտ փոփոխությունների շարան է: Այդ փոփոխություններից ամենակարևորներից մեկը մեր Մայր Հայրենիքի վերանկախացումն է և նրա մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերածաղկումը և առաքելության վերաշխուժացումը. «Կապված մնացեք ձեր մորը և Ավետարանի շունչը զգացեք նրա դարավոր գործունեության սուրբ ավանդությունից»:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՀԱՎԱՔ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

Երեկոյան ժամը 5.30-ից մինչև 7.30-ը Վեհափառ Հայրապետը նախագահեց երիտասարդաց հավաքը, որ տեղի ունեցավ Ֆրեզնոյի Ս. Պողոս եկեղեցու ընդարձակ սրահում: Հրավիրվածների թվում էին Ֆրեզնոյի շրջանի Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպությունների անդամները, համալսարանական ուսանողները, Կիրակնօրյա վարժարանի աշակերտությունը և շրջանի ողջ երիտասարդությունը:

Եկեղեցում կատարված ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետն ամենաքաղցր սիրով ընդունեց Ֆրեզնոյի շրջանի երիտասարդ սերնդի իր զավակներին: Մտերմիկ և զվարթախոհ խոսքերով քաջալերեց նրանց, որ իրեն դիմեն այժմեական խնդիրներին վերաբերող հարցումներով: Ուղղված հարցերը վերաբերվում էին հատկապես Հայ Եկեղեցու կյանքում կանանց մասնակցությանը, եկեղեցում հայերեն և անգլերեն լեզուների գործածությանը, որոնց Վեհափառ

Հայրապետը հանգամանալի բացատրություններ տվեց, որոնք ծափահարություններով ընդունվեցին ներկաների կողմից:

Իր խոսքի վերջում նա կոչ ուղղեց երիտասարդներին, որ գիտենան ընտրել կյանքում այն, ինչը որ հոգևոր, բարոյական արժեք ունի, և զոհ չգնան ամեն տեսակ մակերեսային ճաշակների և ախորժակների, բարքերի և սովորությունների, որոնք հաճախ թունավորում են մեր կյանքը՝ ներկայումս Ամերիկայում և նաև այլ երկրներում:

ՕՐ ԵՐԲՈՐԴ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ

Ֆրեզնոյում գտնվելու Հովվապետական այցելության երրորդ օրը՝ հինգշաբթի, փետրվարի 8-ի առավոտյան ժամը 9.45-ին, Վեհափառ Հայրապետն սկսեց համայնքի նախ ամենատարեցներին՝ հայ կյանքի բազմաթիվ ծալքերին ու իրադարձություններին ականատես եղած հայ տատիկներին ու պապիկներին տված տեսակցությամբ, այցելելով Կալիֆորնիայի Հայ Տարեցների Տուն: Այստեղ նա Նորին Սրբությունը շրջելով և, կարելի է ասել, առանձին-առանձին զրուցելով ու տեսակցելով տարիների ընտվածքն իրենց ուսերին ու աչքերին ունեցած ծերունիների հետ, պատմեց նրանց այսօրվա ազատությամբ ու անկախությամբ ապրող Հայաստանի ու Սուրբ Էջմիածնի մասին, որ հենց նրանց երազանքն է եղել, ոգևորեց և հուզեց նրանց սրտերը՝ ասելով, որ նրանք երջանիկ սերունդ են, քանի որ ականատես լինելով հայ իրականության դժբախտություններին, այսօր դեռ իրենց աչքերը աշխարհին չփակած Հայրենիքի ազատության համար ցուպը ձեռքերին լալով տենչալու անհրաժեշտությունը չունեն, որովհետև Հայրենիքն այլևս ազատ է և աշխարհի բոլոր ծագերից կոչում ու կանչում է իր զավակներին գալու, հավաքվելու՝ որպես մեկ սիրտ ու մեկ հոգի ապրելու համար:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԵԶՆՈՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ժամը 11.45-ին Վեհափառ Հայրապետը եղավ Ֆրեզնոյի Համագաղութային Հայկական դպրոցում, ծանոթացավ ուսուցչական և աշակերտական կազմերին, տվեց իր հայրական պատգամը՝ դարձյալ շեշտելով, որ հայ կյանքը այս օրերին արևմտյան օտար մշակույթի պայմաններում, Հայրենիքից բազմաթիվ կիլոմետրեր հեռավորության վրա վերաշխուժացում է ապրում, որի վկայությունն են այն բազմաթիվ դպրոցները, որոնք Նորին Սրբությունն այցելեց իր Հովվապետական շրջագայության ընթացքում: Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց և խրախուսեց ուսուցչական կազմին իրենց կատա-

րած ինքնանվեր աշխատանքի համար, ապա խոսքն ուղղելով աշակերտությանն ասաց, որ ամուր փարվեն իրենց հայրերի լեզվին, հավատքին ու մշակույթին:

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՀԱՑՐԱՊԵՏԸ ՖՐԵԶՆՈՅԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հետմիջօրեին, ժամը 13.45-ին, Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ մուտք գործեց Մեծի Տանն Կիլիկիո հոգևոր խնամակալության ներքո գտնվող Ֆրեզնոյի Ս. Երրորդություն եկեղեցի: Եկեղեցականների և դպիրների թափորով Նորին Սրբությունն առաջնորդվեց եկեղեցու դաս, որտեղ, կանոնական աղոթքից հետո, բարիգալստյան ջերմ խոսք արտասանեց եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Մյուռոն ծ. վրդ. Ազնիվյանը: Ներկա էր նաև Լոս Անջելոսից ժամանած առաջնորդական տեղապահ Մուշեղ ծ. վրդ. Մարտիրոսյանը, որն իր կարգին, հանուն իր թեմի իշխանության, սրտագին սիրով ողջունեց Վեհափառ Հայրապետի այցելությունը:

Վեհափառ Հայրապետը, խորապես հուզված ժողովրդի ջերմագին ընդունելությունից փառք տվեց Աստծուն, որ մի անգամ ևս իրեն առիթ տրվեց այցելելու Ֆրեզնոյի շրջանի այս պատմական եկեղեցին: Նա հիշեց, որ ինքը բազում անգամներ է գտնվել այս եկեղեցում որպես Կիլիկիո Աթոռի Կաթողիկոս, և թե այս այցելությունը որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս իրեն գերագույն աստիճանի ուրախություն է պատճառում:

Հատուկ կերպով շեշտեց, որ Եկեղեցու միությունը սոսկ գաղափար չէ, այլ կյանքով արտահայտված իրականություն. «Ժամանակները կփոխվեն և մենք պետք է գիտնանք այդ փոփոխություններին համապատասխան վերաբերում ցույց տալ: Ներկայումս մեր Մայր Հայրենիքում և հայ կյանքի մեջ առաջ եկած հիմնական փոփոխությունների լույսի տակ մեր Եկեղեցին պետք է գործի որպես մեկ Եկեղեցի, որպեսզի կարողանանք պատմական այս նոր շրջանը արժեցնել մեր Եկեղեցու և ժողովրդի զարգացման սիրույն»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԱՊԵՏԻ «ՔՈՆՎԵՆՇՆ ՍԵՆԹՐԻ» ՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան ժամը 19.00-ին «Քոնվենշընն Սենթրի» սրահում տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որին ներկա էր հազարից ավելի հայրենակարոտ հայերի մի մեծ բազմություն: Տեղի ունեցած ողջույնի և շնորհակալության խոսքերից հետո, ներկաներին իր հայրական հորդորներն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով ապրել հային վայել նկարագրով ու կեցվածքով, առանց փոքրիկ և չնչին հարցերի մեջ մխրճվելու և կորչելու: Ապա Նորին Սրբությունը որպես բացառիկ

գնահատանք Մայր Եկեղեցու բարերար պրն. Վահան Շամլյանին շնորհեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ շքանշանը. «Վահան Շամլյան, այս հին օրերու հայրենասեր պատանին, այսօր կպատվենք զինք հայրենասեր ընտրյալներու շքահույլին մեջ, որպես հայության հարազատ զավակներեն մեկը, որ իր շարունակական սրտաբուխ մատուցումներով եղած է Անթիլիասի շքանշանի արժանացած բարերարներեն և համանույն հայրենավառ զգացումներով կշարունակե իր նյութական մասնակցությունը բերել այսօր մեր Նորանկախ Հայրենիքի ու նոր օրերու Բեթղեհեմ Սուրբ Էջմիածնի կարիքներուն»: Որպես սրտաբուխ արտահայտություն իր եկեղեցանվեր զգացումներին, բարերարը 100.000 դոլարի մի իշխանական նվիրատվություն կատարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Այնուհետև այս բարձր պարգևատրման ու ընծայած պատվի համար Վեհափառ Հայրապետին շնորհակալության խոսք ասաց պրն. Վահան Շամլյանը՝ վստահեցնելով, որ իր կարողությունների ողջ սահմաններում պիտի սատար կանգնի այն դժվար և ծանր առաքելությանը, որ ստանձնել է Վեհափառ Հայրապետը:

Այս խանդավառ մթնոլորտում էլ ավարտվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրված ճաշկերույթը:

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԵԶՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ուրբաթ, փետրվարի 9-ի առավոտյան ժամը 09.45-ին, Նորին Սրբությունն այցելեց Ֆրեզնոյի քաղաքապետարան, ուր հանդիպում ունեցավ քաղաքապետի և նրա օգնականների հետ: Քաղաքապետ Ջիմ Փաթերսոնի հետ Վեհափառ Հայրապետին դիմավորեց նաև Ֆրեզնոյի գավառապետ Տիրան Խոլիկյանը: Այս հանդիպումը մտերմական ընտանեկան բնույթ ստացավ այն պատճառով, որ քաղաքապետը շատ մոտիկ հարաբերություններ էր մշակել հայ համայնքի զավակների հետ, և քաղաքապետարանի անձնակազմում, պաշտոնեության զանազան խավերում կային մեծ թվով հայեր:

Տեղի ունեցավ սրտաշարժ հյուրասիրություն, որի ընթացքում հուշանվերներ փոխանակվեցին Վեհափառ Հայրապետի և քաղաքապետի միջև:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՖՐԵԶՆՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ժամը 11.45-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Ֆրեզնոյի Պետական Համալսարան, որտեղ դասախոսական ընդարձակ հանդիսասրահում տեղի ունեցավ դասախոսական հավաքույթ:

Համալսարանի հայկական ամբիոնի վարիչ-տնօրեն դոկտ. Տիգրան Գույումջյանը հանգամանալից կերպով ներկայացրեց Վեհափառ

Հայրապետի անձն ու գործը: Նա երկար տարիներ անձամբ ճանաչած լինելով Վեհափառ Հայրապետին, նրա անձի մեջ ողջունեց ոչ միայն հոգևորական սպասավորը, այլ նաև գիտնական, ակադեմական մի անձնավորության, որը նվիրված է եղել Հայ Եկեղեցու աստվածաբանության ուսումնասիրության գործին:

Վեհափառ Հայրապետը շուրջ մեկ ժամ տևող իր դասախոսության ընթացքում խոսեց Հայ Եկեղեցու ներկա կացության մասին: Նախ վեր հանեց այն իրողությունը, որ Հայ Եկեղեցին և մշակույթը միշտ զարգացել են հաղորդակից լինելով ընդհանուր Եկեղեցու և համամարդկային մշակույթի հետ: Մեր պատմության այն դարերը, որոնք շփումի և հաղորդության դարեր են եղել, միշտ պսակվել են մեծամեծ իրագործումներով և ճանաչվել են որպես Ոսկե կամ Արծաթե դարեր և կամ Վերածնության շարժում անուններով:

Ե դարի մեր պատմիչներից դիպուկ մեջբերումներ կատարելով Վեհափառն ասաց, թե քրիստոնեական հավատքի դերն ու ազդեցությունը ստեղծագործականորեն հզոր է եղել մեր ժողովրդի պատմության մեջ՝ հատկապես շեշտելով Աստվածաշնչի և քրիստոնեական գրականության ու ծեսի ազդեցությունը մեր ժողովրդի կյանքում:

Գալով մերօրյա Հայաստանին, նա ասաց, թե չի կարելի, որ տարբեր ընթացք ունենա մեր այսօրվա կյանքը ազատ ու անկախ պետության ստեղծումով մեր Մայր Հայրենիքում. «Մեր Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն այսօր կոչվել են նոր դերակատարության, բայց նույն և ամփոփելի ուղղվածությամբ: Այսինքն՝ լիցքավորել ու կենսավորել հայության կյանքը քրիստոնեական հավատքին ներշնչանքով և Ավետարանի ուսուցումներով»:

Դասախոսության ավարտին նա սիրով պատասխանեց եղած հարցումներին: Դասախոսությանը ներկա էին համալսարանի պրոֆեսորներ, ուսանողներ և հայ համայնքի անդամներ:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՖՐԵԶՆՈՅԻ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն երեկոյան ժամը 18.30-ին Ֆրեզնոյի Ս. Պողոս եկեղեցում հանդիսավոր պատարագ մատուցվեց: Պատարագիչն էր Կանադայի Հայոց թեմի Առաջնորդ Հովնան արքեպս. Տերտերյանը:

Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը տվեց իր պատգամը, որի մեջ շեշտեց քրիստոնեական հավատքի ազնվացուցիչ դերը մարդկության և մասնավորաբար հայության կյանքում:

Իր քարոզի ավարտին նա հայտնեց, որ, ի գնահատություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սասուն վրդ. Զմրուխտյանի նվիրյալ ծառայության և ի պատասխան եկեղեցու հոգաբարձության և թեմական Առաջնորդ Վաչե Սրբազանի խնդրանքի, նրան շնորհում է Ծայրագույն Վարդապետական աստիճան, որը հատուկ արարողությամբ տրվելու է թեմի

Առաջնորդի կողմից: Հավատացյալները ջերմ ծափերով ողջունեցին Վեհափառ Հայրապետի այս հայտարարությունը:

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Փետրվարի 10-ի շաբաթ առավոտյան, ժամը 08.00-ին, Ս. Պողոս եկեղեցում Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստացան Կիրակնօրյա վարժարանի աշակերտությունը, Ֆրեզնոյի շրջանի ուսանողությունն ու երեխաները:

Նորին Սրբությունը հայրական քաղցր խոսքերով խանդավառեց նրանց և կոչ ուղղեց, որ գիտենան Աստծուց տրված շնորհները արծարծել, այսինքն՝ իրենց կյանքով, ուսումով և գործով արժեցնել:

***

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Հյուսիսային շրջան (Սան Ֆրանցիսկո), որը վերջին հանգրվանն էր Նորին Սրբության Արևմտյան թեմին տրված այցելության:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆ (ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ) ՓԵՏՐՎԱՐԻ 10-13

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Փետրվարի 10-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ժամանեց Սան Հոզեի օդանավակայան: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին Արիս եպս. Շիրվանյանը և շրջանի հոգևոր ու աշխարհիկ դասի ներկայացուցիչները: Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, Նորին Սրբությունը ներկաներին բաշխեց իր հայրական պատգամը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԱՊԵՏԸ ԿՈՒՊԵՐՏԻՆՈՅԻ ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵԱՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կեսօրին, ժամը 12.00-ին Հայոց Հայրապետը «Հրաշափառի» երգեցողությամբ մուտք գործեց Կուպերտինոյի Ս. Անդրեաս Հայաստանյայց Եկեղեցի, որտեղ ընդունվեց խուռն բազմությամբ և կատարվեց գոհաբանական աղոթք իր այցելության համար:

Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վազգեն քհն. Մովսիսյանը ջերմ խոսքերով ողջունեց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը և նրան հրավիրեց, որ իր հայրական խոսքն ուղղի հավատացյալ ժողովրդին:

Վեհափառը նախ հայտնեց իր շնորհակալությունները և ապա ասաց, որ «առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելում է Սան Հոզեի այս շրջան: Բարձրորեն գնահատեց հոգևոր հովվին, հոգաբարձուներին, որ այս եկեղեցու կառուցումով և նրա

հոգևոր սպասավորությամբ մեծ բարիք են ընծայել մեր ժողովրդի կրոնական և ազգային կյանքին:

Վեհափառը իր հատուկ գնահատանքը հայտնեց դպրաց դասին, ՀՄԸՄ-ի սկաուտներին և նոր սերնդի անդամներին, որոնք եռանդուն վիճակի մեջ են պահում հայ համայնքի կյանքը այդ շրջանում:

Ապա հանգամանորեն ներկայացրեց Մայր Հայրենիքի կացությունը և Մայր Աթոռի դերակատարության բարերար ազդեցությունը հայրենաշինության շարժումին, որը ծավալվել է անկախության վերգտնումից հետո:

***

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ-ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցական արարողությունից անմիջապես հետո Վեհափառն իր շքախմբով առաջնորդվեց եկեղեցու ներքնահարկի ընդարձակ սրահ, որտեղ ճաշկերույթ, ընդունելություն տեղի ունեցավ ի պատիվ Նորին Սրբության:

Սույն հավաքույթը եղավ նաև հանդիպում երիտասարդ սերնդի հետ: Երիտասարդներից շատերը հարցումներ ուղղեցին Վեհափառ Հայրապետին: Նա բոլորին գոհացում տվեց իր իմաստուն պատասխաններով:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

Երեկոյան ժամը 18.00-ին Նորին Ս. Օծությունը «Հրաշափառի» ուղեկցությամբ մուտք գործեց Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես եկեղեցի:

Տեղի ունեցավ գոհաբանական աղոթք, որից հետո եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Արիս եպս. Շիրվանյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Սուրբ Հովհաննես եկեղեցու համայնքը և նրա պատմությունը: Ապա, ջերմորեն ողջունելով Վեհափառի այցելությունը, Նորին Սրբությանը հրավիրեց տալու իր պատգամը:

Վեհափառը, խորապես ազդված ժողովրդի հոծ բազմությունից, նախ փառք տվեց Աստծուն, որ իրեն հնարավորություն ընձեռեց անձամբ ճանաչելու Սուրբ Հովհաննես եկեղեցու հավատացյալներին և իրազեկ դառնալու նրանց սերտ կապվածությանը իրենց Մայր Եկեղեցու հետ:

Նա ասաց, որ ներկա ժամանակները մեր ժողովրդի պատմության մեջ կարևորագույն մի շրջան են բացել, որի առաջ ամեն մի հայ սիրո և նվիրումի զգացումով միության և ամբողջականության գաղափարականով պետք է արտահայտի իր սերը և նվիրաբերումը հանդեպ իր Մայր Եկեղեցու և իր Մայր Հայրենիքի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը նախագահեց Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց Կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված հավաքին, որին մասնակցելու էին եկել Սան Ֆրանցիսկոյի բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները, համալսարանական ուսանողները, Կիրակնօրյա վարժարանի աշակերտությունը և շրջանի ողջ երիտասարդությունը: Հավաքը տեղի ունեցավ եկեղեցուն կից սրահում: Երիտասարդության կողմից ներկայացվեց հատուկ հայտագիր: Այնուհետև բազմաբնույթ հարցեր ուղղվեցին Հայոց Հայրապետին, որոնք լրջորեն հուզում են այսօրվա երիտասարդությանը:

Նորին Սրբությունը, հանդես գալով ներածական խոսքով, լայնորեն և մանրամասնորեն ներկայացրեց այսօրվա պատմական ժամանակաշրջանը իր պահանջներով և հրամայականներով, որում մեծապես կարևորեց Հայ Եկեղեցու դերն ու ստանձնած առաքելությունը, որը կարող է իմաստավորվել նոր սերնդի՝ երիտասարդության եռանդուն և անմնացորդ մասնակցությամբ ու նվիրումով: Ապա Վեհափառ Հայրապետն իրեն հատուկ իմաստությամբ և բազմակողմանի քննությամբ պատասխանեց և գոհացում տվեց բոլոր հարցադրումներին:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՀՈՒՆԱՑ ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Փետրվարի 11-ին, *կիրակի օրը, հետմիջօրեի ժամը 13.30-ին, Օգլնտի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Համբարձման Մայր տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Ներկա էին շուրջ 1000 հավատացյալներ, որոնք ժամանել էին շրջանի Սուրբ Վարդան, Սուրբ Գրիգոր, Սուրբ Հովհաննես, Սուրբ Հակոբ, Սուրբ Անդրեաս եկեղեցիներից: Ներկա էին նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Պատարագիչն էր Արևմտյան թեմի Առաջնորդ Վաչե արքեպիսկոպոսը:*

Պատարագի ընթացքում եկեղեցու վանահայր Թովմաս Փարիսը բարիգալստյան ջերմ խոսքերով ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Այնուհետև ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ նախ շնորհակալություն հայտնելով եկեղեցու վանահորը իր անկեղծ խոսքերի համար, որոնց թանձրացյալ արտահայտությունն է այս Տաճարի պատրաստակամ տրամադրումը Սուրբ Պատարագի մատուցման և հայության մի փոքրիկ մասի մեկտեղվելու և իրենց Հայրապետի օրհնությունը ստանալու համար: Ապա Ամենայն Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց քույր Եկեղեցիների

ներկայացուցիչներին, որոնք եկել էին աղոթակից դառնալու Հայոց Հայրապետին:

Ապա, խոսքն ուղղելով հայ հավատացյալներին, հորդորեց հավաքվելու Մայր Եկեղեցու և Մայր Հայրենիքի շուրջը՝ առանց շահադիտական նպատակների, այլ իրական և անշահախնդիր գործելակերպով, որից առավել փայլ կստանան և կծաղկեն այս երկու սրբությունները՝ մեր ինքնության և հավերժության ամենամեծ օրրանները:

Սուրբ Պատարագի մատուցումից հետո Վեհափառը հանդիպեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ, որը անցավ կիսապաշտոնական մթնոլորտում, որովհետև նրանցից շատերի հետ նա տարիների բարեկամություն ուներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հավարտ Ս. Պատարագի, երեկոյան ժամը 17.30-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, պաշտոնական ճաշկերույթ տրվեց Հունաց Ս. Համբարձման Մայր տաճարի գեղեցիկ սրահում, որին ներկա էին մոտ 530 հոգի:

Ամենայն Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ Վաչե, Արիս և Հովնան սրբազանների, և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ՝ Ամերիկայի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Արևելյան հատվածի վիկար Մելեթիոս Վերեր վարդապետի, Ամերիկայում Կաթոլիկ Եկեղեցու միջեկեղեցական հարցերի պատասխանատու Ջերրի Օ Ռուրկի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Ուահբի, մուտք գործեց սրահ, որտեղ ծափողջույններով դիմավորվեց ներկաների կողմից: ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության պետական հիմների կատարումից հետո, ներկայացվեց նաև հատուկ գեղարվեստական հայտագիր:

Այնուհետև Առաջնորդ Վաչե սրբազանը հանգամանորեն ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին՝ հրավիրելով նրան տալու իր հայրական հորդորներն ու օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը նախ, ի նշան գնահատանքի, Հայ Եկեղեցու բարձրագույն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրեց համայնքի բարերարներից Փոլ Վարնումին:

Ճաշկերույթի վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, որում մասնավորաբար շեշտեց պատմական պահի կարևորությունը, որի ճիշտ գնահատումով կկարողանանք կերտել պայծառ և լուսավոր ապագա: Շեշտեց, որ հարցերին վերաբերվել իրատեսականորեն և առարկայական կերպով և ոչ թե վերացական ու մանր հաշիվներով փորձել մոտենալ դրանց: Այսօր Հայոց Եկեղեցին իր անկախ Հայրենիքի հետ միասին վերարթնացման և վերաշխուժացման շրջան է ապրում և կարիքն ունի իր բոլոր զավակների աջակցությանն

ու մասնակցությանը և հետևաբար անհրաժեշտ է նրան բոլոր առումներով թիկունք և զորավիգ կանգնել: Այս երկու սրբությունները անհատներին չեն պատկանում, այլ ամբողջ ժողովրդին հավաքաբար, և այս հավաքականության մեջ ամեն մեկը պարտավոր է իր կարելին բերել նրանց վերածաղկման ու կենսավորման գործում:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՌՈՒԶՅԱՆ-ՋԱՔԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

***Փետրվարի 12-ին** երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Գռուզյան-Ջաքարյան Վասպուրական հայկական վարժարան: Այստեղ դպրոցի աշակերտները մեծ ցնծությամբ դիմավորեցին իրենց Հայրիկին: Ներկայացվեց շատ գեղեցիկ մի ծրագիր՝ հագեցած բանաստեղծություններով և երգերով: Ապա Նորին Սուրբ Օծությունը, հուզված երեխաների խանդավառ ներկայությունից, իր հայրական խոսքն ուղղեց նրանց՝ պատգամելով ապրել իրենց հայրերի հավատքով: Նա ուրախությամբ նշեց այն փաստը, որ այստեղ հայ կյանքը, ուր որ ինքը գնաց, տեսավ աշխույժ և գործունյա ու պատգամեց ապրել նույն ոգևորությամբ ու եռանդով՝ ի շահ մեր Եկեղեցու և Հայրենիքի վաղվա օրվա պայծառության:*

Վերջում Վեհափառ Հայրապետը «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրեց դպրոցի բարերար պարոն Գրիգոր Գռուզյանին՝ իր կատարած հայրենանվեր գործի համար:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ժամը 11.00-ին Նորին Սրբությունն այցելեց Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետարան, որտեղ հանդիպեց քաղաքապետ Ուիլի Բրաունի և պաշտոնական այլ անձանց հետ:

Տեղի ունեցած ջերմ ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունները հայտնեց քաղաքապետին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար: Ապա Նորին Սրբությունը նկարագրեց Հայ Եկեղեցու ներկա կացությունը, թե այն համայնատիրական տարիներին եղել է հալածական վիճակում և այսօր Հայաստանի անկախությամբ մեր Սուրբ Եկեղեցին նոր պայմանների մեջ է գտնվում և իր ուժերի գերլարումով լծվել է ոչ միայն Մայր Հայրենիքի սահմաններում, այլև նրանից դուրս ապրող իր զավակներին Աստուծո խոսքով հովվելու և մխիթարելու առաքելությանը:

ՄԱՐԿԵՐՈՒՑԹ-ՀԱՆԴԻՊՈՒՄ

Կեսօրվա ժամը 13.00-ին Նորին Սուրբ Օծությունը Սիրո սեղանի շուրջ հանդիպում ունեցավ հոգևորականների, Մխական խորհուրդների, Եկեղեցիների վարչական մարմինների և բարերարների հետ:

Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց նրանց կողմից թեմից ներս տարված աշխատանքները, կոչ ուղղեց նրանց՝ առավել ջանդրությամբ գործել Մայր Եկեղեցուն ի նպաստ, որպեսզի որպես կատարյալ ազգ և Եկեղեցի կարողանանք ներկայանալ Աստծուն և մարդկությանը: Մեր ժամանակները դժվար են և այդ դժվարության հաղթահարման գիտակցությունն է, որ մեզ պետք է մղի միասնական կերպով և ամբողջական ներդրումով ապրել և գործել Մայր Հայրենիքի և Եկեղեցու համար:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Երեկոյան ժամը 17.00-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ մուտք գործեց Սան Ֆրանցիսկոյի Կիլիկյան Աթոռի հովանավորությունը վայելող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Խուռներամ բազմությունը ցնծությամբ դիմավորեց իր Հայրապետին, որին ճանաչել էր երկար տարիներ:

Եկեղեցու հովվի բարիգալստյան ջերմ և սրտառուչ խոսքից հետո, Ամենայն Հայոց Հայրապետը տվեց իր հայրական պատգամը: Նա նախ գոհություն և փառք հայտնեց Ամենաբարձրյալն Աստծուն, որ առիթ ընծայեց հանդիպելու իր հոտի ժողովրդի հետ հայկական այս գեղեցիկ տաճարում: Ապա, խոսքն ուղղելով հավաքված բազմությանը, Նորին Սրբությունը շեշտեց մեկ Եկեղեցի և մեկ ժողովուրդ ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը չունի երկու Եկեղեցի, այլ մեկ ամբողջական Եկեղեցի: Մենք պարզապես պարտավոր ենք ունկնդիր լինելու ժամանակի ձայնին, որովհետև ժամանակները առաջ են գնում և այլ բան թելադրում մեզ, և մենք չենք կարող ետ մնալ նրանից: Այսօր նոր պայմաններում է հայտնվել Մայր Հայրենիքը, և այդ դաշտի վրա նոր դերակատարություն է ստանձնել նաև Մայր Եկեղեցին, հետևաբար մեր անձնական նեղ հաշիվներով ու հարցերով չփորձենք ձախողել նրանց առաջընթացը, այլ զորավիգ լինենք նրանց:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՕԳԼՆՏԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նույն օրը երեկոյան ժամը 20.00-ին, Վեհափառ Հայրապետը, հավատացյալների հոծ բազմության ուղեկցությամբ, «Հրաշափառ»-ի երգեցողությամբ, մուտք գործեց Օգլնտի Ս. Վարդան եկեղեցի: Սա Վեհափառ Հայրապետի Արևմտյան թեմում գտնվելու վերջին հանգրվանն ու հանդիպումն էր հայ հավատացյալների հետ:

Կատարված գոհաբանական աղոթքից հետո, բարիգալստյան խոսք ասաց եկեղեցու հովիվ Մեսրոպ քահանա Սարաֆյանը: Ապա Վեհափառ Հայրապետը մեծ ոգևորությամբ, մի տեսակ որպես հրաժեշտի խոսք, պատգամեց ապրել իրենց հայրերի հավատքով ու սիրով, նրանց ստեղծագործ կամքով: Ոչ մի բան չկարողացավ ընկճել և

հուսահատեցնել նրանց և առավել ևս չի կարող ընկճել ու հուսահատեցնել նաև մեզ, որովհետև մենք տեսանք Հայրենիքի ազատագրությունը, Մայր Եկեղեցու վերստին աշխուժացումը: Ժամանակները մեզ են սպասում, և մենք պիտի լինենք նրանց ճարտարապետները:

Այնուհետև հանդիպում տեղի ունեցավ նաև շրջանի երիտասարդության հետ, որի ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց նրանց հուզող բոլոր հարցերին:

ՄԵԿՆՈՒՄ

Փետրվարի 13-ին երեքշաբթի օրը, Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կալիֆորնիայից մեկնեց Ամերիկայի Արևելյան թեմ՝ Ֆլորիդա Նահանգ:

ԺԱՄԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետը փետրվարի 14-ին ժամանեց Ֆլորիդա և պատշաճ կերպով ընդունվեց Հմայակ եպիսկոպոս Հինդոյանի, Օշական վրդ. Գյուլգյուլյանի և Զավեն ա. քհն. Արզումանյանի կողմից, որոնց ընկերակցում էին ընդունելության հանձնախմբի անդամները՝ գլխավորությամբ ատենապետ Խաչատուր Ղազարյանի, և համայնքի ներկայացուցիչները:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետն օրհնեց ավանդական աղն ու հացը և առաջնորդվեց ընդունելության դահլիճ, ուր բարիգալստյան խոսք արտասանեց դոկտ. Զավեն ա. քհն. Արզումանյանը՝ բովանդակ Ֆլորիդայի հայ համայնքի անունից:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄԱՑԱՄԻ

Փետրվարի 16-ին, Վեհափառ Հայրապետը ժամանեց Մայամի, որտեղ հաճելի անակնկալ էր սպասվում Ամենայն Հայոց Հովվապետին: Ժամանելով Մայամի; Նորին Սրբությունը այցելեց Հայոց Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, որը առաջին եկեղեցին է Ֆլորիդայում՝ հիմնադրված 1953 թվականին:

Հաջորդ օրը, փետրվարի 17-ին, Հայոց Հայրապետին վերապահված էր նախագահելու և օրհնելու այն հողը, որտեղ Աստուծո նոր Տուն և հայի ինքնարտահայտման վկայություն պիտի կառուցվեր: Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Խաժակ և Հմայակ Սրբազանները, Մայամիի Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովիվ Օշական վարդապետ Գյուլգյուլյանը, գավազանակիր Արտակ աբեղա Տիգրանյանը, Սուրբ Ներսես դպրեվանքի ուսանողությունը և ուրիշներ:

Տերունական աղոթքից և կատարված հողի օրհնության արարո-

ղությունից հետո, ողջույնի և շնորհակալության խոսք ասաց Առաջնորդ Խաժակ Սրբազանը՝ շեշտելով պահի կարևորությունն ու հոգևոր ուրախությունը ամերիկաբնակ հայորդիների համար:

Ապա Վեհափառ Հայրապետը մեծ ներշնչումով և ապրումով տվեց իր պատգամը՝ ուժեղ կերպով շեշտելով այն գաղափարը, որ մենք նյութական եկեղեցին կառուցելու միջից պարտավոր ենք վերաշինել հոգևոր Եկեղեցին՝ Աստուծո, Քրիստոսի, Սուրբ Ավետարանի և մեր հայրերի Ավանդությունների ճանապարհով:

Նորին Սրբությունը նշեց, որ ինքը առաջին անգամն է լինում Ֆլորիդայում և Մայամիում, ու հատկանշական է, որ այն պսակվեց և նշանավորվեց այսպիսի սրբազան արարողությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈԿԱ ՌԱՏՈՆՈՒՄ

ՍՈՒՐԲ ԴԱՎԻԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 18-ին, Բուն Բարեկենդանին, Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Բոկա Ռատոն, որտեղ տեղի Սուրբ Դավիթ հայ եկեղեցում մասնակցեց Սուրբ Պատարագի և իր պատգամը տվեց հավաքված ավելի քան 1200-ի հասնող հայերին:

Պատարագը մատուցեց Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, որին սպասարկում էին Օշական վարդապետը և Զավեն ավագ քահանան:

«Հայր Մեր»-ից առաջ խորան բարձրացավ Հայոց Հայրապետը և տվեց իր հոգեշունչ քարոզը Մեծ Պահքի մասին՝ խոսելով նաև

Նորանկախ Հայաստանի և Մայր Աթոռի նոր ուղիներով ընթանալու և միացյալ ճիգերով Հայրենիքի ու Սփյուռքի իրար լրացնելու հրամայականների մասին:

Սուրբ Պատարագից անմիջապես հետո, թափորը «Հայրապետական Մաղթերգի» երգեցողությամբ Վեհափառին առաջնորդեց դեպի դուրս, ուր մեկ այլ սքանչելի արարողություն էր վերապահված նրան:

Այստեղ Նորին Սրբությունը կատարեց Ալեք և Մարի Մանուկյան դպրոցի շենքի հիմնարկեքը՝ ի ներկայություն տիար Ալեք Մանուկյանի, որ, հակառակ իր 95-ամյա տարիքին, մեկ օր առաջ հասել էր Բոկա Ռոտա՝ ներկա լինելու այս իրադարձությանը:

Արարողությունից հետո Զավեն ա. քահանան անակնկալ կերպով հրավիրեց իրավաբան Արսեն Խանամիրյանին, որը, Ֆիլադելֆիայից գալով, ի նպաստ կառուցվելիք շինության 50.000 դոլարի փոխգիր հանձնեց:

Հողի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետին շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց Սուրբ Դավիթ եկեղեցու հովիվ Զավեն քհն. Արզումանյանը՝ նշելով, որ Վեհափառ Հայրապետի այցելությունը մեծ պատիվ է իրենց համար, որ գործելու նոր լիցք ու կենդանություն պիտի հաղորդի:

Այնուհետև հավաքվածներին իր օրհնությունն ու պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով, որ եկեղեցին և դպրոցը հայ ժողովրդի կյանքում մշտապես անբաժան ու միաձուլված են եղել, և այդ դարերի կնիքն էր, որ այսօր մի օտար երկրի հողում թանձրանում և մարմնավորվում է որպես կենդանի և շոշափելի վկայություն մեր հայրերի տեսիլքների:

ԱՋԱՀԱՄԲՈՒՑՐ

Կեսօրվա ճաշից հետո ներկա հոծ բազմությունը կրկին հավաքվեց եկեղեցու մոտ, Վեհափառ հայրապետի հատուկ տաղավարի շուրջ, ուր աշակերտները երգեցին ու ստացան Հայրապետի կողմից բաշխված խաչերն ու օրհնությունները: Աջահամբույրի համար բոլորը առանձին-առանձին մոտեցան Վեհափառին, որից հետո Տեր Զավենը մի անակնկալ ևս հայտնեց՝ հրավիրելով արվեստագետ Հակոբ Գասպարյանին, որ իր մեծ ստեղծագործությունը «Կոմիտաս Վարդապետը խաչքարերի մեջ և քառագագաթ Արագածի ստորոտը» հսկա պաստառը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, նվիրեց Սուրբ Դավիթ եկեղեցուն:

ՈՂՋԵՐԹԻ ՄԱՇԿԵՐՈՒՑԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան 400 ներկաներ ճաշկերույթով պատվեցին Ամենայն Հայոց

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԲՈՒՏՐՈՍ ԲՈՒՏՐՈՍ ՂԱԼԻԻ ՀԵՏ

Հայրապետին: Ներկա էին Խաժակ և Հմայակ Սրբազանները, Հույն Ուղափառ Եկեղեցու վանահայրը, հայ հոգևորականներ և համայնքի ներկայացուցիչներ: Հանդիսավար Խաչատուր Ղազարյանը ներկայացրեց պատվո հյուրերին, որոնց մեջ էին տիար Ալեք Մանուկյանը, տիկ. Հելեն Մարտիկյանը, Արմեն և Դիանա Մելքոնյանները, Արաքսի Ղազարյանը, Գևորգ և Սիրվարդ Հովնանյանը տեր և տիկ. Կաղլ Բազարյանը և այլոք:

Այնուհետև Առաջնորդ Սրբազանը ներկայացրեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ հայտնելով թեմի շնորհակալությունը իր տված հովվապետական անդրանիկ այցելության համար ու բարի երթ մաղթեց Նորին Սրբությանը:

Ապա Վեհափառ Հայրապետը տվեց իր հայրական պատգամը՝ շեշտելով հայ ժողովրդի ներկան ու անմիջական ապագան Հայաստանի Հանրապետության գծած նոր ուղուն համընթաց դարձնելուն և Սուրբ Էջմիածնի ու Հայաստանյայց Եկեղեցու դիմագրավելիք նորանոր իրողությունները, որոնք կյանքն է առաջադրում: Վեհափառը բոլորին թելադրեց՝ առաջանալ աներեր եռանդով, անխառն հույսով, անխախտ հավատքով ու անվեհեր քայլերով դեպի միացյալ ժողովրդի ու պայծառ ապագայի լուսատու նպատակը:

Իր խոսքում Նորին Սրբությունը շնորհակալությամբ հայտարարեց, որ իրավաբան Արսեն Խանամիրյանը իր խնամքին հանձնված Պոլ Կարապետյանի կտակից 200.000 դոլար է հատկացրել Սուրբ Էջմիածնին: Հայրապետը ծանուցեց նաև տեր և տիկ. Սարգիս Սուլթանյանի նվիրաբերած 50.000 դոլարի մասին, որ հատկացվել է Հայաստանի վանքերի վերակառուցմանը:

Այսպիսի ջերմ և անկեղծ մթնոլորտում էլ ավարտվեց այս սրտամոտ հանդիպումը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԲՈՒՏՐՈՍ ՂԱԼԻԻ ՀԵՏ

Փետրվարի 20-ին, Միացյալ Նահանգներ Հայրապետական այցելությունից հետո և Սուրբ Էջմիածին վերադառնալուց առաջ, Ամենայն Հայոց Հայրապետը այցելեց Միացյալ Ազգերի Կազմակերպության կենտրոնատեղի, որտեղ հանդիպեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի հետ:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին ՄԱԿ-ի մոտ Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանը, Ամերիկայի զույգ թեմերի և Կանադայի Հայոց թեմի Առաջնորդներ Վաչե, Խաժակ և Հովնան Սրբազանները:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց հայ ժողովրդին և

Հայաստանի Հանրապետությանը ՄԱԿ-ի զորակցության համար՝ շոշափելով Անդրկովկասի տարածաշրջանի խաղաղության, հատկապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ լուծման հարցերը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, դրականորեն գնահատելով Հայոց Հոգևոր Առաջնորդի այցելությունը ԱՄՆ և ՄԱԿ-ի կենտրոնատեղի, խոսեց Արցախյան խնդրի մասին՝ ասելով, որ ինքը ուշիուշով հետևում է Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման ուղղությամբ Եվրոպական և այլ կազմակերպությունների, լիազորված պետական այրերի և Ռուսաստանի Դաշնության ձեռնարկած քայլերին. «Մենք պիտի ջանանք մոտ ապագայում խաղաղ ճանապարհով լուծել այդ բարդ խնդիրը», վերջում ավելացրեց գլխավոր քարտուղարը:

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը շրջեց կառույցի ներսում և մեծ հուզումով և ներքին ուրախությամբ առիթ ունեցավ

նստելու նաև Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող ժողովասեղանի առջև: Կենտրոնատեղիում, ինչպես Վեհափառն ասաց, «հայության դարավոր երազանքը մարմին էր զգեցել: Հայաստանի անկախությամբ Հայոց Պետությունը մուտք էր գործել ընդհանուր ազգերի մեծ ընտանիք: Եվ այսօր այդ ընտանիքի պաշտոնատեղիում ծածանվում է հայության պատվի և ինքնության արտահայտության վկայագիր սրբազան Եռագույնը»: ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության լիազոր և մշտական ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանը պաշտոնական ճաշկերույթ տվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՑՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հետ վերջին և շատ կարևոր հանդիպմամբ էլ ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառի անդրանիկ հովվապետական այցելությունը ԱՄՆ և Կանադա, որը սահմանափակված չէր միայն հայ հավատացյալներին այցելությամբ, այլ տեղի ունեցան բազմաթիվ և բազմազան հանդիպումներ այդ երկրների եկեղեցական և պետական-պաշտոնական ամենաբարձր մակարդակների և ներկայացուցիչների հետ, որով լավագույնս ներկայացվեց Մայր Հայաստանն ու Եկեղեցին հայոց օտար պետությունների և Եկեղեցիների:

1996 թվականի փետրվարի 23-ին, ավարտելով իր շրջագայությունը, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ՝ նոր լիցք ու նոր տեսիլքներ բերելով իր հետ Հայրենաբնակ իր ժողովրդին: